

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

371



3K13
4-68

85



26 JUN 2013

14 NOV 2009

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՅՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

3K13

4-68

Կ.

87

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ ՅԵՎ ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ԲԵ ՀՅ 005

1008
38367

2024036

2321

Հ. Ա. Խ. Դ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ


1924



ԿՈՍՄԻԿԻԱՑԱՆ ՄԱՆԻՓԵՍՏ
 Թարգմ. քնազրից — Պ. ՄԱԿԻՆՑՑԱՆԻ
 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ յեվ պարզաբանումներ
 թարգմ. — Լ. ԱՐԵՍՑԱՆԻ
Խմբագր. — ԴՐ. ՄԻՄՈՆՑԱՆԻ



ԳՐԻԳՐԻԽ ԵՆԳԵԼՍ



ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ընկերները ինդիքել են ինձ գրել նախաբան իմ ծանոթություններով ուղեկցված ռկոմունիստական «Մանիքեստի» հրատարակության առթիվ։ Այդ ինդիքը ինձ գցում ե դժվարին դրության մեջ, վորովհետեւ յես քիչ եմ ծանոթ հայ բանվորական շարժմանը։ Գրա տեղ գերադասում եմ մեջ բերել Ենգելսի մի հին նամակը, վորի մեջ խոսվում ե Հայաստանի մասին։ Զգիտեմ ով եր այն սոցիալիստը, վոր ուղարկել եր Ենգելսին «Մանիքեստի» թարգմանությունը, բայց անտարակույս Ենգելսը հիմք ուներ չվատահելու նրան՝ լավ իմանալով, թե նացիոնալ—սոցիալիստները ազգային ազատագրման նպատակների համար վորքան մեծ հեշտությամբ պատրաստեն ոգտագործել ամեն մի ծրագիր՝ հարմարեցնելով այն իրենց կարիքներին։ Այլ բան ե Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, վոր իր ծագման որից հանդիսանում ե միջազգային կոմունիստական կուսակցության մի մասը։ Ահա թե ինչ ե գրում Ենգելսը 1894 թ. նոյեմբ. 23-ի նամակում։

«Թ Ա Ն Կ Ա Գ Ի Ն Ը Ն Կ Ե Ր !

Յես ձեզ չափազանց չսորհակալ եմ «Գիտական սոցիալիզմի զարգացումը» վերնագիր կըող բրոշյուրի հայկական թարգմանության, ապա

«Կոմունիստական Մանիֆեստի» թարգմանության համար: Ցավոք սրտի յես անկարող եմ կատարել ձեր խնդիրը և զբել մի քանի խոսք «Մանիֆեստի» ձեր թարգմանության առթիվ: Յես չեմ կարող լավ զբել այն, ինչ հրատարակվելու ե մի լեզվով, վոր չեմ հասկանում: Յեթե յես համաձայնվեմ ձեր խնդրի հետ, ապա չեմ. կարող մերժել ուրիշներին, և այն ժամանակ կարող ե պատճեն, վոր իմ խոսքերը անդիտական, գորեն, գուցե և գիտակցաբար խեղաթյուրվեն և յես խմանամ այդ մասին միայն շատ տարիներ անց, կամ բոլորովին ել չիմանում:

Բացի այդ վորքան յես շնորհակալ եմ ձեր հայերի դրության մասին զրած հետաքրքրական ուրվագծից, այսուամենայնիվ յես ինձ իրավագործ չեմ համարում իմ կարծիքը հայտնել այն գործերի մասին, վոր անձամբ չեմ կարողացել ուսումնասիրել, մանավանդ վոր խոսքը վերաբերում ե մի ճնշված ժողովրդի, վոր դժբախտություն ունի գտնվել ոռւսական դեսպոտիզմի Սցիլայի և Քարիբայի ճիրաններում, ըստ վորում ոռւսական դեսպոտիզմը չարաշհում ե ազտարարի դերում, իսկ ստրուկ ոռւս մամուլը աշխատում ե շահագործել հոգուանվաճողական ցարիզմի համակրանքի զգացման ամեն մի արտահայտություն դէպի հայկական ազատազրումը:

Իմ անկեղծ կարծիքը, վորպես մասնավոր մարդու, այն ե, վոր Հայաստանի ազատազրումը տաճիկներից և ոռւսներից հնարավոր կլինի այն

պահուն, յերբ խորտակվի ոռւսական ցարիզմը: Լավագույն բաղձանքներով ձեր ժողովրդին Զեղ անձնվեր՝ Ֆ. Ենգելս»:

Յերբ Մարքսի ընկերը գրում եր այս տողերը, Արդուլ-Համիդի կառավարությունը նախապարաստում եր հայերի մասայական կոտորածը, գրգուելով քրդերին նրանց դեմ: 1895 թվին այդ կոտորածի զոհերը տաճնյակ հազարներով եյին հաշվում: Ավելի լավ չեր պահում ինքն իրեն արյունուշտ Նիկոլայի կառավարությունը: Տաճկահայերին ցույց տալու նպատակով, թե վորքան անհիմ են ոռւս ցարի վրա դրվող հույսերը, նրա կովկասյան սատրապները հայերին հալածել են սկսում և գրգում են հայերին ու թուրքերին իրար գեմ:

Այդպես քսան տարվա ընթացքում հայ գյուղացիներն ու բանվորները սեփական փորձով համոզվում եյին, վոր քանի իշխում են կալվածատերերն ու բուրժուազիան, նրանք դատապարտված են անհուսալի քաղաքական և տնտեսական ստրկության: Իմպերիալիստական պատերազմը, վոր ել ավելի բազմաթիվ զոհեր խլեց հայ ժողովուրդից, ցույց տվեց, վոր վոչ մի հույս չկա և Անտանտի միջամտությունից ու միակ յելքը Խորհրդային Հայաստանի միությունն ե Խորհրդային Ռուսաստանի հետ, վոր միանդամ ընդմիշտ վերջ տվեց ցարիզմին և հին տիրապետող դասակարգերին:

Հայ բանվորները, վոր արդեն մտնում են

կոմոնիստական կուսակցության մեջ, պետք է գործ գնեն իրենց բոլոր ջանքերը, քաշելու դեպի նրա շարքերը իրենց այն ընկերներին, վորոնք չեն գիտակցում դեռ, վոր միջազգային կապիտալի և գիշատիչ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում լավագույն հուսատու հենարանը միջազգային կոմոնիստական կուսակցությունն է, վոր այլազան ազգերի պրոլետարների—ոռուսների, վրացիների, թուրքերի լիակատար համերաշխությունը միայն կարող է խանգարել կալվածատերերին ու կապիտալիստներին գրգռել իրար դեմ զանազան ժողովուրդների աշխատավոր տարրերը:

Յեվ բանվոր զանգվածների լուսավորության գործում լավագույն ուղեցույցն է հանդիսանում «կոմոնիստական Մանիֆեստը»։ Նրա «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» նշանաբանով հայ կոմոնիստները կարող կլինեն ամրապնդել իրենց կազմակերպությունը և ապացուցել գյուղացիներին, վոր ազատել կալվածատերերի ու բուրժուազիայի շահագործումից կարող են միայն կոմոնիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը։

Դ. ՌՅԱԶԱՆՈՎ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր կուսակցությունը՝ Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը կոչվում ե կոմունիստական, վորովհետեւ նրա ծրագրի, նպատակների ու խնդիրների հիմքն ե կազմում «Կոմունիստական Մանիֆեստում»:

Այդ Մանիֆեստը—նպատակների և խընդիրների ազդարարումը—հրատարակեց 1848 թ. փետրվարի յերկորդ կիսին «Կոմունիստների Միությունը», վոր իրավացիորեն կարող ե կոչվել արդի միջազգային կոմունիստական կուսակցության վորը: Մանիֆեստը գրել են յերեսականական կոմունիստներ՝ կ. Մարքս և Ֆ. Ենգելս:

Այսպիսով «Կոմունիստական Մանիֆեստի» և «Կոմունիստների Միության» պատմությունը միաժամանակ թե մեր կուսակցության ծրագրի և թե կոմիստերնի պատմությունն ե: Այդ իսկ պատճառով մենք անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել ընկերներին կոմունիստների Միության պատմության հետ: Տեսնենք ուրեմն, թե ինչպես ե առաջ յեկել այդ Միությունը և ով ե յեղել նրա հիմնադիրը:

Կոմունիստների Միության անդամների մեծ մասը գերմանացի եր և բանվոր, ուստի անհրաժեշտ ե դասնալ դեպի Գերմանիան: Մինչեւ 1830 թիվը Գերմանիայում գրե-

թե անբաժան միահեծան իշխանություն եր տիրում. այդ յերկիրը բաժանված եր մի քանի տասնյակ պետությունների, վորոնցից ամենախոշորը Պրուսիան եր: Յերբ Գերմանիան ազատվեց Նապոլեոնի լծից (1815 թ.), գերմանական թագավորները չկատարեցին մինչ այդ ժողովրդին խոստացած զիջումները և ամեն ինչ թողին նախկին դրության մեջ: Ի պատասխան թագավորների վոտնձգությունների, ուսանող յերիտասարդությունը սկսեց գաղտնի կազմակերպություններ սարքել և ձեռնարկել թագավորական իշխանության ատելի սպասավորների սպանության: Թագավորները, հենված ուսական ցարի և ավստրիական կայսրի ոգնութեան վրա, այդ շարժմանը պատասխանեցին անխնա հալածանքով, վորին շունչ տվողը ավստրիական առաջին մինիստր Մ ե տ ե ր ն ի խ ն եր:

Հալածանքի հաջողությանը նպաստում եր և հարեվան Ֆրանսիայի դրությունը: Այդ ժամանակ Ֆրանսիայում, վոր 18-րդ դարի վերջին ջախջախիչ հարված հասցըրեց հին կարգերին, աղատագրական ամեն տեսակի շարժում կարծես ճնշված եր արդեն: Նապոլեոնի տապալումից հետո վերականգնվեց նախկին Բուրբոնների իշխանությունը, վորոնք վոչինչ չեյին մոռացել ու վոչինչ նոր բան սովորել: Բուրբոնների տիրապետությունը տեվեց 1815 թ. մինչեւ 1830 թ.: Այդ ժամանակաշրջանը սովորաբար կոչվում ե ու եստավրացիա այսի,

4036 / 1008
38662



ՀԱՅ ՀԱՅ ԱՎԻ ՓՐԵՇԱՐ
ՀԱՅ ԱՎԻ ԲԻՆԱ ՇԵՐ
ՀԱՅ ՀԱՅ ՀԱՅ ՀԱՅ
ՀԱՅ ՀԱՅ ՀԱՅ ՀԱՅ

Թյուլերի առաջնորդ 29 նույնի 1830 թ.

այսինքն՝ հին կարգերի, թագավորական հին տան վերականգնման և պոլի (ժամանակաշրջան):

Թագավորի հետ վերադարձած եմիզրանտները աշխատում եյին իրապես վերականգնել հին կարգերը, սակայն ամբողջապես այդ չեր հաջողվում: Նրանք զրկեցին քաղաքական իրավունքներից վոչ միայն բանվորներին, այլ նույն իսկ բուրժուազիայի խոշոր մեծամասնությունը, հարկադրեցին պետությանը վճարել իրենց վիթխարի գումար այն հողերի փոխարեն, վոր չեյին կարող յետ առնել:

Բուրբոնների բոլոր հակառակորդների մեջ մերձեցում տեղի ունեցավ: Ազատասեր բուրժուազիան միացավ բանվորների հետ, խոստանալով նրանց ոսկե սարեր, հաղթանակի դեպքում: 1830 թ. հուլիսին բռնկեց նոր հեղափոխություն (Հուլիսյան հեղափոխություն), վորի ընթացքում բանվորները, նրանց հետ միասին և ուսանող յերիտասարդությունը առյուծի նման կռվում եյին բարիկադների վրա: Բայց բանվորները խարվեցին. խոստացած հանրապետական կարգեր հաստատելու փոխարեն պահպանվեց միապետությունը, և միայն բացառապես հողատերերին հովանավորող բուրբոնների տունը փոխարինվեց Ոռվաների տնով, վոր գարձավ փողային և արդյունագործական բուրժուազիայի վոստիկանապետը: Հուլիսյան միապետության եպոխը բանկիրների և կապիտալիստների անբաժան տիրապետության շրջանն եր:

Հուլիսյան հեղափոխությունը ցնցում առաջացրեց ամբողջ Յեվրոպայում: Անգլիայում հին աղնվականությունը—արիստոկրատիան ստիպված յեղավ մեծ զիջումներ անել արդյունագործական բուրժուազիային (1832 թվին) և հատկացնել նրան բավական թվով տեղ պարլամենտում: Այնտեղ ել բանվորները պաշտպանում եյին բուրժուազիային արիստոկրատիայի դեմ մղած պայքարում, սակայն նրանք ել խարվեցին: Դրանից հետո միայն բանվորները սկսեցին իրենց պայքարը, բայց այս անգամ արդեն բուրժուազիայի և արիստոկրատիայի դեմ, վորոնք այժմ համաձայնություն (կոմպը ոմիս) եյին կնքել իրար հետ:

Հարեվան Բելգիայում ել ապստամբություն բռնկեց. Բելգիան անջատվեց Հոլանդիայից, վորի հետ նա միացած եր մի պետության մեջ: Ինչպես ֆրանսիայում, այնպես ել Բելգիայում հաստատվեց կոնստիտուցիոն վարչածեվ, այլ խոսքով միապետությունը պահպանվեց, բայց նա սահմանափակվեց հարուստ դասակարգերի ներկայացուցչությամբ. այդ դասակարգերը ներկայացուցիչների միջոցով պարլամենտում հսկում եյին, վորպես զի թագավորական իշխանությունը պաշտպանի իրենց շահերը:

Գերմանական մի շարք մանր պետությունների մեջ նույնպես ապստամբություններ տեղի ունեցան: Վախեցած թագավորները համաձայնեցին կոնստիտուցիա «տալ», կամ առաջին պա-

հուն զգալիորեն թուլացրին իրենց ճնշումը։ Այսպես, յերբ Ռուսիայի Նիկոլայ ցարը մեծ դժվարությամբ ճնշեց լեհական ազստամբությունը, վոր արձագանք եր Հուլիսյան հեղափոխության, փախած լեհական ազստամբներին թույլ տրվեց անցնել Գերմանիայով, վորտեղ ազգաբնակությունը մեծ են տուզի ազմով (խանդավառությամբ) վողջունում եր նրանց։

Հենց 30-ական թվականների սկզբներին ե, վոր մենք հանդիպում ենք Գերմանիայում բանվորների և արհեստավորների՝ հեղափոխական շարժումներին մասնակցելու առաջին քայլերին։ Յերբ գերմանական դեմոկրատները 1832 թվին ցույց սարքեցին Գամբախում (այսպես կոչված Գամբախի տոնակատարը), նրա կազմակերպմանը մասնակցում եյին և բանվորներ, վորոնցից մեկը՝ յերիտասարդ խողանակագործ Ֆիլիպ Բեկերը յուր ճառով պնդում եր, թե կառավարության բռնությանը ույժ պիտի հակադրել*): Գերմանական ուսանողների շրջանում սկսեց զարգանալ նոր շարժում։ Նրանցից վոմանք աշխատում եյին մերձենալ բանվորներին ու արհեստավորներին, իսկ մի քանի ուր, ինչպես որինակ Շուստերը, Շապուհ-

*) Այդ ժամանակից սկսած մենք պատահում ենք Թեկերին բանվորական շարժման պատմության մեջ մինչեւ 1886 թիվը։ յեզր նա մոռավ խոր ծերության մեջ՝ մահից յերեք տարի առաջ Թեկերը չսթագին վողջնեց հիմարումը «Աշխատանի ազատագրման խմբակի» վոր Պէտսանովի գլխավորությամբ Ռուսաստանում առաջին մարքսիստական կազմակերպությունն եր։




Հումանին բարիկադների գրա
նկար Դաֆելի

ու և Բյուլները փորձ արին նույնիսկ կանոնավոր աշխատանք կազմակերպել նրանց մեջ, սակայն ստիպված յեղան շուտով թողնել գերմանիան ու թագնվել արտասահմանում։ Բյուլները փախավ Զվիցերիա և այստեղ նվիրեց ինքզինքը գրական գործունեության, բայց շուտ մեռավ բոլորովին յերիտասարդ հասակում։ Շուտերն ու Շապակերը փախան Ֆրանսիա և բնակություն հաստատեցին Փարիզում։

Այդ ժամանակ Ֆրանսիայում բանվորական շարժումն արդեն սկսվել էր։ Առանձնապես ուժեղ տպավորություն գործեց 1831 թ. լիոնի մետաքսագործ ջուլհակների ապստամբությունը։ Առանց վորոշ նպատակի, անյելանելի կարիքից և անսանձ շահագործման հետեվանքով համբերությունից յելած, լիոնի ջուլհակները ապստամբեցին պարզապես այն պատճառով, վոր գերադասում ելին «կովով մեռնել», բան ապրել դարձյալ կիսաքաղց և առանց ապահոված աշխատանքի, «Ապրել աշխատելով, կամ մեռնել կովով», այս երգվածնրանց սեվ գրոշակի վրա։ Ապստամբները մի քանի որ իրենց ձեռքին պահեցին քաղաքը, բայց կառավարությունը նրանց դեմ մի ամբողջ զորաբանակ ուղարկեց և ճնշեց ապստամբությունը։

*) Մինչ այժմ եւ զերմանական թատրոններում եւ մեզ մոտ ուստատանում բնագրում են նրա հայտնի դրաման՝ «Դանտոնի մահ»։ Վորի նյութը Փրանսիական հեղափոխության պատմությունից եւ վերցրած։



Լիոնի ապստամբությունը 1831 թ.

Կիոնի շարժումը որվա ինդիք դարձրեց բանվորական հարցը։ Նա ցույց տվեց, վոր կոնստիտուցիոն կարգերում ել բանվորները դարձյալ նույն իրավագուրկ զոհերն են ամեն տեսակ կապիտալիստական գիշատիչների ճանկերում։ Սակայն այդ տպատամբությունը մտածելու առիթ տվեց նայել հեղափոխական յերիտասարդությանը, վոր անկեղծորեն ամբողջ աշխատավոր ժողովրդի բարին եր ցանկանում։ Ուսանողության շրջանից դուրս յեկած հեղափոխականները յեկան այն յեղբակացության, վոր անհրաժեշտ ե գաղտնի միությունների մեջ առնել և բանվորներին ու դարձնել նրանց գիտակից հեղափոխականներ։ Նրանք համոզված եյին, վոր լավ կազմակերպված մարդկանց մի փոքրիկ խմբակ կարող ե հարմար պահուն իշխանությունը գրավել ու աշխատավորության բարորությունը պաշտպանող մի շարք դեկրետների միջոցով հրապուրել և տանել իր յետեվից ժողովրդին ու այդպիսով հեղափոխություն կատարել։ Այդ հեղափոխականների զլուխ կանգնած եր Ոգյուստ Բլանկին — անհաջողությունից չուսաբեկվող, շարունակ նոր գաղտնի ընկերություններ կազմակերպող այդ անդուլ գործիք։ Գերմանիայից փախած հեղափոխականները շուտով հետեւեցին մրանսիայի հեղափոխականների որինակին և հիմնեցին իրենց միությունը։ Նրանց ոգնեց հետեւվյալ հանգամանքը։ Գերմանական արհեստավորները և քյարգարները,

առանձնապես հյուսներն ու գերձակները առվորություն ունեյին արհեստի ուսման ժամանակ ճամփորդել՝ «մարդ տեսնելու», արհեստ սովորելու և վոր և ե արդյունագործական խոշոր քաղաքում ապրելու համար։ Նրանցից շատերը ուղղեկորդում եյին Անգլիա և Զվիցերիա, բայց մեծ մասը գերադասում եր այն ժամանակ գնալ հեղափոխական Փարիզ, ուր 30-ական և 40-ական թվականներին կուտակվել եյին մի քանի տասնյակ հազար նման յեկվոր գերմանացի բանվորներ։

Շուտով նու Շապակերը, վորոնք 1834 թվին հիմնադրեցին ռէալածվածների կամ արտաքսվածների ընկերություն» -ը, շուտով անջատվեցին այդ կազմակերպության ավելի չափավոր մասից, վոր սահմանափակվում եր միայն քաղաքական աշխատանքով ու չեր կամենում բարձրացնել հարուստների և աղքատների հարցը։


1836 թ. Շապակերն ու իր ընկերները հիմնեցին «Արդարների Միություն» անունով նոր ընկերություն։ Նա սերտ կապ հաստատեց «Տարվա Ժամանակների Ընկերության» հետ, վորի զեկավարներն եյին Բլանկին ու Բարբեսը։ «Արդարների Միության» անդամների մեծամասնությունը բանվորներից եր բաղկացածք Շապակար դարձավ և կոշկակար Բառերի հետ միասին անդադրում աշխատում եր գերմանացի բանվորների շրջանում։ Շուտով նրանց միացավ գերձակ Վիլհելմ

Վայտլինդը, վորը Շապպերից ու Բառերից տարբերվում երնայեվ, վորպես ընդունակ գրող։ 1838 թվին նա հրատարակեց «Մարդկությունը, ինչպես վոր կա և ինչպիսին պիտի նա լինի» աշխատությունը։

Այդ առաջին գրքածն եր, վորով գերմանացի բանվորները իրենց կոմունիստ հայտարարեցին։ Վայտլինդը վճռապես արտահայտվեց հոգուտ մասնավոր սեփականության վերացման, սակայն նա աշխատում եր հիմնավորել իր ուսմունքը նախնական քրիստոնեությամբ։ Այդ ձեզով նա հույս ուներ ավելի հասկանալի և հարազատ դարձնել կումունիզմը բանվորներին, ապացուցելով այն ավետարանից բերած քաղքացներով։ Քրիստոսը նրա համար սիրո և աղատության մարդարեյեր։ Վայտլինդը անհրաժեշտ եր համարում մշակել ամենամանրամասն նախագիծը ապագա կոմունիստական հասարակության, վորի գլուխ կանգնած պիտի լիներ իմաստուների խորհուրդը։ Բայց նա արդեն յենթարկվել եր ֆրանսիայի հեղափոխականների ազգեցության և հասկանում եր, վոր նման կոմունիստական հասարակությունը անհնարին կլինի իրականացնել խաղաղ ճանապարհով։ «Հասարակության վերակազման մասին մինչ այժմ գրված բոլոր նախագծերը ապացուցում են նրա հնարավորությունն ու անհրաժեշտությունը, — ասում ենա։—Յեզ վորքան նման նախագծեր ավելի շատ լինեն, ժողովուրդը այնքան ավելի

ապացույցներ կունենա իր ոգտին։ Այնուամենայնիվ լավագույն նախագիծը մեր արյունով պիտի գըենք»։

Չնայած Վայտլինդը դուրս եր յեկել բանվորական շրջանից, զգացել եր իր վրա, թե ինչ ենցանակում ծայր աստիճանի աղքատությունը,



Վայտլինդ Վայտլինդ

սակայն նա չեր հասկանում, վոր պլուետարիատն ե այն գլխավոր գործիչը, վորին պիտի վիճակի կապիտալիստական հասարակությունը կոմունիստական դարձնել։ Բանվորները նրա համար աշխատանքի և հոգսի մարդիկ եյին, վորոնք հաճախ

կարիքից ավելի յեն տառապում, քան աշխատավորության այլ ներկայացուցիչները։ Այդ նրանց մեջ առաջացնում ե ավելի ուժեղ ատելություն դեպի շահագործողները, վոր իր հերթին ավելի ընդունակ ե դարձնում բանվորներին հեղափոխական պայքարի համար։ սրանից Վայտլինգը յեզրակացնում եր, վոր այդ պայքարին ամենից ավելի պիտանի յեն աշխատանքի և հոգսի այն մարդիկ, վորոնք վերջնականապես կտրել են իրենց կապերը ժամանակակից հասարակությունից, ինչպես որինակ ավագակներն ու բանդիտները։


1839 թ. մայիս 12-ին Բլանկին և իր ընկերները վորոշեցին ապստամբություն սարքել Փարիզում։ Իշխանությունը գրավելու այդ փորձը անհաջողությամբ վերջացավ։ «Արդարների Միության» անդամները մասնակցեցին այդ ապստամբության և իրենց ֆրանսիացի ընկերների հետ միասին բաժանեցին անհաջողության բոլոր հետեվանքները։

Մի քանի ամիս բանտարկությունից հետո Շապարն ու Բառերը արտաքսվեցին Ֆրանսիայի սահմաններից և ուղեվորվեցին Լոնդոն։ «Արդարների Միության» մյուս անդամները, նրանց թվում և Վայտլինգը ուղեվորվեցին Զվիցերիա։ Միությունը, վորպես ամբողջություն, դադարեց գոյություն ունենալ, բայց նրա առանձին անդամները շարունակում եյին իրենց աշխատանքը։

Շապակերն ու Բառերը Լոնդոնում բոլորովին այլ միջավայր ընկան, քան Զվիցերիայում գտնվող նրանց ընկերները։ Այդ ժամանակ Անգլիայում բանվորները, խարված բուրժուազիայից 1832 թվին, 1836-ին արդեն հիմնել եյին «Բանգորների կոնգրեսի կոնգրեսի թյունը», վոր յեռանդուն պայքար եր մղում ընդհանուր ընտրական իրավունքի համար։ Այդ շարժումը, չարտիստական անունով, 1840 թ. բավականին խոշոր ույժ եր հանդիսանում։ Յերբ չարտիստները 1840 թ. ներկայացրին պարլամենտին ընդհանուր ընտրական իրավունք պահանջող մի պետիցիա (գրավոր դիմում), նա ստորագրված եր 3 միլիոն անձնավորության կողմից։

Շապակերն ու Բառերը արագ կերպով կապ հաստատեցին գերմանական բանվորների հետ, վորոնց թիվը բավական մեծ եր կոնդոնի դերձակային ու կառուցանող արդյունագործության մեջ և 1840 թ. փետրվարին գերմանական բանվորների համար հիմնեցին ինքնազարդացման ընկերություն։ Շապակերից ու Բառերից զատ այժմ աչքի ընկան նայելով ներկարար Պֆենից եր և, ժամագործ Մուլլը և դերձակ եկար իուսը։

Ընկերության մեջ կարդացվում եյին գեկուցումներ ու տեղի եյին ունենում տաք բանավեճեր «ընթացիկ» մոմենտի մասին։ Շապակերը և իր ընկերները միաժամանակ սերտ կապ եյին պահում անգլիական չարտիստների և ֆրանցիսկան պահում անգլիական չարտիստների և ֆրան-



Զարդիստների յիշթը պետքացով (3.300.000 ստորագիր) 1842 թ. մայիս 2.

սիական այս հեղափոխականների հետ, վորոնք նույնպես Լոնդոնը ընտրեցին իրեւվ բնակավայր։

Մի շաբք գեգերումներից հետո, 1844 թ. ամառը, Լոնդոն յեկավ Վայտլինգը, վորին 9վեցերիայից աքսորել ելին կոմունիստական պրոպագանդի պատճառով։ Լոնդոնում նրան ընդունեցին բարեկամաբար և ջերմագին ողջույններով ու նրա պատվին միտինդ կազմակերպեցին։ Լոնդոնում այդ առաջին միջազգային մեծ ժողովն եր, վորին մասնակցում ելին անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք և լեհեր։

1844 թ. հոկտեմբերին, Շապակերի նախաձեռնությամբ, հիմնվեց «Բոլոր ժողովուրդների ղեկավատական բարեկամներ» անունով միջազգային ընկերություն»-ը, վոր իրեն նպատակ դրեց մերձեցնել զանազան յերկրների հեղափոխականներին, ամրացնել բոլոր ժողովուրդների յեղբայրական կապը և նվաճել քաղաքական ու հասարակական իրավունքներ։

Վայտլինգը իր հին ընկերների մեջ մեծ փոփոխություն դուավու Այն ժամանակ, յերբ նա Զվիցերիայում շփվում եր միայն քաղքենիների ու արհեստավորների շրջանի հետ, նրա ընկերները Լոնդոնում արդեն սերտ կապ ելին հաստատել անգլիական պրոլետարների հետ և մասնակից դաշնել նրանց անմիջական պայքարին։ 1839 թ. մայիս 12-ի անհաջող փորձից նրանք համապատասխան յեղբակացություններ ելին արել, և, ընդունելով, վոր նման բունտային փորձերը ան-

նպատակահարմար են, այժմ անհրաժեշտ ելին համարում լուսավորչական աշխատանք տանել պրոլետարների մեջ, վորպես զի ավելի լավ պատրաստեն բանվորներին նրանց առջեկ դրված խնդիրները իրագործելու համար:

Վայտլինգի և իր նախկին ընկերների միջեվ ծագած տարածայնությունները ավելի սուրբնույթ ստացան, յերբ Շապակերն ու նրա ըարեկամները 1815 թ. ամառը ծանոթացան գերմանական յերկու կոմունիստ—Մարքսի և Յոգելսի հետ:

Նրանք յերկումն ել բուրգուական միջավայրից եխն դուրս յեկել: Մարքսը (ծն. 1818 թ. մայիս 5-ին) փաստաբանի վորդի յեր, իսկ Ենգելսը (ծն. 1820 թ. նոյեմբեր 2-ին) տեքստիլ գործարանատիրոջ վորդի:

Յերկումն ել յերիտասարդ հասակից գործոն մասնակցություն ունեցան այն պայքարի մեջ, վոր մղում եր նրանց որոք գերմանական «ինտելիգենցիան» (կրթված մարդիկ) միապետության, ազնվականության և պետական պաշտոնյաների ձնշման դեմ: Բայց արդեն շատ շուտով նրանք յերկումն ել յեկան այն յեղբակացության, վոր զուտ դեմոկրատիան (ժողովրդապետությունը) իսկական յեկը չի ներկայանում, վոր նա անձեռնմխելի ե թողնում ժամանակակից հասարակության գլխավոր հիմքը—նրա բաժանումը հարուստների ու աղքատների: Յերկումն ել կոմունիստ դարձան, բայց նրանք—մանավանդ Մարքսը—չեյին կարող բավարարվել

այն ուսմունքով, վոր այն պահուն ամենից ավելի տարածված եր կոմունիստների շրջանում:

Մարքսն արդեն 1844 թ, հանգեց այն յեղակացության, վոր «ինտելիգենցիան» խնդնին անզոր ե բուրգուական հասարակության դեմ մղվող պայքարում: Նա կարող ե միայն հասարակության վերակազման մասին գիտություն մշակել, սակայն նա անկարող կլինի համեմ հասարակական բոլոր հարաբերությունների արմատական հեղաշրջման վոչ պըռպագանդով և վոչ ել մի բուրգ, թեկուզ շատ վճռական մարդկանց ձեռքով նախապատրաստված ապստամբության միջոցով: Նման հեղաշրջում կարող ե կատարել միայն հասարակական այնպիսի դասակարգ արդիական միանման՝ տվյալ հասարակության մեջ միանման դրությամբ ու միատեսակ շահերով կապված մարդկանց մի խմբակցություն, վոր, կամակամա, ստիպված ե պայքարել այդ հասարակության դեմ, յեթե կամենում ե աղատագրվել ձնշումից ու շահագործումից: Մարքսի կարծիքով այդպիսի դասակարգ կարող ե լինել միայն պլուտոսարի առ պլուտոսարի առ պլուտոսարի այսպիս թե այսպիս թե այսպիս շահագրգուված են պահպանել արդի հասարակությունը, վոր հիմնված ե արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա, պրոլետարիատը միակ դասակարգն ե, վոր զուրկ ե մասնավոր սեփականությունից և դրանով ել տարբերվում ե նա մնացածներից: Հենց այս պատճառով նա ստիպված ե ծա-

խել իր բանվորական ույժը, վորպես ապրանք, և համաձայնվել շահագործման յենթարկվել: Նման ստորացուցիչ դրությունից պրոլետարիատը կարող ե ազատվել միայն այն ժամանակ, յերբ կվերակազմվի ամբողջ հասարակությունը, կվոչնչացվի արտադրական միջոցների մասնավոր սեփականությունը, կհաստատվի հասարակական սեփականություն, և այդպիսով կվերացվի մարդու ամեն տեսակի շահագործումը մարդու ձեռքով: Պրոլետարիատը պիտի գիտակցի իր ընդհանուր դասակարգային շահերը, յուրացնի գիտությունը և հեղափոխություն կատարի: Գիտության ու պրոլետարիատի միությունը անպարտ ե դարձնում նրանց:

Այս հիմնական հայացքը յուրացրել եր նայել Ենգելսը, վորն այն ժամանակ աշխատում եր ՇԲԱՆՎՈՐ դասակարգի դրությունն Անգլիայում» վերնագիր կրող գրքի վրա: Մարքսն ու Ենգելսը շարունակում եյին միասին հետազոտել պրոլետարական պայքարի ծագման և զարգացման պայմանները, նրա բնույթը և նրանից բղխող նպատակները: 1845-46թ.թ. ձմեռը նրանք մշակեցին իրենց ուսմունքի գլխավոր հիմունքները:

Պարզվեց, վոր պրոլետարական պայքարը պատահական յերեվույթ չե. նա առաջ ե յեկել, վորպես հասարակական նոր հարաբերությունների անխուսափելի հետեւանք և չի վերանա, մինչեվ չի բարգործվի նրա նպատակը: Պարզվեց, վոր տնտեսական հարաբերությունները, մինչդեռ նա-

խորդ կոմունիստների համար վոչ մի նշանակություն չունեյին, ընդհակառակը, կազմում են այն հիմքը, վորի վրա ամեն անգամ աճում են հասարակական նոր ձեվեր, առաջ են գալիս դասակարգային նոր հակասություններ, նոր դասակարգեր, վորոնց պայքարով և բնորոշվում ե հասարակության կյանքը: Պարզվեց, վոր պրոլետարիատի զարգացումը նույնքան անխուսափելի ե, վորքան և բուրժուազիայի զարգացումը: Իսկ այստեղից ըլլիում եր, վոր պրոլետարիատը պիտի հետեւի առաջավոր յերկների բուրժուազիայի որինակին, գիտակցի իր նպատակներն ու խնդիրները, կազմակերպի հատուկ կուսակցություն և վերակազմի ամբողջ հասարակությունը իր նպատակների համաձայն:

Մարքսն ու Ենգելսը, վորոնք միայն գըրքերի մեջ թաղված գիտնականներն չեյին, ձեռնարկեցին լայն ազիտացիայի՝ իրենց ուսմունքը տարածելու համար: Բյուսելը, ուր նրանք այն ժամանակ ապրում եյին, մոտիկ էին ելով գերմանական սահմանին, հարմար տեղ եր՝ հարաբերություն պահպանելու գերմանացի բանվորների հետ, վորոնցից շատերը գալիս եյին այնտեղ: Շուտով Մարքսն ու Ենգելսը դարձան գերմանական բանվորների մեջ տարվող ամբողջ աշխատանքի կենտրոնական գեմքերը: Ավելի լայն կազմակերպություն նախապատրաստելու նպատակով նրանք առաջարկեցին իրենց համախոններին կազմակերպել զանազան քաղաքների բան-

վորական ինքնազարդացման ընկերությունների մեջ հատուկ բճիճներ, վորոնք կոչվեցին հարաբերության կոմիտեներ։ Նրանցից յուրաքանչյուրը պիտի կապված լիներ Բրյուսելի կոմիտեյի հետ։ Նման բճիճներ կազմակերպվեցին և Լոնդոնում, Շապակերի, Մոլլի ու նրանց ընկերների անդամակցությամբ և Փարիզում, ուր գլխավորապես աշխատում եր այստեղ տեղափոխված Ենգելսը։ Ամենուրեք յեռուն պայքար եր տարվում, ամենուրեք կենդանի վիճարանություններ եյին տեղի ունենում։ Նոր տեսակետը ամենից առաջ հաղթանակեց Բրյուսելում և Լոնդոնում։ Վայտինգից բաժանվեցին վոչ միայն Մարքսն ու Ենգելսը, այլև Լոնդոնի նրա հին ընկերները։ Նա շուտով Ամերիկա գնաց ուսանող կրիզեյի հետ, վորը դասակարգային պայքարից խրտնող ու «սիրո» վրա հիմնված, մի ուրույն տեսակի կոմունիզմ եր քարոզում։

Գերմանիային սահմանակից Բելգիայի Վերիցե քաղաքում կոմունիստական բոլոր բճիճների համագումար հրավիրելու անհաջող փորձից հետո, այդ համագումարը հրավիրվեց Լոնդոնում, 1847 թ. ամառը։ Ամենից առաջ ստեղծվեց մի նոր կազմակերպություն, վոր սկզբից յեվեթ միջադադային բնույթ ստացավ։ Նա իրեն նպատակ դրեց՝ բուրժուազիայի տապալումն ու պրոլետարիատի տիրապետությունը, դասակարգային պայքարի վրա հիմնված հին, բուրժուական հա-

սարակության վերացումն ու նոր հասարակության հիմնումը, առանց գասակարգելի և մասնավոր սեփականության։

Միության կանոնադրությունը կառուցված եր գեմոկրատիք ցենտրալիզմի հիման վրա։ Տեղական, շրջանային ու կենտրոնական կոմիտեները ընտրովի և փոխարինելի եյին։ Միության բարձրագույն մարմինն եր համագումարը։ Ընդունված կանոնադրությունը պիտի քննության յենթարկվեր տեղական կոմիտեների կողմից ու ապա նորից քննվեր հաջորդ համագումարում։

Համագումարում վորոշվեց հրատարակել սեփական ամսագիր, վորի փորձնական համարը լույս տեսավ 1847 թ. սեպտեմբերին։ Նրա առաջի յերեսի վրա մենք տեսնում ենք միության ընդունած նոր լողունգը՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

Այդ դասակարգային լողունգը, վոր շեշտակի ընդգծում եր նոր միության դասակարգային բնույթը, առաջարկվեց Մարքսի կողմից՝ «Բոլոր մարդիկ՝ յեղբայրներ են» հին, անվորոշ լուգունդի փոխարեն։

Յերկրորդ համագումարը կայացավ 1847 թ. նոյեմբեր—դեկտեմբեր ամիսների մեջ։ Յերկար վիճաբանություններից հետո ընդունվեցին նոր կանոնադրություն և նոր ծրագրի հիմնական սկզբունքները։ Այդ ծրագրի կազմելը, առանձին մանիֆեստի ձեվով, հանձնարարվեց Մարքսին,

վորն իր աշխատանքի համար ոգտագործեց նայել
Ենդեւսի կազմած նախագիծը:

Մարքսը աշխատանքի անցավ։ Զգալով իր
վրա ծանրացած մեծ պատասխանատվությունը,
գիտակցելով, վոր միության ծրագիրը, առաջին
անգամ, արար աշխարհի առջեվ պիտի յերեվան
բերեր պրոլետարիատի նպատակներն ու խնդիր-
ներն, Մարքսը չեր կարող գրել այն հապճեալ և
տաք տրամադրությամբ. ահա թե ի՞նչու նա յեր-
կար ժամանակ մշակում եր ծրագիրը։ Միության
կենտրոնական կոմիտեն, վորի բնակատեղին Լոն-
դոնը ընտրվեց, համբերությունից յելած, Շապ-
պերի, Մոլլի ու Բաուերի ստորագրությամբ 1848
թ. հունվար 26-ին Մարքսին ուղարկեց մի խստիվ
գրություն, հիշեցնելով, վոր յեթե նա Մանիֆեստը
փետրվար 1-ին չհասցնի, պարտավոր և յետ ու-
ղարկել իրեն հանձնված բոլոր դոկումենտները։

Մարքսը փետրվարին ուղարկեց Մանիֆես-
տը, և նա անմիջապես տպագրվեց։ Ամենայն հա-
վանականությամբ տպագրությունը կատարվեց
փետրվարի յերրորդ շաբաթից վոչ շուտ։ Կեն-
տրոնական կոմիտեն Մարքսին շտապեցնելու
հիմք ուներ։ Հունվարին արդեն իոլանդիայում
սկսվել եյին ուժեղ ալեկոծումներ, իսկ փետ-
րվար 24-ին բռնկեց Փարիզի հեղափոխությունը
(Փետրվարյան հեղափոխությունը),
վորին հաջորդեց Վիյենայի և Բերլինի հեղափոխու-
թյունը (Մարտի հեղափոխությունը):

Չնայած Մանիֆեստը չափազանց ուշ հրա-

տարակվեց, վորպես զի կարողանար ազդել 1848
թ. հեղափոխության նախապատրաստական աշ-
խատանքների վրա, այնուամենայնիվ նա դար-
ձավ ամբողջ միջազգային բանվորական շարժման
ծրագիրը։ Ընդամենը 23 յերեսի վրա (բանվորական
տպարանում տպագրված առաջին հրատարակու-
թյունը այդքան եղերից եր բաղկացած) Մանի-
ֆեստը տվեց պայքարող պրոլետարիատին ժա-
մանակակից բուրժուական հասարակության և
նրա ծոցում անխուսափելիորեն զարգացող դա-
սակարգային պայքարի ձիւտ նկարագիրը։ Նա
ցույց տվեց, թե ինչպես անխուսափելիորեն զար-
գեցել ե բուրժուազիան, ինչպես անտեսական
հարաբերությունների, արդյունագործության զա-
նազան ձեվերի փոփոխման հետեւվանքով փոխ-
վել են նրա գոյության պայմանները և թե ինչ-
պես նա ստիպված եր պայքարի բռնվել հին ազ-
նվական հասարակության հետ։ Նույն պար-
զությամբ ու փայլով նկարագրված են նա-
յեվ բուրժուազիայի զարգացման զուգընթաց՝ պրո-
լետարիատի զարգացման բոլոր աստիճանները։
Մանիֆեստը ցույց տվեց, վոր բանվորների պայ-
քարը առաջ և գալիս վոչ թե ագիտատորների ազ-
գեցության տակ, ինչպես յենթադրում եյին բուր-
ժուազիան և վոստիկանները, այլ վոր նա ան-
խուսափելիորեն զարգանում ե կապիտալիս-
տական հասարակության մեջ, վոր պրոլետարա-
կան պայքարը մի շարք աստիճաններ ե անցնում,

մասնակի ընդհարումներից սկսած մինչեվ գերազույն ճակատամարտը բուրժուական հասարակության հետ:

Մանիգեստը մի շարք սեղմ ու հղկված դրություններով շարադրեց կոմունիստների գլոխավոր պահանջները և վոչնչացնող քննադատության յենթարկեց բուրժուական գիտնականների առարկությունները:

Մանիգեստը մանրամասնորեն քննեց բոլոր հոսանքները, վորոնք գոյություն ունեյին այն ժամանակ սոցիալիստների և կոմունիստների շրջանում: Նա հակադրեց այդ հոսանքներին գիտական, պրոլետարական, նոր կոմունիզմի հեղափոխական ծրագիրը:

Մանիգեստը պարզորոշ կերպով գծեց հեղափոխության ժամանակ կոմունիստների բըռնելիք վարքագիծը:

Մանիգեստը պրոլետարիատին տվեց անցյալն ու ներկան բացարող բանալին. նա սովորեցրեց պրոլետարիատին ըմբռնել, հասկանալ այն նյութական հարաբերությունները, արտադրության ու բաշխման այն պայմանները, վորոնք բնորոշում են հասարակական ու քաղաքական բոլոր հարաբերությունները. նա տվեց պրոլետարիատի ձեռքը այսպիսի մի զորեղ զենք, վորպիսին պատմության մատերիալիստիստական ըմբռնումն ե, և ապագան նախատեսնելու այսպիսի ընդունակություն, վորպիսին չի ունեցել, պատ-

մության ընթացքում, իր ազատագրման համար պայքարող և վոչ մի դասակարգ:

Այդ փոքրիկ գրքույկի հրատարակումից հետո անցած 75 տարիների ընթացքում մարդկության կյանքում կատարվել են խոշոր փոփոխություններ: Սակայն իրադարձությունների այս փոթորիկի մեջ Մանիգեստը մնաց անսամբ ու կանգուն, իբրեւ կարծր գրանիտի վրա կառուցած մի փարոս, վորի լույսը մինչ այժմ ել համաշխարհային պըռլետարիատի ուղեցույց աստղն և հանդիսանում:

Ավելի քիչ տոկուն յեղավ կոմունիստների նորածին Միությունը: Հեղափոխության ժամանակ, վորպես ամբողջություն, նա շատ չընչին գեր խաղաց: Նրա առանձին անդամները միայն, վոչ իբրեւ միության ներկայացուցիչներ, այլ անհատապես, մասնակցեցին հեղափոխությանը. Նրանց մասնակցությունը այնքան ավելի արդյունավետ եր, վորքան ավելի լավ ելին նրանք յուրացըրել Մանիգեստի հիմնական մտքերը:

Հեղափոխության պարտությունից հետո Միության շատ անդամները նորից հավաքվեցին կոնդունում: Փորձ արվեց վերականգնել Միությունը, բայց տարածայնությունների շնորհիվ նա պառակտվեց: Փոքրամամնությունը, առանց հաշվի առնելու իրականության պայմանները, կամենում եր, ինչ զնով ել լինի, նոր հեղափոխամենում եր, ինչ զնով ել լինի, նոր հեղափոխամենում կատարել: Մեծամասնությունը, Մարքսություն կատարել: Մեծամասնությունը, Մարքսի և Ենգելսի գլխավորությամբ, ապացուցում

եր, վոր անհրաժեշտ ե նախապես ամրապնդել կազմակերպությունը ու սպասել ավելի հարմար ժամանակի։ Նա աշխատում եր վերահաստատել իր կապերը Գերմանիայի հետ, բայց այդ փորձը անհաջողությամբ վերջացավ։ Մեծամասնության ավելի աչքի ընկնող անդամները հետապլնդվեցին ու ձերբակալվեցին։ Մեկ և կետ տարվա բանտարկությունից հետո նրանք 1852 թ. վերջին հանձնվեցին Քյեռնի դատարանին և դատապարտվեցին 3—6 տարվա բանտարկության։ Կորցնելով իր կապը Գերմանիայի հետ կոմունիստների Միությունը կոնդոնում իրեն ցրված հայտարարեց։

Տասնյերկու տարի անց միայն Յելրոպայի բանվորական շարժումը այնքան կազդուրվեց, վոր կարելի յեր մտածել նոր միջազգային կազմակերպություն ստեղծելու մասին։ Նախաձեռնությունը այս անգամ պատկանում եր անգլիացի և Փրանսիացի բանվորներին, բայց 1864թ. սեպտեմբեր 28-ին կոնդոնում հիմնված բանվորների միջազգային ընկերության ծրագիրն ու կանոնադրությունը կազմելու ինդիրը Մարքսին վիճակվեց։ Խննը տարվա ընթացքում նոր Խստերնացիոնալ—նա կոչվում ե Լ Խստերնացիոնալ—ղեկավարում եր ամերիկյան ու յելրոպական ամբողջ բանվորական շարժումը։

Կոմունայի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանության տիրանալու այս առաջին փորձի պարտությունն եր, վոր գլխավոր հար-

վածը հասցրեց Լ Խստերնացիոնալին։ Դրան միացավ նայել անարխիստների պայքարը գերագույն խորհրդի դեմ։ 1876 թ. Առաջին Խստերնացիոնալը դադարեց գոյություն ունենալ։

Զանազան յերկրներում նրա բեկորներից ստեղծվեցին բանվորական կուսակցություններ, վորոնք 1889 թ. Փարիզում հիմնեցին II Խստերնացիոնալը, վոր 25 տարուց հետո, 1914 թ. ոգոստոսին խայտառակ կերպով անձնատուր յեղավ բուրժուական աշխարհին։

II Խստերնացիոնալի բանվորական կուսակցությունները, փոխանակ միանալու ընդդեմ բուրժուազիայի, սեփական բուրժուազիայի ղեկավարությամբ սկսեցին իրար կոտորել՝ հանուն բուրժուական հայրենիքի պաշտպանության։

Միայն ուսական պրոետարիատը հերոսական փորձ արեց դուրս գալ այդ համաշխարհային սպանդանոցից։ Նրան հաջողվեց հաղթել սեփական բուրժուազիային և, հենված գյուղացիության վրա, իր ձեռքն առնել քաղաքական իշխանությունը 1917 թ. հոկտեմբեր 25-ին (նոյեմբեր 7-ին)։ Իսկ 1918 թ. մեր կուսակցությունը վորոշեց հրաժարվել նախկին (սոցիալ-դեմոկրատական) անունից, վոր արդեն կոխորաված եր համաձայնողների կողմից—և ընդունել կոմունիստների հին անունը։ Նրա առջեկանգնած եր նույն ընտրությունը, վոր յերբեմկանցնած եր նույն ընտրությունը, վոր յերբեմնի ծառացած եր կոմունիստների Միության առջեկ։

«Սոցիալիզմը 1847 թ. բուրժուական շարժում եր, իսկ կոմունիզմը՝ բանվորական։ Համեմայն դեպք կոնտինենտում սոցիալիզմի առջեվ սալոնների դռները բաց եյին, իսկ կոմունիզմի առջեվ՝ ամուր փակված։ Բայց վորովհետեւ մենք դեռ այն ժամանակ խորապես համոզված եյինք, վոր «բանվորների ազատազրումը, իրեն՝ բանվոր գասակարգի գործը պիտի լինի», ապա մենք մի ըոպե անդամ չեյինք կարող տատանվել, թէ վո՞րը պիտի ընտրել այդ յերկու անուններից, և հետագայում ել մենք յերբեք չենք մտածել հրաժարվել նրանից»։

Այսպես ե գրում Ենգելսը։ Այժմ սոց.-դեմոկրատ նույնպես նշանակում ե այս կամ այն աստիճանի համաձայնություն բուրժուազիայի հետ, իսկ կոմունիզմ՝ պրոլետարիատի գասակարգային անհաշտ պայքար։

Ահա այս պատճառով ել նոր Խոտերնացիոնալը, վոր հիմնվեց 1919 թ. Մոսկվայում, հակառակ մնանկացած Յերկրորդ Խոտերնացիոնալին ընդունեց կոմունիստական ինտերնացիոնալ անդամականը, պահպանելով կոմունիստական Մանիքեստի փառունակ պատվիրանները։

Դ. ՌՅԱԶԱՆՈՎ.

ԿՈՄՊԻԿԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՓԵՍ

Յեվրոպայում մի ուրվական ե շրջում—կո-
մունիզմի ուրվականը։ Հին Յեվրոպայի բոլոր ու-
ժերը—պատն ու ցարը, Մետերնիխն ու Գիգոն,
ֆրանսիական արմատականներն ու գերմանական
վոստիկանները սրբազն դաշինք են կռել այդ
ուրվականը հալածելու համար։

Վո՞րն ե այն դիմադիր կուսակցությունը, վոր
կոմունիստական հոչակված չլիներ իշխանության
գլուխ անցած հակառակորդների կողմից։ Վո՞րն
ե այն դիմադիր կուսակցությունը, վոր կոմու-
նիզմի անվանարկու մեղադրանքը յետ շպրտած
չլիներ իրենից ավելի առաջադեմ դիմադիրների,
ինչպես և իր յետազեմ հակառակորդների յերեսին։

Այս փաստից յերկու յեղրակացություն ե
բղխում։

Բոլոր յեվրոպական պետությունների կողմից
կոմունիզմն արդեն ճանաչված ե իրրեվ ույժ։

Պատեհ ե ժամը, վոր կոմունիստներն իրենց
հայեցակերպը, նպատակներն ու ձգտումները հան-
դես բերեն արարաշխարհի առջեվ և կոմունիզ-
մի ուրվականի մասին շրջող հեքյաթներին կու-
սակցության իսկ Մանիքեստը հակադրեն։

Ահա այդ նպատակով մենք, բազմազան ազ-
գերի կոմունիստներս, հավաքվեցինք Լոնդոնում
և մշակեցինք հետեւյալ Մանիքեստը, վոր
կհրատարակվի անգլերեն, ֆրանսերեն, գերմա-
ներեն, իտալերեն, ֆլամանական և դանեմար-
կական լեզուներով։

I

ԲՈՒՐԺՈՒԱՆԵՐ ՑԵՎ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ

Բոլոր մինչայժմյան հասարակությունների պատմությունը*—դասակարգային պայքարի պատմություն ե:

Ազատն ու ստրուկը, պատրիկն ու պլեբեյը, բարոնն ու ճորտը, համքարն ու քյարգյարը, կարձ ճնշողն ու ճնշվածը միշտ ել իրար հակառակ են յեղել, անընդհատ պայքար են մղել իրար դեմ մերթ գաղտնի, մերթ ակնհայտ մի պայքար, վոր կամ ամբողջ հասարակության հեղափոխական

* Ավելի ժիշտն ասած՝ զ թ ա վ ո թ կերպով մեզ հասած պատմությունը: 1847 թվին ընակեցաղ հասարակության պատմությունը, նրա հասարակական կազմը, վոր նախորդում և ամսն մի գրավոր պատմության, գրեթե միանգամայն անհայտ եր: Հետո միայն չաքտնառուցինը հայտնագրծեց հոդի համայնական տիրապետությունը Ռուսաստանում, ինկ Մատուցելն ապացուցեց, որ դա յեղել և նայելք բոլոր գերմանական ցեղերի հասարակության հիմքն ու պատմության յելակետը: Ապա թե գտան, վոր համայնական հոգատիրությունը չնդկաստանից մինչեվ հոլանդիա գյուղական հասարակությունների նախնական կազմն և յեղել: Վերջապես տոնմի իսկական ընտյան յեվ ցեղի մեջ ունեցած տեղի վերաբերյալ Մոռգանի արած գյուտի շնորհիվ որսեվորվեց այդ նախնական կոմունիստական հասարակության ներքին կազմակերպությունն իր տիպական ձեվով: Այդ նախնական հասարակության կազմալուծման ներ սկզբամ և հասարակության շերտավորումը տարբեր յեվ և վերը նակադիր դասակարգերի: (Ենգնլիք, ծանոթությունը «Մանիգեստի» վերջին հաստարակության մեջ):

վերանորոգումով և վերջացել, կամ պայքարող դասակարգերի միասնական կործանումով:

Պատմության նախընթաց շրջաններում մենք գրեթե ամենուրեք գտնում ենք հասարակությունն անդամագատված տարբեր դասերի, հասարակական դիրքի բազմապիսի աստիճաններ: Հին հոռմում՝ պատրիկներ, ասպետներ, պլեբեյներ և ստրուկներ, միջնադրում՝ ավատատերեր, վասսալներ, համքարներ, քյարգյարներ և ճորտեր: Յեվ այդ դասակարգերից գրեթե յուրաքանչյուրը դարձյալ ստորաբաժանումներ և ունեցել:

✓ Կործանված ավատական հասարակությունից յելած արդի բուրժուական հասարակությունն ել դասակարգային ներհակությունը չվերացրեց: Նա լո՛կ նոր դասակարգեր, ճնշումի նո՛ր պայպաններ և պայքարի նոր յեղանակներ դրեց հնի տեղ:

Սակայն մեր եպոխը—բուրժուազիայի եպոխը—նրանով ե նշանավոր, վոր դասակարգերի հակադրություններին պարզ ձեվ ե տվել: Ամբողջ հասարակությունը գնալով ավելի ու ավելի յերաժանվում յերկու մեծ, թշնամի բանակների, ուղղակի դեմ առ դեմ կանգնած յերկու մեծ դասակարգերի—բուրժուազիայի և պլուտուարիատի:

Միջնադրյան ճորտերից սերում ե նորածագ քաղաքների յեկվոր ազգաբնակությունը, փորից զարգանում են բուրժուազիայի սկզբնական տարբերը:

Ամերիկայի հայտնագործումը և շուրջափ-

ըիկյան նավագնացությունը աճող բուրժուազիայի առջեվ նոր ասպարեզ բացին։ Արեվելյան Հնդկաստանի և Չինաստանի շուկաները, Ամերիկայի կողմնիզացիան, փոխանակությունը գաղութների հետ, փոխի միջոցների և ընդհանրապես ապրանքների բազմանալը, — զարկ տվին առեվտրի, նավարկության և ինդուստրիի տակավին չտեսնված բարգավաճման և շնորհիվ դրան՝ հեղափոխական տարրերի արագ զարգացման քայլքայվող ավատական հասարակության մեջ։

Ավատական կամ համքարային ինդուստրիի արտադրության մինչ այդ գոյություն ունեցած յեղանակը ել չեր բավարարում նոր շուկաների շնորհիվ աճած պահանջին։ Նրա տեղը բռնեց մանուֆակտուրը, ինդուստրային միջին դասը վանեց համքարներին։ Աշխատանքի բաժանումը զանազան համքարությունների միջնեվ տեղի տվեց աշխատանքի բաժանումին յուրաքանչյուր արհեստանոցում։

Սակայն շուկաները շարունակ աճում եյին, պահանջն անընդհատ ավելանում։ Այլին մանուֆակտուրն ել չեր կարողանում բավարարել։ Յեվ ահա շոգին ու մեքենան հեղափոխեցին ինդուստրիի արտադրությունը։ Մանուֆակտուրի տեղը — արդի խոշոր ինդուստրիի բռնեց, ինդուստրային միջին դասի տեղը — ինդուստրային միլիոնատերերը, ինդուստրային ամբողջ բանակների ղեկավարները, արդի բուրժուազիան։

Խոշոր ինդուստրիին ստեղծեց համաշխարհային շուկան, վոր նախապատրաստված եր Ամե-

րիկայի հայտնագործումով։ Համաշխարհային շուկան անչափ զարգացրեց առեվտուրը, նավարկությունը և ցամաքային հաղորդակցությունը։ Այդ հանգամանքը յետագարձ աղդեցություն ունեցավ ինդուստրիի ծավալման վրա, և վոր չափով ինդուստրին, առեվտուրը, նավարկությունն ու յերկաթուղին եյին զարգանվում, նույն չափով բուրժուազիան եր զարգանում, բազմապատկում իր կապիտալը և յետ մղում միջնադարից մնացած բոլոր դասակարգերը։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր արդի բուրժուազիան ինքն ել արդյունք և յերկարատեվ զարգացման, արտադրության և փոխի յեղանակի մի շարք հեղաշրջումների։

Ամեն անգամ այդ զարգացման մի աստիճանից մյուսն անցնելիս բուրժուազիան համապատասխան քաղաքական նվաճումներ ե արել։

Բուրժուազիան — մնշված դաս և յեղել ավատական տերերի տիրապետության ներքո, զինված և ինքնավար ասոցիացիա կոմունայում*, այստեղ, անկախ քաղաքային հանրապետություն, այնտեղ՝ միապետության յերրորդ, հարկատուդաս, ապա՝ մանուֆակտուրի ժամանակաշրջանում դասային կամ արտոյուտ միապետության մեջ — հակակշիռ ընդդեմ ազնվականության։ Բուրժուազիան, վոր առհասարակ խոշոր միապետու-

*) Ավատատերենից փողով կամ ուժով ինքնավարության իրավունք ծնոք բերելուց հետո հոտավելայի յեվ Փրանսիայի քաղաքացիներն այդպես եյին անվանում իրինց աղաքային համայնքը։

թյունների գլխավոր պատվարն ե յեղել, խոշոր ինդուստրի և համաշխարհային շուկաներ հաստատվելուց հետո արդի ներկայացուցչական պետության մեջ վերջապես բացառիկ քաղաքական իշխանություն ե նվաճել։ Արդի պետական իշխանությունը լոկ մի կոմիտե ե, վոր վողջ բուրժուազասակարգի հասարակական գոծերն ե վարում։

Բուրժուազիան պատմության մեջ վերին աստիճանի հեղափոխական դեր ե կատարել։

Բուրժուազիան, ուր վոր տիրապետության ե հասել, խորտակել ե բոլոր ավատական, նահապետական, հովերգական հարաբերությունները։ Ավատական խայտաբղետ կապերը, վորոնք կապում եյին մարդկանց իրենց բնական մեծավորներին, նա անողոքաբար կտրտեց և մարդկանց միջեվ բացի մերկ շահից, բացի անզգա «նազդ փողից» վոչինչ այլ կապ չթողեց։ Նա խեղից յեսամոլ հաշվի պաղպաջյուն ջրի մեջ բարեպաշտ անուրջի սրբազն դողը, ասպետական վոգեվորությունն ու քաղքենի թախիծը։ Անհատական արժանապատվությունը նա փոխարժեքի վերածեց, թղթով ջնորհած և անձամբ ձեռք բերած անթիվ ազատությունների տեղ—մի հատիկ, անխիղճ, առեվտրի ազատություն դրեց։ Մի խոսքով կրոնական և քաղաքական պատրանքներով քողարկված շահագործումը նա փոխարինեց ափաշկարա, անամոթ, անմիջական և չոր շահագործումով։

Բուրժուազիան ցարդ պատկառելի և բարե-

պաշտ յերկյուղածություն վայելող գործունեության բոլոր տեսակները զբկեց իրենց լուսապսակից։ Բժշկին, քահանային, պոետին, գիտնականին նա իր վարձու բանվորները դարձրեց։

Բուրժուազիան պատռեց ընտանեկան հարաբերությունների սրտաշարժ-սենտիմենտալ քողը և զուտ փողային հարաբերությունների վերածեց նրանց։

Բուրժուազիան մերկացրեց, թե ինչպես բիրտ ուժի արտահայտությունը, վորով այնքան հիանում են միջնադարը դիտող յետաղիմականները, իրեն համապատասխան լրացում ե գտնում ծովության ու ձրիակերության մեջ։ Առաջին անգամ նա ցույց տվեց, թե ինչե՛ր կարող ե գլուխ բերել մարդուս գործունեությունը։ Նա ստեղծագործեց բոլորովին ա՛յլ հրաշալիքները, քան յեղիպտական բուրգերը, հոռմեական ջրմուղները և գոթական տաճարները, նա միանգամայն ա՛յլ արշավանքներ վարեց, քան ազգերի գաղթը և խաչակրաց արշավանքը։

Բուրժուազիան չի կարող գոյություն ունենալ առանց արտադրության գործիքների, հետեւ վագես և արտադրական հարաբերությունների հետեւապես և հասարակական բովանդակ հարաբերությունների անընդհատ հեղափոխման։ Ընդհակառելը՝ արտադրության հին յեղանակի անփոփոխականությունը—բոլոր նախընթաց արտադիր դապահանումը—բոլոր անախընթաց արտադիր դապահարգերի գոյության առաջին պայմանն ե յեղել։ Բոլոր այլ ժամանակաշրջաններից բուրժուա-

կանը զանագանվում ե արտադրության անդադրում, հեղացքումով, հասարակական բոլոր կացությունների անընդհատ սասանումով, մշտական անապահովությամբ և շարժումով։ Բոլոր ամուր, ժանդու հարաբերություններն իրենց ուղեկցող հնադարյան մտապատկերներով ու հայցքներով, լուծվում են, բոլոր նորակազմները, տակավին չամրացած՝ հնանում։ Այս ամենը, ինչ զասային ե և անշարժ՝ գոլորոշիանում ե, բոլոր սրբությունները—պղծվում են և մարդիկ վերջ ի վերջո հարկադրվում են իրենց կենսական դրության, իրենց փոխադարձ հարաբերություններին զգաստ աչքով նայելու։

Իր ապրանքների սպառավայրն ընդլայնելու պահանջը մղում ե բուրժուազիային յերկրագունդն ի վեր։ Պետք ե, վոր նա ամենուրեք տեղ բռնի, ամենուրեք բնակություն և կապեր հաստատի։

Բուրժուազիան, համաշխարհային շուկաները շահագործելով՝ բոլոր յերկիրների արտադրությունն ու սպառումը կոսմոպոլիտարար ե կազմակերպում։ Ի մեջ վիշտ յետաղիմականների արդյունագործության վոտի տակից նա խլեց ազգային հողը։ Արդյունագործության նախնական ազգային ճյուղերը վոչնչացել և տակավին որեցոր վոչնչանում են։ Նրանց տեղը—արդյունագործության նոր տեսս կներն են բռնում, վորոնց ներմուծումը բոլոր քաղաքակիրթ ազգերի համար կյանքի և մահու խնդիր ե դառնում։ Ար-

դյունագործության այդ նոր տեսակներով վո՛չ միայն տեղական հում նյութերն են մշակում, այլև երկրագնդի ամենահեռավոր գոտիների հում նյութերը։ Նրանց ֆաբրիկատներ վոչ միայն իրենց յերկրում են սպառում, այլև աշխարհի բոլոր մասերում։ Հին, տեղական արտադրությամբ բավարարվող կարիքների տեղը—նորերն են բռնում, վորոնք իրենց բավարարման համար ամենահեռավոր յերկիրների և կլիմաների պրոցուկտներն են պահանջում։ Հին տեղական և ազգային ինքնաբավարարման և կղզիացման տեղը—բազմակողմանի հարաբերությունն ե բռնում, ազգերի բազմակողմանի կախումն իրարից։ Յեվ հոգեվոր արտադրության բանը նույն ե, ինչ վոր նյութականինը։ Հատ-հատ ազգերի հոգեվոր արտադրությունները—հանրային բարիքներ են դառնում։ Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունը, քանի գնում, այնքան անհնար են դառնում, և բազմաթիվ ազգային ու տեղական գրականություններից համաշխարհային մի գրականություն ե գոյանում։

Բուրժուազիան, արտադրության բոլոր գործիքների արագ բարելավումով, հաղորդակցության անվերջ դյուրացումով, դեպի քաղաքակրթություն ե մղում բոլոր ազգերը, անգամ ամենաբարբարուներին։ Ապրանքների եժան զները նրանք արտիկերիան ե, վորով բոլոր չինական պատերը նա հիմնահատակ խորտակում ե և բարբարուների ամենահաստակողք ոտարատեցությունը

ստիպում ե անձնատուր լինել: Նա հարկադրում ե, վոր բոլոր ազգերը, յեթե չեն ուզում կործանվել, յուրացնեն արտադրության բուրժուական յեղանակը: Նա ստիպում ե, վոր նրանք իրենց մեջ այսպես կոչված քաղաքակրթություն մըտցնեն, այսինքն՝ բուրժուա դառնան: Մի խոսքսվ նա իր համար մի աշխարհ ե ստեղծագործում ըստ իր սեփական պատկերի:

Բուրժուազիան գյուղը քաղաքի տիրապետության յենթարկեց: Նա հսկայական քաղաքներ ե ստեղծել, ծայր աստիճան բազմացրել ե քաղաքի ազգաբնակության թիվը ի հաշիվ գյուղերի և գրանով ազգաբնակության նշանավոր մասը պոկել ե գյուղական ապուշ կյանքից: Յեվ ինչպես նա գյուղն ե քաղաքից կախման մեջ գրել, այնպես ել բարբարոս ու կիսաբարբարոս յերկիրներն ե յենթարկել քաղաքակրթներին, գյուղացի ժողովրդները—քաղաքաբնակներին, Արեւելքը—Արեվմուտքին:

Բուրժուազիան գնալով ավելի և ավելի յեղացնում արտադրության միջոցների, սեփականության և ազգաբնակության ցրվածությունը: Նա խտացրել ե ազգաբնակությունը, կենտրոնացրել արտադրության միջոցները և սեփականությունը մի քանիմների ձեռքում: Դրա անհրաժեշտ հետեւանքը քաղաքական կենտրոնացումը յեղափ: Տարբեր շահերով, որենքներով, կառավարությամբ և մաքսերով, անկախ, գրեթե լոկ դաշնակցող գավառները նա իրար կցեց, մի

ազգ, մի' կառավարություն, մի' որենք, ազգային դասակարգային մի շահ, մաքսային մի գիծ ստեղծեց:

Բուրժուազիան իր դասակարգային հազիվ հարյուրամյա տիրապետության ընթացքում ավելի բազմաթիվ և վիթխարի արտադիր ուժեր ստեղծեց, քան բոլոր նախընթաց սերունդները միասին: Բնական ուժերի նվաճումը, մեքենաները, քիմիայի կիրարկումն ինդուստրիի և հողագործության մեջ, շոգենավարկությունը, յերկաթուղիները, յելեքտրական հեռագիրը, ամբողջ աշխարհամասերի մշակումը, գետերի հարմարացումը նավագնացության համար, գետնի տակից դուրս բերած ամբողջ ժողովուրդներ—նախընթաց դարերից վո՞րի մտքովը կանցներ, թե նման արտադիր ուժեր են նիրհում հասարակական աշխատանքի ծոցում:

Այսպիսով մենք տեսանք, վոր արտադրության և հաղորդակցության միջոցները, վոր հիմք դարձան բուրժուազիան զարգացման՝ ավատական հասարակության ծոցում եյին ծնունդ առել: Արտադրության և հաղորդակցության այս միջոցիրի զարգացման վորոշ աստիճանի վրա, ավատական հասարակության արտադրական և փոխանակային հարաբերությունները, յերկրագործության և մանուֆակտուրի ավատակուն կազմակերպությունը, մի խոսքով՝ սեփականության ավատական հարաբերությունները այլյեվս դադարեցին համապատասխանել արդեն զարգացած արտադիր

ուժերին։ Արտադրությունը առաջ մղելու տեղ նրանք կաշկանգում եյին այն։ Նրանք ել արտադրության համար բազմաթիվ կապանքներ դառն։ Նրանք պիտի փշրվեյին և փշրվեցին։

Նրանց տեղը բռնեց ազատ մըցումը, իրեն համապատասխան հասարակական և քաղաքական սահմանադրությամբ, բուրժուական դասակարգի տնտեսական և քաղաքական տիրապետությամբ։

Մեր աչքի առջեվ տեղի ունի նման մի շարժում։ Արտադրության և հաղորդակցության բուրժուական պայմանները, բուրժուազիայի սեփականատիրական հարաբերությունները, արդի բուրժուական հասարակությունը, վոր արտադրության և հաղորդակցության զորեղ միջոցներ ե դուրս կոչել, նման ե այն կախարդապետին, վոր այլյեվս չի կարողանում իշխել իր իսկ դուրս կոչած ստորյերկրային ուժերին։ Խնդուստրիի և առեվտրի պատմությունը տասնյակ տարիներից վեր արդի արտադիր ուժերի ըմբռատացման պատմությունն ե լոկ ընդդեմ արտադրության արդի հարաբերությունների, ընդդեմ սեփականատիրական հարաբերությունների, վոր բուրժուազիայի և նրա տիրապետության կենսական պայմանն են հանդիսանում։ Բավական է հիշատակել առեվտրական ճգնաժամերը, վոր իրենց պարբերական վերադարձով քանի գնում ավելի յեն սպառնում բուրժուական հասարակության գոյությանը։ Առեվտրական ճգնաժամերի պահուն վոչ միայն արտադրած ապրանքների մեծ

մասը, այլյեվ արդեն ստեղծված արտադիր ուժերն են կանոնավոր ձեզով վոչնչանում։ Ճգնաժամերի միջոցին բռնկում ե հասարակական մի համաճարակ, վոր բոլոր նախընթաց ժամանակաշրջանում անհեթեթ կթվար—գերարտադրության համաճարակը, Հանկարծակի հասարակությունը գտնում ե իրեն առ ժամանակ յետ նետված բարբարոս կացության մեջ։ Կարծես մի սով, մի համատարած ավելիչ պատերազմ կտրած լինի նրա ապրուստի բոլոր միջոցները։ Կարծես ինչ գուստըին, առեվտուրը վոչնչացած լինեն։ Խնչուով վորովիետեվ հասարակությունը ավելի քան շատ քաղաքակրթություն, ապրուստի միջոցներ, ինչուսարի և առեվտուր ունի։ Նրա տրամադրության ներքո գտնված արտադիր ուժերը այլյեվս բուրժուազիայի սեփականատիրական հարաբերությունների առաջնադաշտացմանը չեն ծառայում։ Ընդհակառակը՝ այդ հարաբերությունների համար նրանք ավելի քան զորեղ են, կաշկանդվում են նրանցից, և հենց վոր նրանք հաղթահարում են այդ կապանքները, իսկույն վողջ բուրժուական հասարակությունը կազմակուծման մեջ են քցում, սպառնում բուրժուական սեփականության գոյությանը։ Բուրժուական հարաբերությունները չափազանց նեղ են իրենց իսկ արտադրած հաշտությունը ընդգրկելու համար։

Ի՞նչպես ե ապա բուրժուազիան ճգնաժամերը հաղթահարում։ Մի կողմից՝ հարկադրաբար մեծ քանակությամբ արտադրական ուժեր վոչն-

չացնելով, մյուս կողմից՝ նոր շուկաների նվաճումով և հների ավելի հիմնական շահագործումով։ Այսինքն՝ ավելի բազմակողմանի և ուժգին ճգնաժամեր են նախապատրաստում և պակեցնում նրանցից խուսափելու միջոցները։

Այն զենքերը, վորոնցով բուրժուազիան հողին հավասարացրեց ավատականությունը, այժմ հենց բուրժուազիայի դեմ են ուղղվում։

Սակայն բուրժուազիան վոչ միայն այն զենքերն են կռել, վոր իրեն մահ պիտի բերեն, նա ծնել են նայել այն մարդկանց, վոր այդ զենքերը պիտի կրեն—արդի բանվորներին, պը ու լետարն երին։

Այնչափ, վորչափ բուրժուազիան, այսինքն՝ կապիտալը զարգանում ե, զարգանում ե նայել պրոլետարիատը, արդի բանվորների դասակարգը, վոր ապրում ե, քանի աշխատանք ե գտնում, և աշխատանք ե գտնում, քանի նրա աշխատանքը բազմապատկում ե կապիտալը։ Այդ բանվորները, վոր հարկադրված են իրենք իրենց հատավաճառվ ծախել, ապրանք են, ինչպես ամեն մի ուրիշ առեվտրի առարկա, ուստի նմանապես յենթարկված են մրցման պատահականություններին և շուկայի բոլոր տատանումներին։

Պրոլետարների աշխատանքը, շնորհիվ մեքենաների տարածման և աշխատանքի բաժանման, իսպառ կորցրել ե իր ինքնուրույն բնույթը և զրա հետ միասին իր վողջ հրապույրը աշխա-

տողի համար։ Բանվորը դառնում ե մեքենայի կցորդը սոսկ վորից միայն ամենապարզ, ամենամիրինակ և ամենադյուրին կերպով ուսումսիրվող ձեռքի շարժումներ են պահանջում։ Ուստի և բանվորի նստած ծախսը սահմանափակվում ե գրեթե նրանով, ինչ պետք ե լոկ նրա ապրուստի համար, ինչ պետք ե նրան իր կյանքը պահպանելու և իր սերունդը շարունակելու համար։ Իսկ ամեն մի ապրանքի, հետեւ պես նայել աշխատանքի գինը, հավասար ե նրա արտադրության ծախսին։ Վորքան ավելի յեզզվելի գառնում աշխատանքը, այնքան ավելի յեզնկնում նրա վարձը։ Դեռ ավելին։ Ինչ չափով մեքենաների զարգացումն ու աշխատանքի բաժանումն են առաջ գնում, այն չափով աճում ե աշխատանքի քանակը, լինի դա աշխատաժամի հավելման շնորհիվ, թե տվյեալ ժամի ընթացքում պահանջվող աշխատանքի հավելումի, վոր առաջ ե գալիս շնորհիվ մեքենաների շարժնթացքի արագացման և այլն։

Արդի ինդուստրին նահապետական վարպետի փոքրիկ արհեստանոցը վերածեց ինդուստրային կապիտալիստի խոշոր գործարանի։ Բանվորների բազմությունը խոնված գործարանում կազմակերպվում ե զինվորների պես։ Իրենք ինդուստրի հասարակ զինվորներ, նրանք յենթասպանների և սպանների մի կատարյալ յերարխիայի հակողության են յենթարկվում։ Նրանք վոչ միայն բուրժուազիայի, բուրժուական պետական բա-

տության ստրուկն են դառնում, նրանք ամեն ո՞ր, ամեն ժամ ստրկանում են մեքենաներին, վերակացուներին, և ամենից առաջ առանձին-առանձին գործարանատեր բուրժուաներին։ Այդ բոնապետությունն այնքան ավելի փոքրողի, զզվելի և դառնացուցիչ ե դառնում, վորքան ավելի յե բացահայտվում իբրեւ նպատակ—շահը։

Վորքան ձեռքի աշխատանքը ավելի քիչ ճկություն և ույժ ե պահանջում, այսինքն՝ վորքան ավելի ե զարգանում արդի ինդուստրին, այնքան ավելի տղամարդու աշխատանքի տեղը կանաց աշխատանքն ե բոնում։ Սեռի և հասակի տարբերությունները բանվոր դասակարգի համար այլինքան վոչ մի հասարակական նշանակություն չունեն։ Նրանք սոսկ աշխատանքի մեքենաներ են, վոր ըստ հասակի և սեռի տարբեր ծախս են նստում։ Հենց վոր բանվորի շահագործումը գործարանատիրոջ միջոցով այն տեղն ե համում, վոր նա ստանում ե իր կանխիկ համբած աշխատավարձը, իսկույն յեվեթ վրա և տալիս բուրժուազիայի մյուս մասը՝ տանտերը, խանութպանը, վաշխառուն և այլն։

Նախկին միջին դասի ստորին խավերը—մանր արդյունագործողները, վաճառականներն ու ուանտիեները, արհեստավորներն ու գյուղացիները—բոլոր այս դասակարգերը պրոլետարիատի շարքերն են ընկնում, մասամբ նրանից, վոր խոշոր ինդուստրային արտադրության համար նրանց կապիտալը չի հերիքում և ավելի խոշոր

կապիտալիստների մըցմանը չեն դիմանում, մասամբ նրանից, վոր նրանց հմտությունը, չնորիկ արտադրական նոր յեղանակների, կորցնում ե իր արժեքը։ Այսպես ե կատարվում պրոլետարիատի գորաժողովը աղքարնակության բոլոր դասակարգերից։

Պրոլետարիատը զարգացման զանազան աստիճաններ և անցնում։ Նրա պայքարն ընդդեմ բուրժուազիայի սկսվում ե իր գոյության առաջին որից։

Սպառում հատ-հատ բանվորներ են մաքառում, ապա՝ վոր և ե գործարանի բանվորերը միասին, ապա թե աշխատանքի վոր և ե ճյուղի բանվորները մի վայրում ընդդեմ այս կամ այն բուրժուայի։ Վոր նրանց անիջապես շահագործում ե։ Նրանք իրենց հարվածը վոչ միայն բուրժուազիան արտադրական հարաբերությունների դեմ են ուղղում այլինք արտադրության գործիքների դեմ։ Նրանք վոչնչացնում են մըցող ոտար ապրանքները, ջարդում մեքենաները, հրդեհում գործարանները, նրանք վորձ են անում վերստին համել միջնադարյան բանվորների խորտակված վիճակին։

Զարգացման այդ աստիճանի վրա բանվորները ցըված են աշխարհիս յերեսին և մըցման պատճառով իրարից անջատված զանգված են կազմում։ Բանվորների մասայական միաբանությունն այդ պահում իրենց սեփական միության հետեւվանքը չի, այլ հետեւվանք ե բուրժուազիայի

միացման, վոր իր քաղաքական նպատակներին համնելու համար հարկադրված ե և տակավին կարող ե ամբողջ պրոլետարիատը շարժման մեջ դնել: Ուրեմն այդ աստիճանի վրա պրոլետարիատը վոչ թե իր թշնամիների դեմ ե մաքառում, այլ իր թշնամիների թշնամիների դեմ, արսոլյուտ միապետության մնացորդների, կալվածատերերի, վոչ-ինդուստրային բուրժուազիայի և մանր բուրժուազիայի դեմ: Այդպիսով վողջ պատմական շարժումը բուրժուազիայի ձեռքում ե կենտրոնանում: Այդ յեղանակով տարած ամեն մի հաղթանակ—բուրժուազիայի հաղթանակն ե:

Սակայն ինդուստրիի զարգացման հետ պրոլետարիատը վոչ թե սոսկ բազմանում ե: Նա քանի գնում ավելի խիտ զանգվածներ ե կազմում, աճում ե նրա ույժը և այդ բանը քանի գնում նա ավելի ե զգում: Քանի մեքենաներն ավելի յեն հարթում աշխատանքի պայմանների տարբերությունները և վորքան ավելի յե ամենուր նման ցած մակարդակի վրա իջնում աշխատավարձը,—այնքան ավելի յեն պրոլետարների շահերն ու կենսական վիճակը միանման դառնում: Բուրժուաների աջող մրցումը իրար մեջ և դրանից առաջ յեկած առեվտրական ճգնաժամերը բանվորների աշխատավարձը շարունակ ավելի և ավելի անհաստատ են դաշնում: Մեքենաների արագ զարգացումն ու անընդհատ կտտարելագործումը բանվորների ապրուստը գնալով ավելի և ավելի անապահով են

դարձնում: Հատ ու կենտ բանվորների և բուրժուաների միջեւ ընդհարումը քանի գնում ավելի յե յերկու դասակարգերի բաղխումի կերպարանք ընդունում: Բանվորները սկսում են նրանից, վոր միանում են բուրժուազիայի դեմ: Նրանք հանդես են գալիս իրենց աշխատավարձն անկումից պաշտպանելու համար: Նրանք անգամ տեվական ընկերություններ են հիմնում, վոր պեսզի հնարավոր բռնկումների պահուն նյութապես ապահոված լինեն: Տեղ-տեղ պայքարը պոռթկում ե ապստամբության յեղանակով:

Ժամանակ առ ժամանակ հաղթում են բանվորները, սակայն լոկ անցողակի: Նրանց պայքարի իրական հետեվանքը վոչ թե անմիջական հաջողությունն ե, այլ բանվորների միշտ ավելի լայն ծավալվող միությունը: Խոշոր ինդուստրիի արտադրած հաղորդակցության միջոցների աճումը գալիս ե զանազան վայրերի բանվորներին շաղկապելու իրար: Սակայն բավական ե այդ կազը, վոր բազմաթիվ տեղական, բայց ամենուր նման բնույթ կրող պայքարները—ազգային, դասակարգային պայքար դառնան: Սակայն ամեն մի դասակարգային պայքար—քաղաքական պայքար ե: Յեզ այն միությունը, վոր միջնադարյան քաղաքացիները, սայլուղիների տիրապետության շրջանում դարերի ընթացքում միայն գլուխ բերին, արդի պրոլետարիատը, յերկաթուղիների միջոցով տարիների ընթացքում ե գլուխ բերում:

Պրոլետարիատի այդ կազմակերպումն իրբեվ դասակարգի և դրա հետ նայեվ իրբեվք քաղաքական կաւակցության—յուրաքանչյուր ակնթարթ պայթում և բանվորների միջեվ յեղած մըցման շնորհիվ։ Սակայն կազմակերպությունը նորից ու նորից առաջ ե գալիս, ավելի զորանում, ամրանում, ուժգնանում։ Նա որենքի ձեզով ճանաչել ե տալիս բանվորների մասնակի շահերը, ոգտագործելով բուրժուազիայի ներքին պառակտումները։ Որինակ՝ տասժամյա աշխատանքի որենքն Անդլիայում։

Առհասարակ հին հասարակության ներքին բաղխումները հաճախ նպաստում են պրոլետարիատի զարգացման ընթացքին։ Բուրժուազիան անընդհատ պայքարի մեջ ե, սկզբում—ազնվականության դեմ, ավելի ուշ ընդդեմ նույն բուրժուազիալի մի մասի, վորի շահերին հակառամ և ինդուստրիի առաջխաղացումը և մշտապես—ընդդեմ ուսար յերկիրների բուրժուազիային։ Այդ բոլոր պայքարների միջոցին նա հարկադրված ելինում դիմել պրոլետարիատին, նրա ոգնությունը հայցել և դրանով նրան քաղաքական շարժմանը մասնակից անել։ Այդպիսով նա ինքն ե իր սեփական կրթության տարրերը հաղորդում պրոլետարիատին, այսինքն՝ զենք տալիս ինքն իր դեմ։

Այնունետեւ, ինչպես մենք տեսանք, ինդուստրիի առաջխաղացումը նետում ե իշխող դասակարգի ամբողջ մասնիկները պրոլետարիատի ծոցը, կամ առնվազն սպառնում նրանց գոյու-

թյան ը։ Դրանք ել են պրոլետարիատի մեջ կը թության բաղմաթիվ տարրեր մտցնում։

Վերջապես, յերբ դասակարգային պայքարը մերձենում ե իր վճռական վայրկյանին, իշխող դասակարգի մեջ, ամբողջ հին հասարակության մեջ, քայլայման պրոցեսը այնպիսի սաստիկ ու սուր բնույթ ե ստանում, վոր տիրապետող դասակարգի մի փոքր մասն անջատվում ե նրանից և միանում հեղափոխական դասակարգին, այն դասակարգին, վոր իր ձեռքին ե կրում ապագան։ Յեվ ինչպես առաջներում ազնվականության մի մասը բուրժուազիայի կողմն անցավ, այնպես ել այժմ բուրժուազիայի մի մասը պրոլետարիատի կողմն ե անցնում, մանավանդ բուրժուական գաղափարախոսների մի մասը, վոր հասել ե հասարակական ամբողջ շարժման տեսական ըմբռնումին։ Բուրժուազիայի դեմ այսոր դեմ առ դեմ կանգնած բոլոր դասակարգերից միմիայն պրոլետարիատն ե իրոք հեղափոխական դասակարգը։ Մնացյալ դասակարգերը քայլայվում են ու կործանվում խոշոր ինդուստրիից, իսկ պրոլետարիատը հենց սրա սեփական արտադրությունն ե։

Միջին դասակարգերը—մանը արդյունագործողները, մանը առեվտրականը, արհեստավորը, գյուղացին—բոլորն ել մաքառում են բուրժուազիայի դեմ, վորպեսզի իրենց գոյությունը, իրեւեվ միջին դասակարգերի—կործանումից ապահովեն։ Ուստի նրանք հեղափոխական չեն այլ

պահպանողական։ Դեռ ավելին. նրանք յետագի-
դիմականներ են, նրանք ուզում են պատմության
անիվը յետ շրջել։ Յեթե նրանք հեղափոխական
են—ապա միայն նրանց սպասող պրոլետարացման
նկատումով, և այդ գեպքում նրանք վոչ թե իրենց
ներկա, այլ ապագա շահերն են պաշտպանում,
նրանք թողնում են իրենց սեփական հայեցա-
կետը, պրոլետարականի վրա կանգնելու համար։

Կումպենպըոլետարիատը հին հասարակության ամենախոնարհ խավերի կրավորական նեխվածքը, շնորհիվ պրոլետարական հեղափոխության, տեղ-տեղ շպրտվում ե շարժման մեջ, թեյեվ նրա կյանքի բոլոր պայմանները արամագրվում են նրան ավելի շուտ վաճառվել յետադիմականներին:

Հին հասարակության կյանքի պայմաններն
այլի վա պրոլետարիատի կենցաղից չքացել են։
Պրոլետարիատը սեփականազուրկ է։ Նրա հարա-
բերությունը դեպի կինն ու յերեխաները վոչն-
չով նման չեն բուրժուական ընտանեկան հա-
րաբերություններին։ Արդի ինդուստրային աշխա-
տանքը, կապիտալի լուծը, Անգլիայում նույնն
ե, ինչ վոր Ֆրանսիայում, Ամերիկայում նույնը,
ինչ Գերմանիայում, — բանվորների բոլոր ազգա-
յին գծերը ջնջում են։ Որենքները, բարոյակա-
նություն, կրոնը նրա համար նույնն են, ինչ վոր
բազմաթիվ բուրժուական նախապաշարմունքներ,
վորոնց յետելը նույնչափ բազմաթիվ բուրժուա-
կան շահեր են թագնված։

Առաջներում բոլոր դասակարգերը, վոր տի-
րապետություն եյին նվաճում, աշխատում եյին
իրենց գրաված կենսական զիրքը ապահովել, միա-
ժամանակ վողջ հասարակությունը յենթարկ-
վում եյին իրենց շահվելու պայմաններին։
Պրոլետարները կարող են հասարակական ար-
տագիր ուժեր նվաճել միմիայն միաժամա-
նակ վերացնելով իրենց սեփական մինչ այդ
շահվելու յեղանակը։ Պրոլետարներն ապահովե-
լու բան չունեն, նրանք գալիս են փշրելու մին-
չայժմյան մասնավոր ապահովությունն ու մա-
նափոր ապահովումը։

Մինչայժմյան բոլոր շարժումները փոքրա-
մասնությունների շարժումներ են յեղել կամ՝ հո-
գուտ փոքրամասնության։ Պրոլետարական շար-
ժումը վիթխարի մեծամասնության ինքնուրույն
շարժումն է, հոգուտ վիթխարի մեծամասնու-
թյան։ Պրոլետարիատը, արդի հասարակության
ամենաներքին շերտը, ինքն իրեն չի կարող բար-
ձրացնել, զգել, առանց ողբ ցնդեցնելու պաշ-
տոնական հասարակություն կազմող վերին շեր-
տը, վերնահարկը։

Պըոլետարիխատի պայքարը բուրժուազիայի
դեմ թեյեվ գոչ ըստ բովանդակության, ըստ ձեվի,
նախ և առաջ ազգային պայքար եւ Յուրաքան-
չյուր յերկրի պըոլետարիխատ բնականաբար, նախ
իր սեփական բուրժուազիայի հախիցը պիտի գա:
Նկարելով պըոլետարիխատի զարգացման ամե-
նաընդհանուր փուլերը՝ մենք հետեւեցինք դո-

յություն ունեցող հասարակության մեջ ավել կամ պակաս թագնված քաղաքական կուլին մինչեվ այն կետը, յերբ բացահայտ հեղափոխություն ե բռնկում և բուրժուազիայի վրա ուժգնորեն դրոհ տալով՝ պրոլետարիատը իր տիրապետությունն ե հաստատում։

Մինչայժմյան բոլոր հասարակությունները, ինչպես մենք տեսանք, ճնշված և ճնշող դասակարգերի ներհակության վրա են հիմնված յեղել։ Սակայն վորապեսղի հնարավոր լինի մի դասակարգ ճնշելու, պետք ե վոր ապահովված լինեն այն պայմանները, վորոնց մեջ այդ դասակարգն առնը-վագն իր ստրկական գոյությունը կարողանա քաշ տալ։ Ճորտատիրության պահուն ճորտից կարող եր կոմունի անդամ դուրս գալ, ինչպես քաղքենիներից — բուրժուատ, ավատ-աբսոլյուտական լծի տակ։ Ըսդհակառակը՝ արդի բանվորը, ինդուստրի առաջ-խաղացման հետ, փոխանակ բարձրանալու, շարու-նակ իր դասակարգի գոյության պայմաններից ցած ե իջնում։ Բանվորը մուրացկան ե դառնում, և աղքատությունը ազգաբնակությունից ու հարս-տությունից ավելի արագ ե աճում։ Այսպիսով բա-ցահայտ ե դառնում, վոր բուրժուազիան այլիքս անընդունակ ե յերկար ժամանակ հասարակու-թյան տիրապետող դասակարգը մնալու և իր դասակարգի կենսական պայմանները փաթաթե-լու հասարակության վզին, իբրեւ դե կավար որենք։ Նա անընդունակ ե իշխելու, վորովհետեւ անընդունակ ե իր ստրուկներին ան գամ ստրկա-

կան գոյություն ապահովելու, վորովհետեւ հար-կադրված ե նրանց այնպիսի դրության հաս-ցնելու, վոր ի՞նքը պիտի նրանց կերակրի, փո-խանակ նրանց միջոցով կերակրվելու։ Հասարա-կությունը այլիքս չի կարող նրա տիրապետու-թյան ներքո ապրել, այսինքն՝ նրա կյանքը հա-սարակության կյանքի հետ այլիքս դաշնակվել-չի կարող։ Բուրժուազիայի գոյության և տիրա-պետության ամենաեական պայմանն ե՝ հարս-տության հավաքումը մասնավոր ձեռքերում, կա-պիտալի գոյացումն ու բազմացումը։ Կապիտալի գոյության պայմանը՝ վարձու աշխատանքն ե։ Վարձու աշխատանքը բացառապես հիմնված ե բանվորների փոխադարձ մրցման վրա։ Խոդուս-տրիի առաջադիմությունը, վորի հլու և կամա-զուրկ կրողը բուրժուազիան ե, մրցումով իրարից զատված բանվորների տեղը — միությունների մի-ջոցով շաղկապված բանվորների հեղափոխական կազմակերպություններ ե զնում։ Այսպիսով՝ խո-շոր ինգուստրիի զարգացման հետ, բուրժուազիա-յի վոտերի տակից դռւու ե գալիս այն հողը, վորի վրա նա արտադրում ե յուրացնում պրոդուկտ-ները, նա նախ և առաջ իր սեփական գերեզ-մանափորներին ե արտադրում։ Նրա կործանու-մը և պրոլետարիատի հաղթանակը — հավասարա-չափ անխուսափելի յեն։

II

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ՅԵՎ ԿՈՄՊՈՒՆԻՍՏՆԵՐ

Ի՞նչ գիրք են բռնում կոմունիստները դեպի պրոլետարիատն ընդհանրապես:

Կոմունիստները մի առանձին կուսակցություն չեն, կազմում բանվորական այլ կուսակցությունների հանդեպ:

Նրանք բովանդակ պրոլետարիատի շահերից զատ շահեր չունեն:

Նրանք չեն առաջադրում ուրույն սկզբունքներ, վորոնց համեմատ կամենային կաղապարել բանվորական շարժումը:

Կոմունիստները նրանով են տարբերվում այլ պրոլետարական կուսակցություններից, վոր մի կողմից՝ պրոլետարների պես-պես ազգային պայքարների միջոցին նրանք բովանդակ պրոլետարիատի ընդհանուր, ազգությունից անկախ շահերն են առաջ քաշում ու պաշտպանում, մյուս կողմից՝ զարգացման զանազան աստիճանների վրա, վորոնցով ընթանում է պայքարը պրոլետարիատի և բորժուազիայի միջեվ, նրանք միշտ շարժման ամբողջական շահերն են ներկայացնում:

Հետեւաբար կոմունիստները գործնականու-

րեն բոլոր յերկրների բանվորական կուսակցությունների ամենավճռական, շարունակ առաջ ձգտող մասն են: Պրոլետարիատի մնացյալ զանգվածի հանդեպ նրանց առավելությունն այն է, վոր տեսականորեն ըմբռնում են պրոլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետեւանքները:

Կոմունիստների մերձագույն նպատակը նույն է, ինչ վոր բոլոր մնացյալ պրոլետարական կուսակցություններինը՝ պրոլետարիատի կազմակերպութիւններինը՝ պատճեն դասակարգի, բուրժուական տիրապետության խորտակումը, քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի միջոցով:

Կոմունիստների տեսական դրությունները բնավ չեն հիմնվում այս կամ այն աշխարհս բարեկազդի հսարած կամ հայտնագործած գաղափարների, սկզբունքների վրա:

Գոյություն ունեցող դասակարգային պայքարի վասացի հարաբերությունների, մեր աշքի առջեվ կատարվող պատմական շարժման լոկ ընդհանուր արտահայտությունն են նրաք: Մինչ չայգմյան սեփականատիրական հարաբերությունների վերացումը կոմունիզմի համար հատկապես բնորոշ բան չեւ:

Բոլոր սեփականատիրական հարաբերությունները յենթարկվել են մշտական պատմական փոփոխման, մշտական պատմական այլակերպման:

Ֆրանսիական հեղափոխությունն, որինակ,

վերացրեց ավատական սեփականությունը հոգուտ բուրժուականի:

Կոմոնիստների համար բնորոշն ընդհանրապես սեփականության վերացումը չի, այլ բուրժուական սեփականության վերացումը:

Սակայն արդի բուրժուական մասնավոր սեփականությունը վերջին և ամենակատարյալ արտահայտությունն ե պրոդուկտների արտադրության և յուրացման այն յեղանակի, վոր հիմնված ե դասակարգային ներհակության վրա, յերբ վոմանք շահագործում են մյուսներին:

Այդ առումով կոմոնիստներն իրենց տեսությունը կարող են ամփոփել մի արտահայտության մեջ, մասնավոր սեփականության վերացում:

Կոմոնիստներիս վրա մեղադրանք են բարդում, իբր թե մենք ուզում ենք անձամբ վաստակած, սեփական աշխատանքով ձեռք բերված սեփականությունը վերացնել, վոր ամեն անհատական աղատության, գործունեության և անկախության հիմքն ե:

Աշխատա՝ծ, վաստակա՝ծ, անձա՝մբ շահա՝ծ սեփականություն։ Մանր բուրժուաների, մանր գյուղացիների, սեփականությունից եք խոսում դուք, վոր նախորդել ե բուրժուական սեփականության։ Հարկ չկա, վոր մենք վերացնենք, քանի վոր ինդուստրիի զարգացումն ե վերացրել և որըստորե վերացնում այն։

Գուցե թե արդի բուրժուաների՝ մասնավոր սեփականությունից եք խոսում դուք։

Սակայն արդյե՛ռք նրանց համար սեփականությունն ե ստեղծում վարձու աշխատանքը, պրոլետարիատի աշխատանքը։

Յերբե՛ք Նա կապիտալ ե ստեղծում, այսինքըն՝ սեփականությունն, վոր շահագործում ե վարձու աշխատանքը, վոր կարող ե աճել, պայմանով, վոր նոր վարձու աշխատանք արտադրի, նորից նրան շահագործելու համար։ Սեփականությունը իր այսորվա կերպարանքով կապիտալի և վարձու աշխատանքի ներհակության մեջ ե շարժվում։ Զննենք, ուրեմն այդ ներհակության յերկու կողմն ել։

Կապիտալիստ լինել, կնշանակի արտադրության մեջ վո՞չ միայն զուտ անհատական, այլև հասարակական դիրք գրավել։ Կապիտալը հավաքական արտադրությունն ե և կարող ե շարժման մեջ լինել միմիայն բազմաթիվ անդամների գործակցությամբ, թերյեվս վերջ ի վերջո հասարակության բոլոր անդամների միասնական գործունեությամբ։

Ուրեմն կապիտալը վոչ թե անհատական, այլ հասարակական ույժ ե։

Հետեվաբար, յերբ վոր կապիտալը կերպարանափոխվի, հավաքական, հասարակության բոլոր անդամներին պատկան սեփականություն դառնա, դրանից անհատական սեփականությունը՝ հասարակական չի դառնա։ Սեփականությունը կփոխի լոկ իր հասարակական բնույթը։ Նա կկորցնի իր դասակարգային բնավորությունը։

Դառնանք վարձու աշխատանքին:
 Վարձու աշխատանքի միջին գինը — աշխատավարձի մինիմումն ե, այսինքն՝ կենսական միջների գումարը, վոր անհրաժեշտ ե, վորպեսզի բանվորն, իբրեւ բանվոր, կարողանա իր կյանքը պահպանել: Հետեւաբար բանվորի իր գործունեությամբ սեփականածը հերիք ե լոկ իր մերկ կյանքը վերարտադրելու համար: Մենք բնագիտների կամենում վերացնել աշխատանքների պլոդուկտների այս անհատական սեփականացում՝ կյանքը պահպանելու և վերարտադրելու համար. այդ սեփականացումը վոչինչ զուտ արդյունք չի բերում, վոր ոտարի աշխատանքին տիրանալու հսարավորություն տար: Մենք լոկ կամենում ենք վերացնել այդ սեփականության թշվառական բնույթը, ըստ վորում բանվորն ապրում ե կապիտալը բազմապատկելու համար և ապրում ե այնքան ժամանակ, վորքան պահանջում ե տիրող դասակարգի շահը:

Բուրժուական հասարակության մեջ կենդանի աշխատանքը — գանձած աշխատանք բազմապատկելու միջոց ե լոկ: Կոմունիստական հասարակության մեջ — գանձած աշխատանքը սոսկ մի միջոց ե բանվորների կյանքն ընդլայնելու, հարստացնելու, նրա առաջադիմությանը զարկ տալու:

Բուրժուական հասարակության մեջ, այդպիսով, անցյալն ե իշխում ներկայի վրա, կոմունիստականում — ներկան անցյալի վրա: Բուրժուական հասարակության մեջ կապիտալն է ան-

կախ և անհատական, մինչդեռ գործունյա անհատը կախման մեջ ե և դիմազուրկ:

Յեվ անա այդ հարաբերության վերացումը բուրժուազիան անհատականության և ազատության վերացում ե անվանում: Արդարեւ, խոսքը համենայն դեպք բուրժուական անհատականության, անկախության և ազատության վերացման մասին ե:

Ազատություն ասածդ հիմիկվա բուրժուական արտադրության հարաբերությունների մեջ: հասկանում են իբրեւ ազատ առեվտուր, գնելու և վաճառելու ազատություն:

Սակայն չարչիության անկան դեպքում, ազատ չարչիությունն ել կընկնի: Գեղեցիկ ճառաբերը չարչիության ազատության մասին, ինչպես մեր բուրժուազիայի բոլոր ուրիշ ազատագրական ճոռամարանությունները, ընդհանրապես իմաստ ունեն, յերբ ուղղված են միջնադարյան քաղաքացիների ստրկացման դեմ և դարյան քաղաքացիների ստրկացման դեմ և վոչ թե չարչիության, ուղղված են ընդդեմ կամանդված չարչիության, բուրժուական արտադրության հարաբերությունների և ի՞ր իսկ բուրժուազիայի կոմունիստական վերացումի դեմ:

Դուք սարսափում եք նրանից, վոր մենք կամենում ենք մասնավոր սեփականությունը վերացնել: Սակայն ձեր հասարակության մեջ մասնավոր սեփականությունն անդամների ինը մասնավոր սեփականությունն անդամների ինը մասնավոր սեփականությունը գոյություն ունի հենց

այն պատճառով, վոր հասարակության իննը տասներորդականի համար գոյություն չունի։ Այսպիսով՝ մեղաղրում եք մեզ, թե մենք ուղում ենք վերացնել սեփականության մի ձեվ, վոր կարող ե գոյություն ունենալ միմիայն հասարակության ճնշող մեծամասնության սեփականազուրկ լինելու անհրաժեշտ նախապայմանով։

Մի խոսքով, դուք մեզ մեղաղրում եք, թե մենք ուղում ենք ձեր սեփականությունը վերացնել։ Անշուշտ մենք այդ կամենում ենք։

Այն վայրկյանից, յերբ աշխատանքը այլեւս չի վերածվի կապիտալի, փողի, հողային ռենթի, կարճ՝ մենաշնորհ դառնալիք հասարակական ույժի, այսինքն՝ այն վայրկյանից, յերբ անձնական սեփականությունն այլեւս անկարելի լինի բուրժուականի կերպարանափոխել, այն վայրկյանից, հայտարարում եք դուք, անձնափորությունն ել կվերանա։

Ուրեմն դուք խոստովանում եք, վոր անձնափորություն ասելով դուք ուրիշ վոչ վոք չեք ըմբռնում, այլ յեթե բուրժուա, բուրժուական սեփականատեր։ Այդ անձնափորությունն ել, անտարակույս, պիտի վերանա։

Կոմունիզմը հասարակական պրոդուկտները սեփականելու կարողությունից վոչ վոքի չի զրկում, նա լոկ սեփականացման միջոցով ուրիշի աշխատանքը լծի տակ դնելու կարողությունից ե զրկում։

Առարկում են՝ թե մասնավոր սեփականության վերացումով կվերանա ամեն մի գործունեություն և համատարած ծուլություն կհաստատվի։

Վոր այդպես լիներ, բուրժուական հասարակությունը վաղուց հետեւ կործանված կլիներ հեղգությունից, վորովհետեւ նրանք, վորոնք աշխատում են այդ հասարակության մեջ, բան չեն վաստակում, իսկ ովքեր վոր վաստակում են, չեն աշխատում։ Այս ամբողջ տարակուսանքը մի նույնասությունից ե բղխում, հենց վոր վարձու աշխատանքը չլինի—կապիտալ ել չի լինի։

Բոլոր առարկությունները, վոր ուղղում են նյութական պրոդուկտների սեփականացման և արտադրության յեղանակի դեմ, տարածվում են նմանապես հոգեվոր արգասիքների սեփականացման և արտադրության վրա։ Խնչպես դասակարգային սեփականության վերացումը բուրժուաների համար հենց արտադրության վերացում ե նշանակում, այնպես ել դասակարգային կրթության վերացումը—ընդհանրապես կրթության վերացում ե թվում նրանց։

Կրթությունը, վորի կրթայան համար նրանք ցավում են, ազգաբնակության ահազին մեծամասնության համար մեքենայացում ե նշանակում։

Ել միք վիճի մեզ հետ, քանի վոր բուրժուական սեփականության վերացումը դուք գնահատում եք ազատության, կրթության, ի-

բավունքի մասին ձեր ունեցած պատկերացումներով։ Ձեր գաղափարները հենց արտադրության և սեփականատիրության բուրժուական հարաբերությունների արդյունք են, ճիշտ այնպես, ինչպես ձեր իրավունքը ձեր դասակարգի որենք դարձած կամքն ե, մի կամք, վորի բովանդակությունը ձեր դասակարգի կյանքի նյութական պայմանների մեջ և տրված։

Այս աշառու պատկերացումը, ըստ վորում դուք ձեր պատմականորեն զարգացած և արտադրական պլոցեսի զարգացման ընթացքում փոփոխող արտադրության և սեփականատիրական հարաբերությունները բնության ու բանականության մշտնջենավոր որենք եք դարձնում։ Հատուկ ե բոլոր խորտակված իշխող դասակարգերն։ Այս, ինչ հասկանալի ե ձեր հնադարյան սեփականության, ավատական սեփականության նկատմամբ, դուք չեք կամենում ըմբռնել բուժուական սեփականության վերաբերմամբ։

Ընտանիքի վերացում։ Ամենաարմատականներն անդամ վրգովիում են կոմունիստների այս խայտառակ մտադրությունից։

Սակայն ինչի՞ վրա ե հիմնվում արդի բուժուական ընտանիքը, կապիտալի, մասնավոր շահի վրա։ Լիակատար զարգացած ձեզով այդ ընտանիքը գույություն ունի սոսկ բուրժուազիայի համար։ Սակայն բուրժուական ընտանիքի լրացումը պլողետարիատի հարկադրված ամուրիությունն ե և հրապարակային պունկությունը։

Բուրժուական ընտանիքը բնականաբար կանհետանա նրա այս լրացումների անհետացումով և յերկուսն ել կանհետանա կապիտալի անհետացման հետ։

Մեղաղրում եք դուք մեզ, վոր մենք ուղում ենք վերացնել մանուկների շահագործումներենց ծնողների միջոցով։ Մենք մեր այդ հանցանքը խոստովանում ենք։

Սակայն, ձեր ասելով, մենք վերացնում ենք ամենաքնքույշ հարաբերությունները, յերբ տնային դաստյարակության տեղը—հասարակականն ենք դնում։

Միթե ձեր դաստիարակությունը նույնպես հասարակությունը չի վորոշում հասարակական այն հարաբերությունների միջոցով, վորոնց մեջ դուք դաստյարակում եք, հասարակության ուղղակի և անուղղակի միջամտությամբ, դպրոցի միջոցով և այլն։ Կոմունիստները չեն հնարում հասարակության ներգործությունը դաստյարակության մեջ։ Նրանք միայն փոփոխում են այդ ներգործության բնույթը։ Նրանք պոկում են դաստյարակության գործը տիրող դասակարգի ազգեցությունից։

Բուրժուական ճոռոմբանությունն ընտանիքի մասին և դաստյարակության, ծնողների ու զավակների քնքույշ հարաբերությունների մասին այնքան ավելի յեն զզվելի դառնում, վորքան խոշոր ինդուստրիալ շնորհիվ պլողետարիաների հախողությունիվ պլողետարիաների համար բոլոր ընտանեկան կապերը քակվում են,

և նրանց զավակները առեվտրի հասարակ առարկաների և աշխատանքի գործիքների յեն վերածվում:

Սակայն դուք, կոմոնիստներդ, համայնակնությունն եք ուղղում մտցնել, աղաղակում և միաբերան վողջ բուրժուազիան:

Բուրժուան իր կնոջը նկատում ե իբրեւ արտադրության սոսկ գործիքը: Նա լսում ե, վոր արտադրության գործիքները պիտի համայնքեն շահագործվեն և բնականաբար չի կարող այլ միաք անել, քան համայնացման վիճակը նայեվ կանանց ե վերաբերվելու:

Նրա մտքովը չի անցնում, թե բանն ել հենց այն ե, վոր կնոջ դիրքը, իբրեւ արտադրության սոսկ գործիքի, վերանա:

Ասենք, ավելի ծիծաղելի բան չկա, քան մեր բուրժուաների բարձր բարոյական սարսափը կոմոնիստների կարծեցյալ կանանց համայնացումի առիթով, կոմոնիստները կարիք չունին կանանց համայնացում մտցնելու, նա համարյա թե միշտ գոյություն ե ունեցել:

Մեր բուրժուաները, չբավականանալով նրանով, վոր նրանց տրամադրության ներքո յեն իրենց պրոլետարների կանայք ու աղջիկները, ել շխոսենք պաշտոնական պոռնկության մասին, մեծ բավականություն են գտնում իրենց ամուսիններին փոխագաճաբար գայթակղեցնելու մեջ:

Բուրժուական ամուսնությունն իրոք—համայնակնություն ե: Ամենաշատը՝ կարելի յեր

կոմոնիստներին մեղաղրել, վոր կեղծավոր քողարկած համայնակնության տեղը—բաց համայնակնություն են ուղղում մտցնել: Թեյեվ ինքնին հասկանալի ե, վոր հիմիկվա արտադրական հարաբերությունների վերացումով, կանհետանա նայեվ նրանցից բղխող համայնակնությունը, այսինքն՝ պաշտոնական և վոչ պաշտոնական պոռնկությունը:

Ապա՝ կոմոնիստներին մեղաղրում են, իբր թե նրանք ուղղում են վերացնել հայրենիքը, աղգությունը:

Բանվորները հայրենիք չունեն: Զի կարելի նրանցից խլել այն, ինչ վոր նրանք չունեն: Քանի պրոլետարիատը հարկադրված ե նախ քավոր պրոլետարիատը հարկադրված ե նախանություն նվաճելու, բարձրացնելու իր գլուխը, վորպես աղգային դասակարգ, կազմակերպելու ինքն իրեն, իբրեւ ազգ—նա տակավին աղգային ե, թեյեվ վոչ մի դեպքում բուրժուական իմաստով:

Արդեն բուրժուազիայի զարգացման հետ, առեվտրի աղատության, համաշխարհային շուկայի, ինդուստրիական արտադրության միակերպության և նրան համապատասխան կենսական հարաբերությունների հետ քանի գնում ավելի յեանհետանում աղգային մեկուսացումը և ներհակությունը ժողովուրդների միջեվ:

Պրոլետարիատի տիրապետությունն ավելի յեվս անհետացնել կտա նրանց: Նրա աղատագըրման առաջնագույն պայմաններից մեկն ե—առ-

նվազն քաղաքակիրթ յերկիրների պրոլետարիատի միահամուռ գործակցությունը:

Ինչ չափով կվերանա մի անհատի շահագործումը մյուսի միջոցով—կվերանա նայել մի ազգի շահագործումը մյուսի միջոցով:

Դասակարգերի ներհակության անկման հետ մի ազգության մեջ—կվերանա նայել ազգերի թշնամական դիրքը իրար դեմ:

Կրոնական, փիլիսոփայական և ընդհանրապես գաղափարաբանական տեսակետից կոմունիզմի դեմ հարուցած մեղադրանքները չարժեն մանրամասն քննության:

Մի՞թե խոր միտք և հարկավոր ըմբռնելու համար, վոր մարդկանց կենսական պայմանների հետ, նրանց հասարակական հարաբերությունների հետ, նրանց հասարակական գոյության հետ փոխվում են նայել նրանց մտապատկերները, հայցքները և հասկացողությունները, մի խոսքով նրանց վողջ գիտակցությունը:

Գաղափարների պատմությունը ի՞նչ և ապացուցանում, յեթե վոչ այն, թե հոգեվոր արտադրությունը կերպարանափոխվում և նյութականի հետ, Վոր և ե ժամանակի իշխող գաղափարները միշտ տիրապետող դասակարգի գաղափարներն են յեղել:

Ասում են՝ կան գաղափարներ, վոր մի ամբողջ հասարակություն են նեղափոխում: Դրանով լոկ այն փաստն են արտահայտում, թե հին հասարակության մեջ նոր տարրեր են գոյացել,

վոր կենսական հին հարաբերությունների լուծմանը քայլ առ քայլ հին գաղափարների լուծումն են հետեվում:

Յերբ վոր հին աշխարհը մոտ եր կործանման, քրիստոնեական կրօնը հաղթեց հին կրօնները: Յերբ վոր 18-րորդ դարում լուսավորության գաղափարները վաճացին քրիստոնեական գաղափարը, ավատական հասարակությունը իր որհասական մահու պայքարն եր մզում այն ատեն հեղափոխական բուրժուազիայի դեմ: Խղճի և դավանանքի ազատության գաղափարները արտահայտում են սոսկ ազատ մըցումի տիրապետությունը գիտության ասպարիզում:

«Սակայն կրօնական, բարոյական, փիլիսոփայական, քաղաքական, իրավական և այլ գաղափարները,—կասեն մեզ,—ճիշտ ե, փոփոխության են յենթարկվում պատմական զարգացման ընթացքում, բայց կրօնը, բարոյականությունը, փիլիսոփայությունը, քաղաքականությունը, իրավունքը միշտ այդ փոփոխությունների մեջ պահպանվել են:

«Բացի այդ հավերժական ձշմարտություններ կան, ինչպես՝ ազատությունը, արդարությունը և այլն, վոր ընդհանուր են պատմական բոլոր վիճակներին: Իսկ կոմունիզմը, կերպարանափոխելու փոխարեն վերացնում ե հավիտենական ձշմարտությունները, վերացնում ե կրօնը, բարոյականությունը և այդպիսով հակասում մինչայժմյան պատմական իրադարձությանը»:

Խնչի՞ ե հանգում այդ մեղադրանքը։ Մինչ-
այժմյան հասարակության վողջ պատմությունը
շարժվել ե դասակարգային ներհակությունների
մեջ, վոր տարբեր ժամանակաշրջաններում տար-
բեր կերպարանք են ունեցել։

Սակայն ի՞նչ ձեվ ել վոր ընդունել ե, հա-
սարակության մի մասի շահագործումը մյուսի
միջոցով բոլոր անցած դարերի համար—ընդհա-
նուր փաստ ե։ Ուստի և զարմանալի չե, վոր բո-
լոր դարերի հասարակական գիտակցությունը,
չնայած բազմապիսության և զանազանություննե-
րի շարժվել ե վորոշ ընդհանուր ձեվերով, գիտակ-
ցության այն ձեվերի մեջ, վոր վերջնականապես
կվերանա միայն դասակարգային ներհակության
լիակատար վերացումով։

Կոմունիստական հեղափոխությունն ամե-
նաարմատական կերպով պիտի խզի սեփականա-
տիրական ավանդական հարաբերությունների հետ
յեղած կապերը։ Զարմանալի չե, վոր նրա զար-
գացման ընթացքում ամենաարմատական կեր-
պով պիտի քակվեն ավանդական գաղտփարների
կապերը։

Սակայն թողնե՞նք բուրժուազիայի կոմու-
նիզմի դեմ արած առարկությունները։

Մենք արգեն վերը տեսանք, վոր բանվորա-
կան հեղափոխության առաջին քայլը—պըոլետա-
րիատին բարձրացնելը, իշխող դասակարգի հաս-
ցնելը—դեմոկրատիայի նվաճումն ե։

Պոլետարիատն իր քաղաքական իշխանու-

թյունը կոգտագործի աստիճանաբար բուրժուա-
զիայից նրա վողջ կապիտալը խլելու, արտա-
դրական բոլոր գործիքները պետության ձեռքում,
այսինքն՝ իշխող դասակարգ դառած, կազմակերպ-
ված պըոլետարիատի ձեռքում կենտրոնացնելու
և արտադիր ուժերն ըստ կարելույն արագ կեր-
պով բազմապատկելու համար։

Սկզբում դա, բնականաբար, կարող ե տեղի
ունենալ միմիայն բռնի միջամտությամբ սեփա-
կանատիրական իրավունքի և արտադրության
բուրժուական հարաբերությունների մեջ, հետե-
վաբար այնպիսի միջոցներով, վոր տնտեսապես
անբավարար և խախուտ կթվան և վոր սակայն
շարժման ընթացքում իրենք իրենց հաղթահարե-
լով անխուսափելիորեն վողջ արտադրական յե-
ղանակի հեղաշրջման միջոց են դառնալու։

Այդ միջոցները, ի հարկի, տարբեր յիրկեր-
ներում—տարբեն են լինելու։

Այնու հանդերձ, ամենաառաջադեմ յերկեր-
ներում գրեթե ամենուրեք կարող են կիրարկվել
հետվյալ միջոցները։

1) Հողային սեփականության եքսպրոպրիա-
ցիա և հողային ոենթի գործադրությունը պետա-
կան ծախսերի վրա։

2) Ուժեղ պլողպեսիվ հարկեր։

3) Ժառանգային իրավունքի վերացում։

4) Բոլոր եմիգրանտների և ըմբոստների սե-
փականության գրավումը։

5) Վարկի կենտրոնացնում պետության ձեռ-

քում, պետական կապիտալ և բացառիկ մենաշնորհ ունեցող ազգային բանկի միջոցով:

6) Փոխադրության գործի կենտրոնացում պետության ձեռքում:

7) Պետական գործարանների, արտադրության գործիքների բազմապատկում, հողի մշակում և բարելավում ընդհանուր ծրագրով:

8) Հավասարապես պարտադիր աշխատանք բոլորի համար, ինգուստրային զորաբանակի կազմակերպում, մանավանդ յերկրագործության համար:

9) Գյուղատնտեսության և ինգուստրի բնագավառների միացում: Նպաստում քաղաքի և գյուղի աարբերության աստիճանական վերացման:

10) Բոլոր մանուկների հասարակական և ձերի կրթություն: Մանուկների գործարանային աշխատանքի այսորվա ձեվի վերացում: Կրթության և նյութական արտադրության միացում և այլն:

Հենց վոր զարգացման ընթացքում անհետանան դասակարգային տարբերությունները և բոլոր արտադրությունները կենտրոնահան համախմբված անհատների ձեռքում—հասարակական իշխանությունը կկորցնի իր քաղաքական բնույթը: Քաղաքական իշխանությունը, բուն իմաստով, մի դասակարգի կազմակերպված իշխանությունն ե մյուսին ճնշելու համար: Յերբ վոր պրոլետարիատը բուրժուազիայի դեմ վարած պայքարի ընթացքում անհրաժեշտաբար միանա,

վորպես դասակարգ, հեղափոխության միջոցով տիրապետող դասակարգ դանա և, վորպես տիրապետող դասակարգ, բռնի կերպով վերացնի արտադրության հին հարաբերությունները, արտադրության այդ հարաբերությունների հետ կվերանան նայել դասակարգային ներհակության գոյության պայմանները, ընդհանրապես դասակարգերը և դրանով նայել իր սեփական տիրապետությունը, իրեն դասակարգի:

Հին բուրժուական հասարակության տեղը, իր դասակարգերով և դասակարգային ներհակությամբ, կբռնի մի միություն, վորի մեջ յուրաքանչյուր վոքի ազատ զարգացումը պայման կիրակի բոլորի՝ ազատ զարգացման:

III

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 ՅԵՏԱԴԻՄԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

ա) Ավատական սոցքայից

Ֆրանսիական և անգլիական ազնվականությունը, իր պատմական դիրքով, կոչված եր արդի բուրժուազիայի դեմ պամֆլետներ գրելու: Ֆրանսիական 1830-ա թվի Հուլիսյան հեղափոխության միջոցին և անգլիական վերանորոգչական շարժման ժամանակ նա իր ատելի նորելուկ-հակառակորդներից մի նոր ջարդ ել կրեց: Վորև և ե լուրջ քաղաքական պայքարի մասին խոսք լինել այլյեվս չեր կարող: Մնացել եր սոսկ գրական պայքարը: Սակայն գրական ասպարիզում ել ուստավրացիայի շրջանի վոճարանությունն անհնար եր դառել*: Համակրություն գրավելու համար ազնվականությունը հարկադրված եր իր շահերն աչքաթող անելու ձեվ անել և իր մե դադրական թուղթը բուրժուազիայի դեմ բան աճեվել լոկ շահագործվող բանվոր դասակարգի շահերի տեսակետից: Նա իր նոր տերերի վրա պարագաները եր յերգում, ամեւ եամ ասեաս

* Խոսքը վրա թե անգլիական ռեստորացիայի (1660—1689), այլ ֆրանսիականի (1814—1831) մասին եւ: (Ենդեւսի ծանոթության մեջ:)

բոթաբեր մարդարեռւթյուններ շշնջում նրա ա-
կանցին և դրանով մխիթարվում:

Այդպես ե ավատական սոցիալիզմի ծագումը—կես—վողբ, —կես—պատկվել, կես—անցյալի արձագանք, կես—գալիք սպառնանք։ Յերբեմն դառը, սրամիտ, կծու դատողություններով բուրժուազիայի սիրտը դաղելով, ազնվականությունն արդի պատմության ընթացքն ըմբռնելու իր կատարյալ անկարողությամբ միշտ զավեշտական տպագրություն ե գործել։

Ազնվականները թափահարում եիին պրոլետարական մուշտացկանի տոպղակը, վորպես դըռշակ, իրենց յետեվից ժողովուրդ հավաքելու համար։ Սակայն ամեն անգամ նրանց հետեվիլիս՝ ժողովուրդը նրանց մեջքին հին ավատական տոհմանիշներ և նկատել և բարձրածայն ու անսպասեառ հոհոսոցով լքել նրանց։

Գառ հուսոցով լքում է և մի մասը և
Ֆրանսիական լեզվի միատների մի մասը և
յերիտասարդ Անգլիան ամենից լավ են ներկա-
յացրել այդ խաղը:

Յացրու այդ լավը,
Յերբ վոր ավատատերերին ապացուցանում
են, թե իրենց շահագործումը այլ կերպ ե յեղել,
քան բուրժուականը, նրանք փոքր ինչ մոռանում
են, վոր իրենք շահագործելիս են յեղել միանգա-
մայն տարբեր և հիմի անհետացած պայմաննե-
րում ու պարագաներում։ Յերբ վոր նրանք մատ-
նանիշ են անում, թե իրենց իշխանության ներ-
քո արդի պրոլետարիատը գոյություն չի ունե-
ցել, փոքր ինչ մոռանում են, վոր արդի բուրժուա-

զիան հենց նրանց հասարակարգի անհրաժեշտ
ծնունդն է:

Ասենք, նրանք այնքան քիչ են թագ-
ցնում իրենց քննադատության յետադիմական
բնույթը, վոր բուրժուազիայի դեմ մղած նրանց
մեղադրանքը հենց այն է, թե բուրժուազիայի տի-
րապետության ներքո մի զասակարգ ե զարգացել,
վոր վողջ հին հասարակարգը ողն ե ցնդեցնելու:

Նրանք բուրժուազիային ավելի յեն հան-
դիմանում հեղափոխական պրոլետարիատ
արտադրելու համար, քան առհասարակ պրոլե-
տարիատ առաջ բերելու համար:

Դրանից ե, վոր գործնական քաղաքականու-
թյան մեջ նրանք մասնակցում են բանվոր դա-
սակարգի դեմ ուղղված բոլոր բոնի միջոցներին
և, հակառակ վերամբարձ ճառերին, առորյա կյան-
քում հանգիստ կերպով վուկե ինձորներ են քա-
ղում և հավատարմությունը, սերն ու պատիվը
փոխանակում բրդի, ճակնդեղի և ողիի:

Խչպես տերտերը ավատատիրոջ հետ ձեռք
ձեռքի տված ե գնացել, այնպես ել տերտերա-
կան սոցիալիզմն ե ավատականի հետ ընթանում:

Ավելի ճեշտ բան չկա, քան քրիստոնեական
ճգնությանը սոցիալիստական գույն տալը: Միթե
քրիստոնեությունը չի՝ մաքառել նայել մասնա-
վոր սեփականության, ամուսնության և պետու-
թյան դեմ: Միթե զրանց տեղը նա չի՝ քարոզել
բարեգործություն և աղքատություն, կուսակրո-
նություն և մարմնի մեռցում, մենաստան և յե-

կեղեցի: Քրիստոնեական սոցիալիզմը սոսկ որ-
հնած ջուր է, վորով տերտերը ազնվականության
ցասումն ե սրբագործում:

բ) Մանր-բուրժուական սոցիալիզմ

Ավատական ազնվականությունը միակ դա-
սակարգը չեր, վորին տապալեց բուրժուազիան,
մենակ նրա կյանքի՝ պայմանները չեն, վոր ար-
դի բուրժուազիան հասարակության մեջ վատթա-
րանում են ու չքանում: Միջնադարյան քաղե-
նիներն ու մանր գյուղացիությունը արդի բուր-
ժուազիայի նախորդներն են յեղել: Խնդուստրիի
և առեվտրի կողմից պակաս զարգացած յերկը-
ներում աճող բուրժուազիայի կողքին այդ դա-
սակարգերը տակավին քաշ են տալիս իրենց գո-
յությունը:

Այն յերկիներում, վորտեղ զարգացել ե ար-
դի քաղաքակրթությունը, մի նոր քաղենիու-
թյուն ե գոյացել, վոր յերերվում ե պրոլետարիա-
տի և բուրժուազիայի արանքում և, իբրեւ լրա-
ցում բուրժուական հասարակության, շարունակ
նորից ու նորից գոյանում: Բայց նրա անդամ-
ները մրցման շնորհիվ շարունակ պրոլետարիա-
տի շարքն են նետվում և խոշոր խնդուստրիի
զարգացման հետ նրանք իրենք ել նախատեսնում
են այն ժամը, յերբ պետք ե վոր անհետանան և
առեվտրի, մանուֆակտուրի, գյուղատնտեսու-
թյան մեջ փոխարինվեն վերակացուներով ու
մանր ծառայողներով:

Այն յերկիներում, վորտեղ գյուղացի դա-

սակարգը ազգաբնակության կիսից ավել է, ինչպես ֆրանսիայում, բնական ե, վոր գրողները, վորոնք սլրուետարիատին պաշտպանել են ընդդեմ բուրժուազիայի, մանր քաղքենիական և մանր գյուղացիական չափանիշով են քննադատել բուրժուական կարգը և բանվորների կուսակցությունը մանր-քաղքենիության տեսակետից են ըմբռնել։ Ահա թե ինչպես ե գոյացել մանր բուրժուական սոցիալիզմը։ Սիսմոնդին այդ գրականության պարագլուխն ե հանդիսանում վոչ միայն ֆրանսիայում, այլև Անգլիայում։

Այդ սոցիալիզմը ծայր աստիճան սրամտութեն տարրալուծել ե արդի արտադրության հարաբերությունների հակասությունները և մերկացրել տնտեսագետների կեղծավոր լավատեսությունը։ Նա անհերքելի կերպով ապացուցեց աշխատանքի բաժանման և մեքենաների կործանարար ազգեցությունը։ Ապացուցեց, վոր կապիտալի և հողատիրության կենտրոնացումը, գերարտադրությունը, ճնշաժամերը մանր-քաղքենիներին անխուսափելի կորսույան են մատնում։ Ցուցադրեց պրոլետարիատի թշվառությունը, արտադրության անիշխանական բնույթը, աղաղակող անհամաչաչվությունը հարստության բաշխման մեջ, արդյունաբերական ավերիչ պատերազմներն աղգերի միջեվ, ինչ բարքերի, ընտանեկան ին կապերի, ին աղգերի կազմալուծումը։

Սակայն իր գրական բովանդակությամբ այդ սոցիալիզմը կամ ձգտում ե արտադրության և

փոխի հին միջոցները վերականգնել և զրանց հետ նայել սեփականատիրական հին հարաբերություններն ու հին հասարակությունը, կամ թե կամենում ե արտադրության և փոխի արդի միջոցները բռնի կերպով վերստին սեփականության հին հարաբերությունների շրջանակի մեջ պարփակել, վոր նրանք պատռել են և պիտի պատռեյին։ Յերկու դեպքում ել նա յետաղիմական ե ուտոպիական միաժամանակ։

Համքարային կազմը մանուֆակտուրի մեջ և նահապետական տնտեսությունը գյուղում—ահա նրա վերջին խոսքը։

Նրա զարգացման շարունակությունն այդ ուղղությամբ—վատույժ վայուն դարձավ։

Դ) Գերմանական կաժ «Ճշմարիտ» սոցիալիզմ։

Ֆրանսիայի սոցիալիստական և կոմունիստական գրականությունը, վոր տիրող բուրժուազիայի ճնշման ներքո և ծագել և այդ տիրապետության դեմ տեղի ունեցած պայքարի գրական արտահայտությունն ե, ֆերմանիա ներմուծվեց այնպիսի մի ժամանակ, յերբ բուրժուազիան ավատական արտուրական պայքարի բռնվել։

Գերմանիայի ֆիլիսոփաները, կիսափելիսոփաները և իմաստակները աղահ-ագահ վրա տվին այդ գրականության վրա և մոռացան միայն, վոր այդ գրականության ներգաղթով ֆրանսիայից միաժամանակ ֆրանսիական կենսական պայմանները Գերմանիա չեյին ներգաղթել։ Գերմանիայի գյուղական պայմանները Գերմանիա չեյին ներգաղթել։

նական հարաբերությունների հանդեպ ֆրանսիական գրականությունը կողքը իր վողջ անմիջական գործնական նշանակութլունը և զուտ գրական կերպարանք ընդունեց։ Նա պիտի թվար պարապ մտորմունք մարդկային եռության իրականացման մասին։ Այսպես, որինակ, 18-րդ դարի գերմանացի փիլիսոփաների համար առաջին ֆրանսիական հեղափոխության պահաջներն ընդհանրապես «գործնական բանականության» պահանջների իմաստ ունեյին, և ֆրանսիական բուրժուազիայի հեղափոխականների կամքի արտահայտությունները նրանց աչքում զուտ կամքի որենքներ եյին, կամքի, ինչպես նա պետք ե վոր լինի, մարդկային ճշմարիտ կամքի։

Գերմանացի գրականների աշխատանքը բացառապես այն ե յեղել, վոր ֆրանսիական նոր գաղափարները հաշտեցնեն իրենց հին փիլիսոփայական խղճի հետ, կամ թե չե իրենց փիլիսոփայական տեսակետից յուրացնեն ֆրանսիական գաղափարները։

Այդ յուրացումը նույն ձեվով կատարվեց, վորով առհասարակ ոտար լեզու յեն յուրացնում, այն ե՝ թարգմանության միջոցով։

Հայտնի ե, վոր վանականները հին հեթանոսական ժամանակվա դասական ձեռագրերի վրայից կաթոլիկ սուրբերի անձաշակ վարքերն եյին զրում։ Գերմանիայի գրականները ֆրանսիական բնագրի յետեմն իրենց փիլիսոփայական անմտությունները գրի առան։ Որինակ՝ ֆրանսիա-

ցիների արած փողային հարաբերությունների քննադատության յետեվը նրանք գրել են «մարդկային եռության գրսեվորում», բուրժուական պետության ֆրանսիացիների արած քննադատության յետեվը՝ «վերացական հանրության տիրապետության վերացում» և այն, և այն։

Ֆրանսիական իրադարձությունների զեղծումը փիլիսոփայական այդ դատարկաբանությամբ նրանք մկրտել են «գործի փիլիսոփայություն» «ճշմարիտ սոցիալիզմ», «սոցիալիզմի գերմանական գիտություն», «սոցիալիզմի փիլիսոփայական հիմնավորում» և այն անուններով։

Ֆրանսիական սոցիալիստական-կոմունիստական գրականությունն այդպիսով կռավեց։ Յեվ վորովհետեւ այդ գրականությունը գերմանացիների ձեռքում դադարեց մի դասակարգի մյուսների դեմ մղած պայքարի արտահայտությունը լինելուց, գերմանացին համոզված ե, վոր հաղթահարել ե «ֆրանսիական միակողմանիությունը», վոր նա ճշմարիտ կարիքների տեղը՝ ճշմարտության կարիքն ե առաջ մղում, պրոլետարիատի շահերի փոխարեն—մարդկային եռության շահերը, առհասարակ մարդուն, վոր վոչ մի դասակարգի չե պատկանում, վոր ընդհանրապես վոչ թե իրականության մեջ գոյություն ունի, այլ փիլիսոփայական մտապատկերների մթին յերկնքում։

Գերմանական այս սոցիալիզմը, վոր իր դպրոցական անող մարդանքներին այնքան լուրջ դպրոցական անող մարդանքներին այնքան լուրջ

ու հանդիսավոր եր վերաբերվում և վորի մասին նա այնքան աղմկել ու փողեր ե հնչեցրել, — փոքր-առ փոքր կորցրեց իր պեղանտական անմեղությունը:

Դերմանական, զիսավորապես պրուսական բուրժուազիայի պայքարն ավատականների և աբուլյուտ կայսրությունների դեմ, մի խոսքով ազատամիտ շարժումը գնալով՝ լրջանում եր:

«Ճշմարիտ» սոցիալիզմն այսպիսով ցանկալի առիթ ունեցավ քաղաքական շարժմանը հակադրելու սոցիալիստական պահանջներ, — վորով անիծում եյին լիբերալիզմը, ներկայացուցչական պետությունը, բուրժուական մրցումը, մամուլի բուրժուական ազատությունը, բուրժուական իրավունքը, բուրժուական ազատությունն ու հավասարությունը, — և քարոզելու ժողովրդական մասսային, նա այդ բուրժուական շարժումից վոչինչ չի վաստակելու, ավելի շուտ ամեն ինչ կորցնելու յե։ Դերմանական սոցիալիզը ժամանակին մոռանում եր, վոր ֆրանսիական քննադատությունը, վորի անպարունակ արձագանքն եր ինքը, նախադրում եր արդի բուրժուական հասարակությունը համապատասխան նյութական կենսական պայմաններով և քաղաքական վայելուչ սահմանադրությամբ, նախապայմաններ, վորոնց նվաճումի մասին տակավին նոր պիտի խոսք բացվեր դերմանիայում։

Դերմանական աբուլյուտ կառավարությունների և դրանց տերտերներից, վարժապետներից,

ազնվականներից և աստիճանավորներից բաղկացած վոհմակի ձեռքում այդ սոցիալիզմը բաղձակի խրտվիլակ եր սպառնորեն զուխ բարձրացնող բուրժուազիայի դեմ։

Այդ սոցիալիզմը մի քաղցրավուն լրացում եր մտրակի հարվածների և հրացանների գընդակիների դառնության, վորոնցով նույն կառավարությունները ճնշում եյին Գերմանիայի բանվորների ապստամբությունները։

Յեթե «Ճշմարիտ» սոցիալիզմը նմանորինակ մի զենք ե յեղել կառավարությունների ձեռքում գերմանական բուրժուազիայի դեմ, միյեցնույն ժամանակ նա յետաղիմական շահերի արտահայտիչն ե յեղել — գերմանական մանր քաղքենիության շահերի արտահայտիչը։ Գերմանիայում 16-րդ դարից մնացած և այդ ժամանակից վեր զանազան ձեվերով նորից ու նորից հանդես յեկած մանր քաղքենիությունը, — աիրող կարգերի իսկական հասարակական հիմքն ե։

Նրա պահպանումը — գերմանական տիրող կարգերի պահպանումն ե։ Բուրժուազիայի ինդուստրային և քաղաքական տիրապետությունից նա յերկյուղով իր հաստատ կործանումն ե սպասում, մի կողմից իրբեկ հետեվանք կապիտալի կենտրոնացման, մյուս մողմից հեղափոխական պրոլետարիատի զարգացման շնորհիվ։ Յեկան թվում ե, թե «Ճշմարիտ» սոցիալիզմը մի հարվածով յերկու ճանճն ել սպանում ե։ Յեկան այդ սոցիալիզմը տարածվում եր, վորպես համաճարակ։

Հայեցաբանական (սպեկուլյատիվ) վոստայնից հյուսած, ճարտասանական պերճ ծաղիկներով զարդարած, սիրառատ սրտի ցողով թրջած այդ ծածկոցը, վորով Գերմանիայի սոցիալիստները իրենց մի յերկու ուկրացած «հավերժական ճշմարտություններն» եյին փաթաթում, այդ հասարակության մեջ լոկ նրանց ապրանքի վաճառքն եր ավելացնում:

Գերմանական սոցիալիզմն ել, իր հերթին, քանի գնում, այնքան ավելի եր ճանաչում իր կոչումը—վորպես քաղքենիության մեծախոսներկայացուցչի:

Գերմանական ազգը—նա բնական ազգ հոչակեց և Գերմանիայի քաղքենիներին—բնական մարդիկ։ Մրանց յուրաքանչյուր ստորությանը գաղտնի բարձր սոցիալիստական իմաստ եր հաղորդվում, ըստ վորում այդ արարմունքը հակառակ նշանակություն եր ստանում։ Յեվյերը նա ուղղակի հանդես յեկավ կոմունիզմի «կոպիտկործանիչ» ուղղության դեմ, և իր անկուսակցական վեհությունը հոչակեց դասակարգային ամեն պայքարից վերադրանով նա սոսկ վերջին յեզրակացությունը հանեց։ Այն ամենը, ինչ վոր շրջանառության մեջ և Գերմանիայում իբրեւ այսպես ասած սոցիալիստական և կոմունիստական գրություն—այդ կեղտոտ, ջղադար գրականության ե պատկանում։*

* 1848 թվականի նեղափոխական նորմն այս ամբողջ զօնու ուղղությունը մեջ տեղի սրբեց յեւ նրա զաղափարակքների հավատը կտրեց այլընտառ սոցիալիզմը նախագուշ։ Այդ ուղղության պարագությն ու դասական տիպարը—պարու կարէ Դրյունն ե:

2 ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՄ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Բուրժուաղիայի մի մասը ցանկանում ե սոցիալական թերիներին ոգնության գա, վորպես զի ապահովի բուրժուական հասարակության գոյությունը։

Դրանց թվին պատկանում են՝ տնտեսագետներ, ֆիլանտրոպներ, հումանիստներ, բանվորդասակարգի վիճակը բարելավողներ, բարեգործություն կազմակերպողներ, անասունների տանջանքները վերացնողներ, զգաստության ընկերություններ հիմնողներ, մանր մունր վերանորոգիչներ ամենախայտարգետ տեսակի։ Յեվը բուրժուական այդ սոցիալիզմն անգամ մշակվել, ամբողջ սիստեմների ե վերածվել։

Օրինակ Պրուդոնի Philosophie de la Misere, Բուրժուա-սոցիալիստները—արդի հասարակության կյանքի պայմաններն են կամենում, առանց դրանցից անհրաժեշտորեն բղխող պայքարի և վտանգի։ Նրանց ցանկացածը—գոյություն ունեցող հասարակությունն ե ի բաց առյալ նրան հեղափոխող և կազմալուծող տարրերի։ Նրանք ուղում են բուրժուազիա, առանց պըուլետարիատի։ Այն աշխարհը, վորտեղ ինքն ե տիպում, բնականաբար բուրժուազիան պատկերում ե իբրեւ աշխարհներից լավագոյնը։ Բուրժուական սոցիալիզմը մշակում ե այդ միիթարական պատապատկերը և կիսատ կամ ամբողջական սի-

տեմի վերածում։ Յերբ նա առաջարկում է պրոլետարիատին, վոր նա իր սիստեմներն իրականացնի և նոր Յերուսաղեմ մտնի, նա իրոք միայն պահանջում է, վոր պրոլետարիատը մնա կանգնած ներկա հասարակության մեջ, սակայն դեն քցի իր ատելի մտապատկերներն այդ հասարակության մասին։

Սոցիալիզմի մի այլ, պակաս սիստեմական, բայց ավելի գործնական ձեվը, ձգտում եր կուրել բանվոր դասակարգի հետաքրքրությունը դեպի ամեն մի հեղափոխական շարժում, ապացուցանելով, վոր պրոլետարիատին վոչ թե այս կամ այն քաղաքական փոփոխումն ոգուտ կրերի, այլ միմիայն կյանքի նյութական պայմանների, տնտեսական հարաբերությունների փոփոխումը։ Իսկ կյանքի նյութական հարաբերությունների փոփոխում ասածդ այդ սոցիալիզմը վոչ մի դեպքում չի հասկանում իրերեվ արտադրության բուրժուական հարաբերությունների վերացում, վոր լոկ հեղափոխական ճանապարհով և հնարավոր, այլ վարչական բարելավում, վոր արտադրության նույն այդ հարաբերությունների հիմքերի վրա ե իրագործվում, հետեւաբար կապիտալի և վարձու աշխատանքի հարաբերության մեջ վոչինչ չի փոփոխ, այլ լավագույն դեպքում՝ բուրժուազիայի համար իր տիրապետության ծախսը պակսեցնում և իր պետական տնտեսության եղանակը պարզեցնում։

Բուրժուական սոցիալիզմը համապատաս-

խան արտահայտություն ե գտնում այն ատեն, յերբ, սոսկ ճարտասանական ձեվ ե դառնում։

Ազատ առեվտուր—հանուն բանվոր դասակարգի շահերի։ Հովանավորող մաքս—հանուն բանվոր դասակարգի շահերի։ Զնդաններ—հանուն բանվոր դասակարգի շահերի, Ահա բուրժուական սոցիալիզմի վերջին և միակ լուրջ իմաստով ասած խոսքը։

Բուրժուազիայի սոցիալիզմը հենց այն պընդումն ե, թե բուրժուաները բուրժա յեն հանուն բանվոր դասակարգի շահի։

Յ ՔՆՆԱԿԱՆ-ՌԻՑՈՂԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ
ՅԵՎ ԿՈՄՊՈՒՀԱՏԱԿԱՆ

Մենք այստեղ չենք խոսելու այն գրականության մասին, վոր բոլոր մեծ հեղափոխությունների ժամանակաշրջաններում պրոլետարիատի պահանջներն եւ արտահայտել: (Բարյոֆի գրքածները և այլն):

Պրոլետարիատի իր սեփական դասակարգային շահերն անմիջապես իրագործելու առաջին փորձերը, ըն դհանուր խոռվության պահուն, ավատական հ ասարակության խորտակման միջոցին, անհրաժեշտորեն ձախորդ յեղան, չնորիվ իր իսկ պրոլետարիատի անզարգացած վիճակի, ինչպես և իր ազատագրման նյութական պայմանների պակասության, պայմանների, վոր տակավին բուրժուական ժամանակաշրջանի արդյունքը պիտի լինելին: Պրոլետարիատի այդ առաջին շարժումն ուղեկցող հեղափոխական գրականությունը, ըստ եռթյան, անհրաժեշտորեն յետադիմական եր: Նա քարոզում եւ ընդհանուր սակավապետություն և կոպիտ հավասարություն:

Սոցիալիստական և կոմունիստական բուն սիստեմները, Սեն-Սիմոնի, Ֆուլյեյի, Ռվենի և այլ սիստեմները, պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի վերը շարադրած առաջին, անզարգացած շրջանում են յերեվան գալիս: (Տես՝ «Բուրժուազիա և պրոլետարիատ» գլուխը):

Այդ սիստեմների համագետները թեյեվ

տեսնում եյին դասակարգերի ներհակությունը, ինչպես և տիրող հասարակության մեջ գոյություն ունեցող կազմալուծվող տարրերը, բայց և այնպես պրոլետարիատի մեջ վոչինչ պատմական ինքնագործունեություն չեյին նկատում, վոչինչ, պրոլետարիատին հատուկ քաղաքական շարժում:

Դասակարգային ներհակության զարգացումը ինգուստրիի զարգացման հետ միասին եւ առաջ գնում, ուստի և այդ սիստեմների հնարագետներն իր ժամանակ պրոլետարիատի ազատագըրման համար նյութական պայմաններ չեն գըտնում և սկսում են սոցիալական գիտության, սոցիալական որենքների յետեվից ընկնել այդ պայմաններն ստեղծելու համար:

Հասարակական գործունեության տեղը—նրանց անձնական հնարագիտությունը պիտի բռնի, ազատագրման պատմական պայմանների տեղը—յերեվակայականը, պրոլետարիատն աստիճանաբար իրբեկվ դասակարգ կազմակերպելու տեղը—իրենց հատկապես նյութած հասարակական կազմը: Նրանց համար համաշխարհային գալիք պատմությունը սպառվում ե իրենց հասարակական ծրագիրների քարոզով ու գործնական իրագործումով:

Ասենք նրանք գիտակցում են, վոր իրենց ծրագիրները գլխավորապես բանվոր դասակարգի շահերն են ներկայացնում, իրբեկվ ամենաթշվառ դասակարգի: Պրոլետարիատը, իրբեկվ ամենաթշվառ դասակարգ, հենց այդ տեսակետից ե, վոր թշվառ դասակարգ, հենց այդ տեսակետից ունի:

Դասակարգային պայքարի անդարդացած ձեզեր, ինչպես և իրենց սեփական կենսական դրությունը բերում են նրանց այն համոզմունքին, վոր իրենք դասակարգային ներհակությունից անսահման վեր են։ Նրանք կամենում են հասարակության բոլոր անդամների կենսական դրությունը բարելավել, անգամ նրանց դրուգյունը, վորոնք լավագոյն պայմանների մեջ են դրված։ Դրանից ե, վոր նրանք շարունակ կոչ են անում վողջ հասարակության, առանց խարության, անգամ գերադասորեն—տիրող դասակարգին։ Բավական ե լոկ ըմբռնել նրանց սիստեմը, լավագոյն հնարավոր ծրագիր ճանաչելու համար։

Այդ պատճառով նրանք ժխտում են ամեն մի քաղաքական և մանավանդ հեղափոխական գործունեություն, նրանք խաղաղ ճանապարհով են ուղղում իրենց նպատակին համնել, մանր և բնականաբար անաջող փորձերով. որինակի զօրությամբ նրանք ձգտում են նոր ավետարանի ուղին հարթել։

Ապագա հասարակության մտածածին նկարագրությունը ծագում ե մի ժամանակ, յերբ պրոլետարիատը տակավին ծայր աստիճան անդարդացած ե, հետեւաբար ինքն ել յերեվակայութեն ե ըմբռնում իր գիրքը և իր առաջին, նախազգացումներով լեցուն տեսնչերը հասարակության ընդհանուր վերանորոգման մասին։

Սակայն սոցիալական և կոմունիստական

գրությունները քննական տարրեր ել են պարունակում։ Նրանք շոշափում են տիրող հասարակության բոլոր հիմքերը. Ուստի նրանք մեծապես թանգարժեք նյութ են մատակարարել բանվորների լուսավորության համար։ Ապագա հասարակության վերաբերյալ նրանց դրական առաջարկները, որինակ՝ քաղաքի և գյուղի միջեվ յեղած ներհակության վերացումը, ընտանիքի, մասնավոր վաստակի, վարձու աշխատանքի վոչնչացումը, հասարակական ներդաշնակության ավետումը, պետությունը լոկ արտադրական վարչության վերածելը—բոլոր այս առաջարկները սոսկ դասակարգային ներհակության վերացումն են արտահայտում, ներհակություն, վոր նորնոր ե զարգանալ սկսում, վոր նրանց ծանոթ ե տակավին իր սկզբնական, անկերպարանք անվորոշ ձեզով։ Ուստի և այդ առաջարկներն ինքնին զուտ ուտոպիսական իմաստ ունեն։

Քննական-ուտոպիսական սոցիալիզմի և կոմունիզմի նշանակությունը հակառակ հարաբերական ե պատմական զարգացման։ Ինչ չափով վոր դասակարգային պայքարն ե զարգանում ու ձեվակերպվում, կարծեցյալ բարձրացումն այդ պայքարից վեր և կարծեցյալ պայքարը նրա գեմ կորցնում ե իր վողջ գործնական արժեքը, վողջ տեսական արդարացումը։ Ուստի և յեթե այդ սիստեմների հիմնադիրները շատ կողմից հեղափոխականներ եյին—նրանց աշակերտները միշտ յետաղիմական աղանդներ են կազմել։ Վարպետ-

Ների հին հայացքները նրանք ամուր են պահում, արհամարելով պրոլետարիատի պատմական առաջխաղացումը։ Այդ պատճառով ել նրանք հետեւողականորեն ձգտում են դասակարգային պայքարը կըկին բթացնել և ներհակությունը մեղմել։ Նրանք շարունակ իրենց հասարակական ուսուցիչաների փորձնական իրագործման մասին են յերազում, հատ-հատ ֆալանստերներ ու կոմունիստական Հոմ—գաղութներ հիմնելու, փոքրիկ իկարիա հաստատելու, նոր Յերուսաղեմի փոքրադիր հրատարակության մասին,—և բոլոր այս ողային ամրոցները կառուցանելու համար նրանք հարկադրված են կոչ անելու բուրժուաների մարդասեր սրտերին և փողի քսակներին։ Աստիճանական անկումը նրանց տանում ե վերը նկարագրած յետադիմական կամ պահպանողական սոցիալիստների շարքը, վորոնցից տարբերվում են միայն ավելի համառ պեղանտությամբ և դեպի իրենց սոցիալական գիտության հրաշագործությունն ունեցած մոլեռանդ նախապաշարմունքով։

Նրանք հանդես են գալիս իրեվ հակառակորդներ բանվորների ամեն մի քաղաքական շարժման, վոր կարող ե ծագել նոր ավետարանին կուրորեն չհավատալուց։

Ովենականներն՝ Անգլիայում—չարտիստների դեմ են գործում, ֆուլյերականները Ֆրանսիայում—ընդդեմ վերանորոգչականների։

VI

ԿՈՄՊՈՒՏԻՍՏՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԴԵԳԻ ԶԱՆԱԳԱՆ ԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

II գլխում ասածից հետո, ինքնին հասկանալի յե կոմունիստների վերաբերմունքը դեպի արդեն կազմակերպված բանվորական կուսակցությունները, այսինքն՝ նրանց վերաբերմունքը դեպի շարտիստներն Անգլիայում և դեպի հողային վերանորոգիչները չյուտիսային Ամերիկայում։

Նրանք պայքար են մղում բանվոր դասակարգի առաջադրած անմիջական նպատակների և շահերի համար, բայց և ներկայիս շարժման ապագան են պաշտպանում։ Ֆրանսիայում կոմունիստները հարում են սոցիալիստական-դեմոկրատական կուսակցությանը—ընդդեմ պահպանողական և արմատական բուրժուազիայի, վերապահելով հեղափոխական ավանդությունից բղիսած ֆրազներին և պատրանքներին քննադատորեն վերաբերելու իրավունքը։

Զվիցերիայում նրանք արմատականների պաշտպանն են, առանց ուրանալու, վոր այդ կուսակցությունը հակասական տարրերից ե բաղկացած, մասամբ—դեմոկրատական սոցիալիստներից, ֆրանսիական իմաստով, մասամբ—արմատական բուրժուաներից։

Լեհերի մեջ կոմոնիստները պաշտպանում են այն կուսակցությունը, վոր ագրարային հեղափոխությունը ազգային ազատագրության պայման ե դարձել, այն կուսակցությունը, վոր առաջ բերեց 1846 թվականի կրակովյան ապրատամբությունը:

Գերմանիայում կոմոնիստական կուսակցությունը բուրժուազիայի հետ միասին ե պայքար վարում—քանի բուրժուազիան հեղափոխաբար ե հանդես դալիս—ընդդեմ արտոյուտ միապետության, ավատական հողատիրության և մանր—քաղքենիության:

Մակայն նա վոչ մի վայրկյան չի դադարում բանվորների մեջ ըստ կարելույն պայծառ գիտակցություն մշակելուց բուրժուազիայի և պրոլետարիատի միջեվ յեղած թշնամական ներհակության նկատմամբ, վորպեսզի գերմանացի բանվորներն այն հասարակական և քաղաքական պայմանները, վոր առաջ պիտի բերի բուրժուազիայի տիրապետությունը, իսկույն յեվյեթ զենքեր դարձնեն, ուղղեն բուրժուազիայի դեմ և այսպիսով Գերմանիայի յետադիմական դասակարգի անկումից հետո իսկույն յեվյեթ բուրժուազիայի դեմ իսկ պայքար սկսվի:

Կոմոնիստներն իրենց ուշը գլխավորապես Գերմանիայի վրա են ուղղում, վորովհետեւ Գերմանիան բուրժուական հեղափոխության նախորյակին ե կանգնած, և վորովհետեւ այդ հեղաշրջումը տեղի պիտի ունենա ընդհանուր յեվյո-

պական քաղաքակրթության ավելի առաջադեմ պայմաններում և գլուխ բերվի շատ ավելի զարգացած պրոլետարիատի ձեռքով, քան 17-դարում Անգլիայում և 18-դարում Ֆրանսիայում, ուստի և գերմանական բուրժուական հեղափոխությունը կարող ե պրոլետարական հեղափոխության անմիջական նախերգանքը դառնալ:

Մի խոսքով կոմոնիստներն ամենուրեք պաշտպանում են ամեն մի հեղափոխական շարժում ընդգեմ տիրող հասարակական և քաղաքական կացության:

Բոլոր այդ շարժումների ժամանակներունք, իբրև շարժման հիմնական հարց, սեփականության հարցն են բարձրացնում, ինչքան ել ավել կամ պակաս զարգացած ձեվ ընդունած լինի այդ հարցը:

Վերջապես կոմոնիստներն ամենուրեք աշխատում են բոլոր յերկիրների գեմոկրատական կուսակցությունները իրար կապել և համաձայնեցնել:

Կոմոնիստներն ամաչում են իրենց հայացքներն ու մտադրությունները թագցնելուց: Նրանք բացե ի բաց հայտարարում են, վոր իրենց նպատակները կարող են իրագործվել միմիայն մինչայժմյան հասարակարգի բռնի տապալման միջոցով: Թո՛ղ վոր իշխող դասակարգերը դողդողան կոմոնիստական հեղափոխության ահից: Այդ հեղափոխության միջոցին պրոլետարները, շղթաներից զատ, կորցնելու բան չունեն: Նրանք պիտի արար-աշխարհի տերը դառնան:

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Այդ պահուն բանվորական շարժումն ու կո-
մունիզմը զարգանում եյին միայն Յեվրոպայում,
յեթե հաշվի չառնենք Հյուսիսային Ամերիկայի
Միացյալ Նահանգների բանվորական շարժման
թույլ արմատները։ Մարքսն ու Ենգելսը կոմու-
նիզմի ուրվականից սարսափող հին Յեվրոպայի
ներկայացուցիչներ են համարում կոմունիզմի
բոլոր հակառակորդներին, հին հասարակության
գլխավոր ույժերը՝ սկսած ազնվականներից մին-
չեվ արդյունագործները և առեվտրականները։
Առանձնապես մատնանշվում են այն դիմագիր-
ները, վորոնք կոմունիզմի դեմ վարած պայքա-
րում դեկավարող դեր եյին խաղում։

Պիյ IX (ինյերորդ) պապը, վորը գահ
բարձրացավ 1846 թ., հարձակվեց կոմունիստների
վրա, վորպես կրոնի թշնամիների և ժողովրդի հո-
գեկան արքեցման հակառակորդների։

Նիկոլայ I ցարը (1825—1855 թ.)—
ճորտատիրական Ռուսաստանի այդ ինքնակալը հո-
ժարակամ ստանձնեց ամենուրեք հեղափոխական
վորոգայթներ վնարող յեվրոպական ժանդարմի
դերը։

Մետերնիկը (1783—1853 թ.) այն
ժամանակ ավստրիական կայսրության գլխավոր
մինիստրն եր. նա խեղղում եր ամեն մի ազատա-
գրական ձգտում և հանդցնում եր ժողովրդական

լուսավորության ամեն մի կայծ, նա չեր բավարարվում միայն իր յերկրի զարգացումը խափանելով, այլ շարունակ դրդում եր հարեվան պետությունները՝ արթուն մնալ հասարակական կարգը պաշտպանող դիրքերում։

Մետերնիսի մաքի արդյունքն եր նրա իսկ ձեռքով գլուխ բերված պրուսական թագավորի, ավստրիական և ռուսական կայսրների «արքան միությունը», վորի նպատակն եր կովել գահի և կրօնի բոլոր թշնամիների դեմ։

Նրա անունով՝ Մետերնիսի ականություն են կոչվում այնպիսի կարգեր, յերբ հասարակական կյանքում թագավորում ե անշրժությունը, արգելքներ են հարուցվում ամեն տեսակի առաջադիմության, յերբ, մի խոսքով, տիրապետում ե ու ե ակցիան։

Գիշոն (1787—1874 թ.) ֆրանսիայի այն ժամանակավագլխավոր մինիստրն եր։ Նա մի կը թված մարդ եր, ականավոր գիտնական և իր բոլոր ույժերը ի սպաս գրեց բուրժուազիային ու հարուստներին։ Գիշոն իր գլխավոր խնդիրն եր համարում պայքարել սոցիալիստների և կոմունիստների դեմ, վորոնք խանգարում եյին բուրժուազիային ել հարստանալու։ Ուստի անհրաժեշտ եր բանվորներին պահել խավարի մեջ, հնազանդության ներքո և չտալ նրանց վոր և ե քաղաքական իրավունք։ Նա հաճույքով ոգնության եր դալիս Մետերնիսին ու պրուսական թագավորին, յերբ կարիք եր զգացվում հետապնդել Փարիզում ա-

պաստան վինտրող հեղափոխականներին։ Պրուսական իշխանության խնդրով նա արտաքսեց Մարքսին ֆրանսիայից։

Ֆրանսիական պատուի թագավորի (արմատականները,), թեյեվ ճիշտ ե, Գիշոյի հակառակորդներն եյին և ընտրական իրավունքի ընդլայնման կողմնակից, բայց նրանք ել վոչ պակաս կատաղությամբ պաշտպանում եյին մասնավոր սեփականության սրբազն իրավունքը և հալածում կոմունիստներին, վորպես ամեն տեսակի հասարակարգի թշնամիների։ Սովորաբար ու ադիկալ են անվանում այն մարդկանց, վորոնք կողմնակից են պետական քաղաքական կառուցվածքի արմատական փոփոխման, սակայն վոչինչ չեն ուղում լսել հասարակական, սոցիալական կարգ երի փոփոխության մասին։

Գերմանական վուստիկան երը հետապնդում եյին կոմունիստներին և ֆրանսիայում, և Բելգիայում, և Զվիցերիայում և նույնիսկ Անգլիայում։ Նրանց հաջողվեց արտաքսել տալ կոմունիստ Վայտլինգին Զվիցերիայից և Մարքսին Փարիզից։

Կուսակցությունը—դա խմբակցություն է, միություն՝ ընդհանուր նպատակներով ու խնդիրներով կապված մարդկանց, վորոնք ձգտում են ույժերի համախմբան, կազմակերպման և մերձեցման միջոցով հասարակական, կամ քաքարական կարգերում փոփոխություններ մտցնել։ Կուսակցության մեջ մտնուն են

սովորաբար այնպիսի մարդիկ, վորոնք կապված են իրար հետ ընդհանուր դրությամբ հասարակական արտարդության մեջ, ունեն ընդհանուր շահեր և տվյալ հասարակության մեջ հատուկ դասակարգ են կազմում:

Ոպոգիցիայի կողմնակից լինել, նշանակում ե—դժո՞ն լինել հասարակական, կամ քաղաքական տվյալ կարգերից, ինքն իրեն հակադրել այդ կարգերին, դուրս գալ նրանց դեմ: Ոպոգիցիոն կուսակցությունը պայքարում ե իշխող կուսակցության դեմ: Ոպոգիցիան կարող ե ընդգրկել զանազան ոպոգիցիոն կուսակցություններ: Այսպես որինակ, ֆրանսիական ռադիկալաներն ու կոմունիստները միաժամանակ ոպոգիցիոն կուսակցություններ եյին տիրող կուսակցության, Գիզոյի հանդեպ, և սակայն նրանք պայքարում եյին իրար դեմ: Ծնդլիայում, ուր յերկար ժամանակ գոյություն ունեյին միայն յերկու կուսակցություն, հաճախ պատահում եր, վոր յերեկ տիրող ու պետական կուսակցությունը այսոր դառնում եր ոպոգիցիոն և ընդհակառակը:

Ու ե ա կ ց ի ո՞ն հակառակորդները—դրանք ներկայացուցիչներն են ու ե ա կ ց ի ա յ ի, ու ե-ա կ ց ի ո՞ն կուսակցությունների, վորոնք ուղում են յետ թեքել հասարակական զարգացման անիվը, վերադառնալ հին կարգերին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պատմությունը մի գիտություն ե, վոր ուսումնասիրում ե, թե ինչպես ե զարգացել և կազմակերպվել դարերի ընթացքում արդի հասարակությունը: Տիրող դասակարգերի համար պատմությունը այնչափ միայն նշանակություն ուներ, վորչափ նա պատմում եր մեծ մարդկանց քաջազրծությունները, ժողովուրդների մեջ տեղի ունեցած պատերազմները, մի թագավորի փոխարինելը մյուսին, նկարագրելով հետնորդին նախորդի նման, կամ նրանից ավելի խելոք ու խրոխտ: Հերոսները կովում եյին, նվաճում կամ կորցնում ամբողջ յերկրներ, իսկ ժողովուրդները, հնազանդ իրենց պետերի հրամանին, պատերազմում եյին այսոր մեկի, վաղը՝ մյուսի դեմ: Յեկ չնայած այդ կոտորածներին ու կրիվներին, ամեն ինչ մնում եր հին դրության մեջ:

Ուժեղները, ազնվականները, ունեվորները հարստանում և ծաղկում եյին, իսկ աղքատները—արյուն թափում, սպառում իրենց ույժերը ծանր աշխատանքների մեջ, բայց և այնպես միշտ նույն աղքատ վիճակի մեջ մնում: Պատմությունը կարծես գոյություն ուներ, վորովհետեւ սերունդները հաջորդում եյին իրար, իսկ իրապես ամեն ինչ նկարագրվում եր պատմագիրների կողմից անփոփոխ դրությամբ:

«Այսպես ե յեղել դարերից ի վեր—այսպես ել կմնա։ Սրա վրա ավելանում երքահանայի քարոզը։ —«Այս ամենը աստծո կարգադրությունն ե, նրա գործը»։ Յեվ մի փոքր խումբ մարդկանց ոգտին ծառայող իրերի դասավորությունը սրբազնն որհնություն ե ստանում, դառնում ե մի ինչ վոր սրբություն, վորին դիպչելը նույնպիսի հանցագործություն ե, ինչպիսին վոր և ե կրօնական սրբություն վիրավորելը։

Յերբ դեռ գիտությունը ամբողջապես ծառայում եր ազնվածագ և հարուստ մարդկանց, ամենուրեք, քահանաների հետ միասին, նա փնտրում ու գտնում եր այնպիսի կարգեր, վորոնք տիրապետում եյին այդ ժամանակաշրջանում։ Մի խումբ հարուստներ ու իրենքնորանց ներկայացուցիչ՝ թագավորը վերեվում, և այդ դասակարգերը կերակրելու համար ապրող աղքատ մասսաներ ներքեվում—ահա թե ինչպես եր պատկերանում նրանց անցյալը։ Յերբ աղքատները Արեվմտյան Յեկոպայում վերջապես զլուխ բարձրացրին ու մի շարք ապստամբությունների, հեղաշրջումների և հեղափոխությունների միջոցով ցույց տվին, վոր գոյություն ունեցող հասարակարգը յերբեք ել այնպես անփոփոխելի չե, ինչպես թվում եր գիտնականներին, գիտության մեջ լսվեցին ուրիշ ձայներ։ Հարկ յեղավ վերաբննել մի շարք նախապաշարումներ՝ ժառանգված այն ժամանակներից, յերբ գիտությունը տիրապետողների ստրուկն եր։

Պարզվեց, վոր չի յեղել վոր և ե ժամանակ, յերբ մարդիկ առանձին-առանձին, կամ զույգ-զույգ, դապրելիս լինելին, պարզվեց, վոր մարդիկ սերում են այնպիսի կենդանիներից, վորոնք ապրում եյին հոտերով։ Պարզվեց նմանապես, վոր յեղել ե այնպիսի ժամանակ, յերբ մարդիկ վոչ ստրկություն, վոչ ել ճնշում գիտելին, նրանք ապրում եյին փոքրիկ հասարակություններով, տոհմերով և ամեն ինչ միասին եյին արտադրում։ Նրանց մեջ վո՞չ աղքատ կար, վո՞չ ել հարուստ։ Այդ տոհմերը միանալով կազմել են ցեղեր, և հետագայում միայն այդ ցեղերից ե, վոր կազմվել են մանր ժողովուրդներ։

Նախնական այս հավասարությունը հետագայում անհետացավ։ Նույն այդ ցեղերը, վորոնք ներքում բաժանված չեյին հարուստների և աղքատների, համառ պայքար եյին մղում միմիանց դեմ՝ հող, արոտատեղի ու մթերք ձեռք բերելու համար։ Հասարակությունը բաժանվեց ճնշողների և ճնշվողների, և այն պայքարը, վոր առաջ վարվում եր առանձին տոհմերի ու ցեղերի միջեղ, սկսեց մղվել իրեն հասարակության ներսում։ Յեվ այժմ իրար դեմ սկսեցին պայքարել վո՞չ թե առանձին անհատներ, այլ դասակարգեր, այսինքն անհատներ, վորոնք միացած են ընդհանուր նյութական շահերով։ Այդ ժամանակից մինչ այժմ մարդկային հասարակության ամբողջ պատմությունը՝ դաս-

կարգերի պայքարի պատմություն եւ Պատմությունն ընդհանրապես բաժանսւմ են հին, միջին և նոր դարերի: Հին ժամանակներում ևս, նախապատմական շրջանից հետո, ամենուրեք մենք հանդիպում ենք դասակարգային պայքարի:

Հին Հռոմաստանում մենք արդեն աեսնում ենք հարուստ հողատերերի, վորոնք գրավել եյին հասարակական հողի մեծ մասը, վաճառականների, արհեստավորների և ստրուկների:

Հին Հռոմում հարուստ և աղնվական հողատերերը, վորոնց ձեռքին երիշխանությունը, կոչվում եյին պատրիկներ, իսկ մասը հողատերերը, գյուղացիներն ու հասարակ քաղաքացիները, քաղաքային համայնքի անդամները, վորոնք արդեն կորցրել եյին հողային սեփականությունը, կոչվում եյին պլերեյներ: Այդ դասակարգերի կողքին առաջ յեկավ մի նոր դասակարգ, վոր հեծյալներ անունն ստացավ. նա բաղկացած եր վաճառականներից, դրամափոխներից, վարկատուններից, խոշոր կապալառուներից: Հռոմը առեվտրական մրցակիցներին հաղթելու համար վարում եր բազմաթիվ պատերազմներ, իսկ դրա հետեւանքով գյուղացիությունը կորցնում եր անասունը, աշխատանքի գործիքները, պարտքերի տակ եր ընկնում և զրկվում հողից. պլերեյները ավելի ու ավելի աղքատանում եյին ու զըրկվում արտադրության բոլոր տեսակի միջոցներից:

Այս ձեվով Հռոմում յերեվան յեկան պրոլետարներ, այսինքն մարդիկ, վորոնք չունեյին տուն ու տեղ և վորոնց հարստությունը միայն յերեխաններն եյին. Արդեն Քրիստոսի ծննդից առաջ, յերկրորդ դարի վերջում, Գրակի յեղբայրները փորձ արին թշվառ պլերեյներին պաշտպանելու, վորի պատճառով նրանք զրկվեցին կյանքից:

Քրիստոսի ծննդից առաջ, I դարում, ստրուկների թիվը Հռոմում հասավ այնպիսի վիթխարիչափերի, վոր նրանք Սպարտակի ղեկավարությունը կազմակերպել. պատրիկներին խոշոր դժվարություններով միայն հաջողվեց խեղդել այդ ապստամբությունը արյան հեղեղում:

Դասակարգերի պայքարը հին Հռոմում հաճախ փոխվում եր բացարձակ քաղաքացիական կովի, քանի դեռ այդ պայքարող դասակարգերը իրենք չեյին յենթարկվել Արեվելքից խուժած գերմանական ցեղերին*:

Հենց հին Հռոմի պատմությունը դասակարգերի այնպիսի մի պայքար ե, վոր ինչպես Մարքսն ու Ֆեդելսն են ասում, վերջացավ դասակարգերի կարգերի միասնական կործանումով:

Միջին դարեր են անվանում սովորաբար հին Հռոմի անկումից մինչեւ Ամերիկայի գյուղացնում եր անասունը, աշխատանքի գործիքները, պարտքերի տակ եր ընկնում և զրկվում հողից. պլերեյները ավելի ու ավելի աղքատանում եյին ու զըրկվում արտադրության բոլոր տեսակի միջոցներից:

* Գերմանական ցեղերի հարծակումը Թեվրոպայի վոր հայտնի յետով գողովուրների մեծ տեղափոխություն անվան տակ:

տիրող հասարակաբնակ կոչում են ֆեոդալական, կամ շրջանը անվանում են ֆեոդալիզմի տիրապետության ժամանակաշրջան։

Միջին դարերի առաջին կիսում տնտեսությունն այն ձեզի յեր, վոր արտադրածը գրեթե սպառում եյին հենց իրենք արտադրողները։ Այն տնտեսությունը, վորի արտադրության արդյունքի, պըոդուկտի միայն աննշան մասն ե փոխանակվում, ապրանք դառնում, կոչվում ե նառուրալ տնտեսություն։ Գյուղում նման մասը ու յեղակի արտադրող եր գյուղացին, վորը սկզբում, գեռ յեփս ամբողջապես աղատ եր։ Հետագայում նա իր արտադրածի մի մասը տալիս ե հողատիրոջը, վորն իր վրայե վերցնում զինվորական պաշտպանության պարտականությունը։ Այդ հողատերը կոչվում եր ֆեոդալ, սենյոր, իսկ այն տուրքերը վոր վճարում եր հողատիրոջը գյուղացին՝ կոչվում եյին ֆեոդալական։ Ամենախոշոր հողատերի մոտ ծառայում եյին ազնվական, բայց ավելի մասը հողատերեր, վասաներ, վորոնք կառավարելու համար ստանում եյին սենյորներից լեն կոչված ավել կամ պակաս խոշոր հողամասեր (լենային սիստեմ)։

Քաղաքներում, վորտեղ բնակիչները պարապում եյին հողագործությամբ, ինչպես մոտավոր անցյալի մեր հետամնաց քաղաքներում, միաժամանակ զարգանում եյին արհեստն ու առեվտուրը։ Այստեղ մենք տեսնում ենք նույն

մանր, անհատորեն արտադրողներին, արհեստագործներին, վորոնք սկզբում արտադրում եյին միայն պատվերով, վորոշ սպառողի համար։ Այդպիսի մասը ձեռնարկության գլուխ կանգնած եր վարպետը, վորն ուներ մի կամ մի քանի քյարգյարներ և աշկերտներ։ Միյեվնույն արհեստով զբաղվող արհեստագործը, միանում եյին ու ցեխ (համբարություն) կազմում։

Բայց արդեն միջին դարերի յերկրորդ կիսից, հին նատուրալ տնտեսությունը սկսեց կազմալուծվել։ Գնալով ավելի շատ եր զարգանում վաճառքի արտադրությունը, վորպես հատուկ մի դաս, առաջ յեկան մարդիկ, վորոնք մարզվում եյին ամենաեժան տեղում ապրանք գնելու և ամենաթանգ տեղում ծախելու արվեստում։ Ովքեր հարստանում եյին, հում նյութը ավելի եժան գնով ձեռք բերում—կարող եյին պետք յեղած դեպքում սպասել ու իրենց ապրանքը ավելի թանգ գնով ծախել։ Այսպիսով ավելի ու ավելի յե հանդես գալիս վաճառականը, առ ե վարական կապիտալի ներկայացուցիչը, նաև միջամտում ե արտադրողի, համբարային արհեստավորի և սպառողի հարաբերություններին, իր վրա յե վերցնում արհեստավորի արտադրածը ծախելու, իսկ հետազոտմ նայել նրան հում նյութ մատակարարելու գործը։ Այսպիսով աստիճանաբար կազմալուծվում ե հին արհեստը։ Համբարային արհեստավորնե-

ըլ, վորպեսզի պահպանեն իրենց նախկին բարեկեցիկ վիճակը, սկսում են ավելի ուժեղ ճնշում գործ դնել քյարգյարների վրա, վորի հետեվանքով արհեստավոր դասակարգի ներսում, նրա զանազան ստորաբաժանումների մեջ ուժեղանում ե դասակարգային պայքարը և իտալիայում ու Գերմանիայում հասնում մինչեվ արյունահեղ ապստամբությունների։ Այդ պայքարից ոգտվում ե միայն առեվտրական կապիտալը, վոր իր ձեռքըն ե զցում արհեստավորական արտադրությունը և աստիճանաբար միջնորդից դառնում արտադրության իսկական դեկավարը։

Փողային տնտեսության զարգացումը, մանր արտադրության բոլոր արդյունքների աստիճանական վերածվելը ապրանքի, գնալով ավելի յեղնդգրկում գյուղական աղգարնակությունը։ Հին ֆեոդալը այլի վե չի բավականանում մթերային տուրքերով, նա փող ե պահանջում գյուղացուց, կամ ավելացնում այդ տուրքերը, վորովհետեւ նա հիմի հնարավորություն ունի գյուղացիների բոլոր պարտավորությունները փողի վերածել։ Ֆեոդալը այժմս դառնում ե կալվածատեր։ Որեցոր աճում ե գյուղացիների ճնշումը, ավելանում են բահրան, կոռի որերը, աղատ գյուղացիները ճորտացվում են. ամեն տեսակի ճնշումների և խատությունների միջոցով կրծատվում են գյուղացիներին պատկանող հողամասերը։ Յեվ ահա, ՏԻՊ դարու վերջերից, կալվածատերերի ու գյուղացիների միջեւ մղվող

խուլ պայքարը վերածվում ե բացարձակ քաղաքացիական պատերազմի։ Գյուղացիական մի ապստամբություն հաջորդում ե մյուսին։ Հաճախ, հենվելով սուրբ գրքի վրա, ըմբուստացած գյուղացիները առաջադրում են վոչ միայն այնպիսի պահանջներ, ինչպիսի են՝ բահրայի նվազացում, հարկերի ու տուրքերի թեթեվացում, այլի նողի հանրային սեփականության վերահաստատումը։ 1303 թ. նման ապստամբություն պայթում ե Հյուսիսային իտալիայում, վանական Դոլչինոյի ղեկավարությամբ։ 1358 թ. Ֆրանսիայում բռնկում ե գյուղացիական պատերազմ, վոր հայտնի ե Ժակ Երի անունով (Ժակ կամ անխելք Հակոբ խոսքից, այդպես եյին անվանում Փրանսիացի գյուղացուն)։ 1381 թ., Ովատ Թայլերի ղեկավարությամբ սկսվեց գյուղացիական մեծ պատերազմն Անգլիայում։ Գյուղացիներն արդեն այդ ժամանակ կասկածում եյին՝ արդյոք այդքան մշտնջենական ե գյուղացիուն ունեցող հասարակաբնը, վորի սրբությունը ապացուցանում եյին նրանց քահանաները։ Նրանք հարցնում եյին—յերբ Աղամը վարում եր, իսկ Յեվան՝ մանում, ո՞վ եր այն պահուն կալվածատեր։ Նրանց ագիտատորները ապացուցանում եյին, վոր բոլոր մարդիկ հավասար են ստեղծվել, վոր մարդի ստրկացումը մարդու կողմից, անարդար մարդկանց մեղսոտ գործողությունների հետեվանք ե, վոր ժամանակ ե արդեն համախմբվել և կալվածատերերի ու անարդար դատավորների հախիցը գալ։


Իր հիմքում գյուղացիական եր նայեվ այն քաղաքացիական պատերազմը, վոր բռնկեց XV դարի սկզբին Չեխիայում և հայտնի յե ավելի «հույան պատերազմներ» անվան տակ, հին կաթոլիկ յեկեղեցու դեմ դուրս յեկած Հուսի անունով։ Կալվածատերերի դեմ մղած պայքարում, գյուղացիները առաջաղեցին ել ավելի ծայրահեղ պահանջներ։ Նրանք ուղում եյին հիմնել այնպիսի հասարակություն, վոր չունենա վո՛չ հարուստ, վո՛չ ել աղքատ, վո՛չ տեր, վո՛չ ծառա և վորտեղ չլինի վոչ տուրք, վոչ հարկ և վոչ ել կալվածատեր։

Սկսած XV դարի յերկրորդ կիսից, Գերմանիայի այս ու այն վայրում գյուղացիական ապստամբություններն ավելի հաճախակի յեն դառնում։ 1525 թ. «Գյուղացիական մեծ պատերազմը» գրավում ե Գերմանիայի մեծ մասը։ Նրա գլխավոր յեկավարներից մեկն եր թուման Մունցերը։

Այդ բոլոր գյուղացիական ապստամբությունները ճնշվեցին աներյեվակայելի վայրագությամբ։ Թե ինչպիսի սուր ատելություն եր աիրում գյուղացինենի և կալվածատերերի հարաբերությունների մեջ, ամենից լավ յերեվում ե այն ժամանակվա յերգերից ու պատմվածքներից։ Ֆրանսիական կալվածատերերի համար բոլոր գյուղացիներն անպայման այլանդակ են, յետեվից ու առաջից սապատափոր, իսկ գերմանացի կալվածատերերի համար՝ գյուղացին յեզ եր

առանց կոտոշների։ Կալվածատերը ամենալավ տրամադրություն ե զգում, յերբ գյուղացին լալիս ե և ամենավատ տրամադրություն՝ յերբ նա ուրախ ե։

Այսպես յեռում եր դասակարգային այսպիսի անունով։ Կալվածատերերի դեմ մղած պայքարում, այս «հին, բարեպայտ պարագային դարերում, այն «հին, բարե-



Թոմաս Մյունցեր

կեցիկ» ժամանակաշրջանում, վոր քահանաներն ու ազնվականները նկարագրում են, վորպես խաղաղության և բարորության թագավորություն, ուր բարի կալվածատերը սրտանց հոգում

եր իր հլու և հնագանդ գյուղացիների մասին:

XVI դարի սկզբներին, հին միջնադարյան հասարակությունը վերջնականապես կազմալուծվեց: Ֆեոդալական հասարակարգը, ֆեոդալիզմը, այն ձեւվով, վոր նա կազմակերպվեց իր ծաղկման շրջանում—XIII դարում, ամբողջապես քայլայվում եւ Բայց նրա կազմալուծումով չդադարեց դասակարգային ռայքարը:

Ընդհակառակը, նոր ժամանակ, վոր սկսվում է միջին դարերի վերջից և վորի սկիզբը սովորաբար հաշվում են XIX դարից, առաջ են գալիս յերկունոր դասակարգ՝ բուրժուազիան և պլոտինատարիան: Թեյեվ ճիշտ եւ, նրանք սկսել եյին կազմակերպվել միջին դարերի յերկրորդ կիսում, բայց միայն XVI դարից եւ, վոր նրանք վորոշակի բնույթ են ստանում:

Այդ դասակարգերի զարգացումը արագացրին մի շարք դեպքեր, վոր տեղի ունեցան XV դարի յերկրորդ և XVI դարի առաջին կիսում: Այդ դեպքերը արագացրին նատուրալ տնտեսության զայրացումը և փողային տնտեսության զարգացումը. նրանք ընդլայնեցին առեվտրի շրջանակը և դրա հետ միասին ուժեղ զարկ տվին սկզբում առեվտուական, ապա՝ արդյունագործական կապիտալի աճմանը:

Միջին դարերում մարդիկ ծանոթ եյին միայն Յեվոպայի, Հյուսիսային Աֆրիկայի մի մա-

սի և Ասիայի արեվմտյան մասի հետ: Հազորդակցության միջոցների վատ դրությունը դժվարին եր դարձնում կապակցությունը Արեվելյան Ասիայի հետ, վորի մասին այն ժամանակները տարածված եյին ամեն տեսակի հեքյաթներ: Բացի այդ՝ ճամփաների գլխավոր հանգույցները տիրել եյին տաճիկները, վորոնք XV դարում գրավեցին Բալկանյան թերակղզին և ամբողջ առաջավոր Ասիան: Այդ պատճառների շնորհիվ, յեղուական, մանավանդ փորթուգալացի և իտալացի վաճառականները ամեն ջանք գործ եյին դնում՝ դեպի Ասիա տանող ծովային ճանապարհը գտնել:

Արդեն 1486 թ. Դիազը, Աֆրիկայի ափերով դեպի հարավ և ուղեգորում և համառում երարի Հուանդանին: 1492 թ. Կոլումբը, արեվմտքով դեպի Ասիա ուղեգորվելով, ճամփին բաց եանում մինչ այդ բոլորովին անհայտ տշխարհամաս—Ամերիկան: 1498 թ. Վասկո դե-Գաման, Դիազի անցած ճամփով բոլորում ե Աֆրիկան ու հայտնագործում Հնդկաստան տանող ծովային ճանապարհը: 1519-21 թ. թ. Մագելանն ու իր ուղեկիցները կատարում են առաջին ճամփորդությունը յերկրագնդի շուրջը:

Այպիսով առեվտրական կապիտալի գործունեության համար բացվեց նոր, անհամեմատ ավելի լայն ասպարեզ: Այժմ արդեն հնարավոր արտահանել ամեն տեսակի ապրանք հեռաեր արտահանել ամեն տեսակի ապրանք հեռաւ Ասիայից և Ոստ-Խնդիայից: Զեռներեց մարդու

դիկ հազարներով ուղեգորվեցին դեպի նոր յերկրներ, առանձնապես Ամերիկա. այստեղ յելքոպացիք սկսեցին հիմնել իրենց գաղութները, վորոնք կապված եյին մնում մայր յերկրի (մետրոպոլիայի) հետ. նրանք ամեն կերպ ոգտվում եյին տեղական ազգաբնակությունից, ինչպես ապրանքափոխանակության, այնպես ել անխիղճ և բացարձակ կողովտի միջոցով: «Այսպես կոչված քրիստոնյա ժողովուրդների բարբարոսությունն ու անամոթ վայրագությունները — զբում ե մի քրիստոնյա — իրենց հպատակ ոտար ցեղերի և այլ դավանանքի պատկանողների վերաբերմամբ զերազանցում են այն բոլոր սարսափները, վոր յերբեքիցե կատարել ե վորյեվե ժողովուրդ նույնիսկ ամենավայրենի ու ամենատգետ, ամենադժուն ու ամենից ավելի անամոթ ժողովուրդները»: Հոլանդական գաղութային տնտեսության պատմությունը «զբսեվորում ե դավաճանության, կաշառքի և սպանությունների սարսափելի պատկերը»:

Վոսկու և մանավանդ արծաթի հանքերի հայտնագործումը Ամերիկայում բազմացրեց արծաթի և վոսկու արտադրությունը շլսված չափերով: Իսկ այդ, իր հերթին, առաջ բերեց դրամների քանակի առատություն, վորոնք ծառայում եյին իրրեվ շրջանառության միջոց ապրանքային շուկայում: Նոր հանքեր մշակելու նպատակով, «բարեպաշտ» յելքուացիք սկսեցին Աֆրիկայից հարյուր հազարներով թշվառ նեղե-

րին տեղափոխել Ամերիկա, ուր, հանուն վաստակի, յենթարկում եյին նրանց ամենավայրագ տանջանքների:

Այս ամենը իսկական հեղափոխություն առաջացրեց առեվմարի և արդյունագործության բնագավառներում: Յեվ այս հեղափոխությեան գլխավոր ազդակը, նոր հասարակության հեղափոխական ելեմենտը բուրժուազիան եր:

Մենք արդեն տեսանք, թե ինչպես միջնադարյան հասարակությեան ծոցում սկսեց զարգանալ նոր առեվմարի ականական դասը, վոր անընդհատ հարստանում եր և կապիտալ կուտակում: Մյուս դասակարգերն ընդհակառակը, փողային տնտեսության զարգացումով ավելի աղքային տնտեսության զարգացումով ավելի աղքատանում եյին: Վաճառականն արդեն չեր բավականանում նրանով, վոր արհեստավոր վարպետը ամբողջապես կախված եր իրենից, ստանում եր վարձով հում նյութ և ստիպված եր իր արտադրածը տալ նրան ծախելու համար:

Այժմ վաճառականը վերցնում ե իր ձեռքը արտադրությունը. նա իր հրամանատարության ներքո համախմբում ե բազմաթիվ արհեստավորների և հատուկ շինության մեջ արհեստանոց ե կազմակերպում: Այդ տեսակի արհեստանոցը, վոր սկզբնական պահուն տարբերվում եր հին համբարային վարպետի արհեստանոցից միայն նրանով, վոր այստեղ արտադրությունը կատար վում եր ավելի խոշոր չափերով և այդպիսով

կրծատվում եյին ծախսերը, կոչվում եր մանուֆակտուր: Առաջ, ասենք քսան կոշկակար կամ դերձակ աշխատում եին քսան արհեստանոցում, այժմ նրանք աշխատում են մեկ արհեստանոցում: Առաջ նրանք աշխատում եյին իրենց համար, այժմ աշխատում են ձեռնարկողի, կապիտալիստի համար:

Բայց շատ շուտով յերեան յեկավ մի այլ, ավելի կարեվոր տարբերություն: Մանուֆակտուրից առաջ ել գոյություն ուներ աշխատանքի բաժանում, բայց դա ավելի շուտ արտադրության տարբեր ճյուղերի բաժանումն եր հասարակությաններառում, աշխատանքի հասարակական բաժանումը: Հասարակության մի շերտը զբաղվում եր գյուղատնտեսությամբ, իսկ մյուսը՝ մշակող արդյունագործությամբ, դրա հետեւանքով ել կատարվեց գյուղի բաժանումը քաղաքի սահմաններում բնակչության մի մասը պարապում եր առեվտրով, մյուսը՝ արհեստներով: Բայց յուրաքանչյուր արհեստավոր, որինակ հյույսնը, ինքը պիտի ընտրեր նյութը, պատրաստեր այս կամ այն կարասիքի նկարը, շիներ նրա տարբեր մասերը և ապա ՚ի մի հավաքեր:

Այսպիսով, արդյունագործության ներսում ել գոյություն ուներ աշխատանքի բաժանումը, բայց ավելի շուտ իրենք բաժանում տարբեր արհեստների, վորոնք, ինչպես տեսանք, միացած եյին ցեխերի մեջ և կորպորացիաների մեջ յեղած աշխատանքի բաժանումը:

Ը ու մ: Գոյություն ունեյին դերձակների, կոշկակարների, հյուսների, զինագործների և այլն համբարություններ, բայց նըանցից յուրաքանչյուրի ներսում առանձին արհեստավորը իր գործի լիակատար վարպետն եր:

Մանուֆակտուրի զարգացման հետեւանքով դրությունը փոխվեց: Հենց վոր մի արհեստանոցում հավաքվեցին մի քանի տասնյակ արհեստավորներ, ասենք ժամագոլ ծներ, արդեն, ինքն ըստ ինքյան, փորձի միջոցով առաջ պետք ե գար ու զարգանար աշխատանքի բաժանումը մեջ: Փոխանակ ժամացույց պատրաստելու աշխատանքը սկզբից մինչեվ վերջը կատարեր մի արհեստավոր, այդ աշխատանքը բաժանվում ե բազմաթիվ մասերի, առանձին գործողությունների, և ժամագործներից յուրաքանչյուրը ամբացվում ե դրանցից մեկին: Այսպես զարգանում ե աշխատանքի բաժանումը, առհետանուցի ներսում—աշխատանքի մանուֆակտուրային ային բաժանումը, մուղանական պահանջման մեջ գործում ցեխերի կամ վոր հետզհետե դուրս ե մղում ցեխերի կամ կորպորացիաների մեջ յեղած աշխատանքի բաժանումը:

Մանուֆակտուրը զարգանում եր և մի այլ ուղիով: Ցերը պալատական ազնվականությունն ու հարստացած վաճառականները կառավերի խոշոր պահանջ ցուցաբերեցին, սկսեց զարգերի կառական մանուֆակտուրը: Այդ գանալ կառագործական մանուֆակտուրը ժերը ժամանակ ձեռնարկության տերը ժողովում եր ժամանակ:

մի արհեստանոցում այն բոլոր տարբեր արհեստավորներին, —կառագործին, կաշեգործին, դարչնին, փականագործին, ներկարարին և այլն,— վորոնց արտադրության ընդհանուր արդյունքը, պը ո դ ու կ տ ն եր հանդիսանում կառքը, Վորովինետեվ ներկա դեպքում փականագործը, կաշեգործը ամբողջապես նվիրվում են միայն կառագործության, ժամանակի ընթացքում նրանցից ամեն մեկը կորցնում ե իր նախկին փորձառությունը և զրկվում ե ամբողջապես իր արհեստով պարապելու կարողությունից։ Ամբողջական արհեստը գիտցող վարպետից նա դառնում ե միայն առանձին մաս պատրաստող, մասնակի բանվոր։

Բայց ինչ ուղիով ել չզարգանար մանուշակտուրը, վորպիսի խոշոր չափերի ել չհասներ, այնուամենայնիվ հիմքում նա բարդացած ու լայնացած արհեստանոց եր։ Ինչպես արհեստային, նույնպես ել մանուֆակտուրային արդյունագործությունը հիմնված եր ձեռքի աշխատանքի վրա։

Յեվ այսպես իրերի գրությունը շարունակվում եր մինչեվ XVIII դարի յերկրորդ կեսը, յերբ մանուֆակտուրային արդյունագործությունը, վոր անընդհատ զարգանում եր XVII դարից սկսած, ստիպված եղավ առաջնությունը զիջել խոշոր արդյունագործության։

Հասարակական արտադրության մեջ տեղի ունեցավ նոր հեղափոխություն, վոր սո-

փորաբար կոչվում ե արդյունագործական հեղափոխություն կամ արդյունագործական հեղաշրջում։

Նա ծնունդ առավ Անգլիայում, XVIII դարի յերկրորդ կիսում և աստիճանաբար սկսեց նվաճել մնացած յերկրները։ Նա հետեւվանք եր մի կողմից արդյունագործութեան շրջանում նոր շարժիչի՝ շոգեմեքենայի գյուտի, վոր հնարավորություն եր տալիս մարդու և ձիու կենդանի ույժը փոխարինել շարժիչ նոր ույժով, մեխանիքական ույժով և մյուս կողմից՝ մի շարք մեքենաների (մանելու և գործելու) գյուտի, վոր հնարավորություն տվեց փոխարինել մարդկային ձեռքի արվեստը մի շարք մեքենայական հարմարություններով։ Ականձ 1760 թ. մի գյուտը հաջորդում ե մյուսին։ Այդ մեքենաները, վոր սկզբում շատ թանգ եյին և մատչելի միայն խոշոր կապիտալիստներին, արդյունագործության մեջ կատարյալ հեղաշրջում առաջ բերին։ Մեքենաները նույն ապրանքը պատրաստում եյին ավելի լաւ և ավելի եժան, քան մանուֆակտուրային բանվորները իրենց ձեռքի գործիքներով։ Այս պատճառով շոգու և մեքենաների կիրարկման վրա հիմնված նոր խոշոր արդյունագործությունը արագ կերպով վաճառմ եր մանուֆակտուրային արդյունագործությունը բոլոր շուկաներից։

Մենք տեսանք արդեն, թե ինչպես Ամերիկայի և Ասիա տանող ծովային ճանապարհի

գյուաը լայնացրեց մանուֆակտուրային արդյունագործության սպառման շուկան։ Հին շուկայի փոխարեն, վոր սահմանափակված եր մի կամ յերկու յերկրով, մի կամ մի քանի քաղաքներով, XVI դարից արդեն սկսեց զարգանալ համաշխարհային, միջազգային շուկան։ Բայց միայն խոշոր արդյունագործության զարգացումը վերջավորեց այդ համաշխարհային շուկայի ստեղծագործումը։

Մեքենաների գյուաը վերջնականապես անջատեց յերկրագործական արդյունագործությունը մշակող արդյունագործությունից։ Գյուղական մանվածագործությունն ու ջուլհակությունը անխնա վոչնչացվում եյին։ Առանձին յերկրների միջեվ ստեղծվեց աշխատանքի նոր բաժանում։

Մինչեվ մեքենաների գյուաը յուրաքանչյուր յերկրի արդյունագործությունը մշակում եր գերազանցապես այնպիսի նյութեր, վոր արտադրվում եյին սեփական «հողի» վրա։ Անզլիան գլխավորապես բուրդ եր մշակում, ֆերմանիայում ծաղկում եր կտավի արդյունագործությունը, իսկ մրանսիայում՝ մետաքսի արդյունագործությունը։ Շնորհիվ մեքենաների և շոգու կիրառման աշխատանքի բաժանումը այնպիսի չափեր ընդունեց, վոր խոշոր արդյունագործությունը ազատագրվեց հայրենի հողի վրա արտադրած նյութերի կախումից և ներկայիս մշակում ե այնպիսի նյութեր, վոր նա ստանում ե աշխարհի զանազան ծայրերից։

Յերբ կազմակերպվեց կոմունիստների Միությունը, ամբողջ արդյունագործության ղեկավարությունը գտնվում եր արդեն արդյունագործական բուրժուազիայի ձեռքում, վորը կառավարում եր հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորների վիթխարի բանակներ։

Այսպիսով յերեվում ե, վոր չնայած բուրժուազիան սիրում ե միշտ խոսել գոյություն ունեցող հասարակական կարգերի հավիտենականության մասին, ինքը պատմական արդյունք ե, կար ժամանակ, յերբ այդ բուրժուազիայի հոտն անդամ չկար, հետեւ վարար կարող ե գալ նայել այնպիսի ժամանակաշրջան, յերբ նա դարձյալ գոյություն չի ունենա։ Այս միտքը առանձնապես վախեցնում ե բուրժուազիային և նրա պոչից կախված բուրժուական գիտության ներկայացուցիչներին։ Ուզես, թե չուզես, համենայն գեպս չի կարելի շընդունել, վոր բուրժուազիան ունի իր պատմությունը, վոր նա դարերից ի վեր չե, վոր գոյություն ունի։ Սակայն մեր գիտնականները, այժմ իրար առաջ կտրելով, ցանկանում են ապացուցել, վոր յեթե բուրժուազիան իսկապես ծնվել ե, առաջ ե յեկել, այնուամենայն վել ե, մեռնի, չի անհետան ա, այլ կպահպանի իր գոյությունը հավիտենապես, ինչպես և մեր յերկրագունդը։ Այսպես ուրեմն, ինչպես և մեր յերկրագունդը։ Այսպես ուրեմն, այժմս արդեն չկա։

Բուրժուազիան չի սիրում նայել վերհիշել
այն պայքարը, վորինքը վարել ե ֆեռդալների,
ազնվականների դեմ, մինչեվ տիրող դասա-
կարգ դառնալը։ Նա կցանկանար մոռացության
տալ ամեն մի հիշողություն մարդկային պատ-
մության մեջ խաղացած իր հեղափոխական դե-
րի մասին։ Չե վոր, մի գուցե բանվորները, վո-
խանակ յենթարկվելու իրենց բախտին, կարող
լինեն նրա որինակին հետեւկել ու թուլությունից
չփառելով, կազմակերպվել, միանալ, մինչեվ
վոր հասարակական խոշոր ույժ դառնան։

Հատկապես բուրժուազիայի զարգացումը
ցույց ե տալիս, վոր նրա հասարակական նշանա-
կության աճման, հասարակական արտադրու-
թյան մեջ ձեռք բերած դերի զարգացման
հետ միասին աճում եր նայել նրա քաղաքական
նշանակությունը։ Բուրժուազիայի հասարակական
զարգացման յուրաքանչյուր քայլը ուղեկցված
եր նոր քաղաքական նվաճումներու վ։

Կար ժամանակ, յերբ բուրժուազիան, ֆեռ-
դալների կողմից զանազան պարտավորություն-
ներով ու տուրքերով ճնշված և կեղեքված մի
դաս եր։ Ֆեռդալները արգահատանքով եյին նա-
յում քաղենիների վրա և իրենց դյուցազներ-
գական պատմվածքներում ծաղրում եյին գոեհիկ
քաղենիներին վոչ պակաս, քան գյուղացիներին։

Բայց քաղենիները, պատսպարվելով իրենց
քաղաքներում, ուր զարգանում եյին առեվտու-
րը և արդյունագործությունը, կազմեցին ինք-

նավար համայնքներ, ասոցիացիան եր ու
զինվեցին իրենց սինյուներին, աղաներին
դիմադրելու համար։ Այդ համայնքների անունն
եր՝ կոմունա և այդ անունը ատելի յեր յեպիս-
կոպոսներին և ֆեռդալներին, ինչպես այժմ
խորհրդային կոմունան՝ ամեն տեսակ սպիտակ
գվարդիականներին ու յեվրոպական կապիտա-
լիստներին։

Զինվորական ույժով և մահվան պատժով
եյին ճնշում «վայրագությունը այդ սեփ ամբոխի
վորը կոմունայի անվան տակ հող եր
պատրաստում ապստամբությունների ու բուն-
տերի համար՝ թագավորական իշխանության
դեմ»։ Այսպես ե զրում մի հին ֆրանսիական
տարեգիր։ Կամ թե լսենք մի յեկեղեցական պատ-
մագրի, չիբեր յեպիսկոպոսին, վորն ապրում եր
XII դարում։


«Կոմունա—ասում ե նա—նոր և գար-
շելի բառ ե։ Ահա թե նա ինչ ե նշանակում.
հարկատու մարդուկները վճարում են իրենց
սինյուններին վոչ ավելի, քան տարին մի անգամ
վորոշ հարկ։ Յեթե նրանք վոր և կերպ խախ-
տում են որենքը, ապա յենթարկվում են որեն-
քով սահմանված տուգանքի։ Իսկ այն վողային
քով սահմանված տուգանքի։ Իսկ այն վողային
քով սահմանված տուգանքի։ Վոր ընդունված ե հավաքել ճոր-
դանձումներից, վոր ընդունված ե հավաքել ճոր-
դանձումներից, նրանք ամբողջապես ազատվում են»։

Այն ժամանակվա բուրժուաները կանգ չեյին
առնում վոչ բունտի և վոչ ել տեսորի առջեվ։
Յերկարատեղ ու համառ պայքարից հետո նրանց

ճանաչեցին իբրեւ առանձին իրավունքներով ու արտօնություններով ոգտվող մի դաս, հոգեվորականության և ազնվականության կողքին։ Ֆրանսիայի Գերագույն Շտատներում (դասերի ժողով) ու Անգլիայի Համայնքների պալատում քաղենիները, բուրժուաները իրենց ձայնն ունեյին։ Ինքը, թագավորական իշխանությունը հենվում եր նրանց վրա, յերբ պետք եր լինում զապել սանձից չափազանց դուրս յեկած անհնազանդ ֆեոդալներին։

Մանուֆակտուրային եպոխի առեվտրա-արդյունագործական բուրժուազիան պաշտպա-նում եր թագավորական իշխանությունը և կըռ-փում խոշոր ֆեոդալների դեմ, վորոնք չեյին ուղում հրաժարվել իրենց նախկին արտօնու-թյուններից։

Յուրաքանչյուր ֆեոդալ, իր կալվածքի շուրջը սահմանում եր հատուկ մաքսային գիծ, կամայականորեն տուրքեր եր դնում իր հողով անցնող վաճառականների վրա, իսկ յերբեմն, իր շրջանի համար հատուկ վորոշումներ հրատարա-կելով, ուղղակի կողոպտում եր նրանց։ Յեվ վոր-քան թագավորական իշխանությունը պայքարում եր այդ տեղական արտօնությունների դեմ, ըստայնմ ել բուրժուազիան, վորը շահագըր-գոված եր շուկան լայնացնելու մեջ, չափի, քա-շի ու գրամի միորինակությամբ և միասնական ընդհանուր առեվտրական ու քաղաքացիական որենսդրությամբ թելաղրում եր այդ իշխանու-



Վրանիական Մեծ Հեղափոխությունը (1789—94)
Բատիլիայի առանձ 14 հունի 1789 թ.

թյանը համապատասխան միջոցներ, ոգնում եր նրան՝ այդ բոլոր մանր կալվածքներից մի խոշոր միապետություն կազմելու։ Ահա այս իմաստով, ինչպես ասված ե Կոմունիստական Մանիփեստում, բուրժուազին հիմք ե յեղել խոշոր միապետությունն երի։

Սակայն բուրժուազիայի զարգացումը այդտեղ կանգ չառավ։ Նա չեր բավարարվում իր քաղաքական ազգեցության աճումով։ Հասավ ժամը, յերբ նա առաջարեց քաղաքական իշխանություն գրավելու հարցը, ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը՝ իշխանություն գրավելու համար մղվող պայքարի սկիզբն եր։ Մանիփեստի յերեվան գալու պահուն, յերբոպական յերկու յերկրներում—ֆրանսիայում և Անգլիայում բուրժուազիան արդեն հասել եր քաղաքական իշխանության։ Հին ֆեոդալիզմից այդ յերկրներում մնացել եյին միայն վիլատակներ և մնացրդներ, նախկին ֆեոդալներն ու սինյորները վաղուց դարձել եյին նույնպիսի արդյունագործական և փողային կապիտալիստներ, ինչպես և վոչ ազնվական բուրժուաները, վորոնց վրա նրանք առաջ արհամարանքով եյին նայում։ Յեկ կապիտալիստական այն յերկրներում, ուր խոշոր արդյունագործությունը իր ծայրագույն զարգացմանն եր հասել, կոնսուլտացիոն յերկրներում, վոր ունեյին պարլամենտ, դեպուտատների (ներկայացուցիչների) կամ համայնքների պալատ, պետական իշխանությունը, կա-

ռավարությունը արդեն վաղուց եր դարձել բուրժուազիայի հանձնարարությամբ գործող կոմիտե և նրա հաստրակական գործերի վարիչը։

Ժամանակակից բուրժուազիան ընդհանրապես հիշեցնում ե այն մեղսավոր ծերունուն, վորը «յերիտասարդ» հասակում շատ ե կողոպտել» և այժմս, ծերության հասակում, ցանկանում ե հոգին փրկել։ Նա կուղենար կանգնեցնել զարգացման այն արագ ընթացքը, վոր բարձրացրեց իրեն հասարակական շենքի գագաթը։ Նա կկամենար համոզել բանվորներին, վոր նրանց համար ավելի լավ ե հաշտվել իրենց վիճակի հետ, և ինքն ել ուրախությամբ կմոռանար իր հեղափոխական անցյալը…

Բայդ դա նրան չի հաջողվում։ Նրա սեփական իշխանությունը այնքան ել յերկար չի, վորպեսզի արդեն մոռացված լինեն այն ուղիւները, վորոնց միջոցով բուրժուազիան հասել ե այդ իշխանությանը։ Նա կուղեր, վոր իր և բանվորների միջեվ հաստատվեյին նույնպիսի ի դիւլի ական, այսինքն՝ խաղաղ, ու պատրիարքական՝ այսինքն՝ հայրական և վորդիական հահարաբերություններ, ինչպես մի ժամանակ գոյյություն ունեյին միջին դարերում։ Բայց նա ինքն իր ձեռքով կործանեց այդ ֆեոդալական աշխարհը, նա ինքը փողը դարձրեց մարդկանց գլխավոր կապը ու գլխավոր ույժը հասարակության մեջ։ Ամեն ինչ—քահանայի որհնությունը, նկարչի ներշնչումն ու գիտնականի գործունեու-

թյունը ծախու դարձավ: «Փողը քահանային
ել կգնի, աստծուն ել կխաբի»:

Ծախու յե ամեն ինչ. լույսը յերկնքի
Յեվ յերկը տված պարզեցը սիրո—
Վողջը ծախվում ե ազատ շուկայում:
Փողը կարող ե ամեն բան գնել,
Յեվ ամեն ինչի գին նշանակել
իրա կնիքով:

Իսպանական հայտնի գրող Սերվանտեսը, Լամանշի ասպետ Դոն Բիշուտի մասին գրած իր պատմվածքում ցույց տվեց, թե ինչպիսի ծիծաղելի և զավեշտական տեսք ե ընդունում միջնադարյան ասպետը իր անմեղ յերազանքով, ասպետական վոգեվորությամբ ու աստվածապաշտությամբ, յերբ նա ընկնում ե բուրժուական տնտեսության արթուն աշխարհի:

«Ճակտիդ քըտինքով պիտի դու աշխատես»,
«տուր արքայինը՝ արքային, իսկ աստծունը՝
աստծուն»—այս բոլոր կրոնական ու քաղաքա-
կան դրթիչ միջոցներին, վորոնց ոգնությանն
եին դիմում միջին դարերում յեկեղեցին և
պետությունը՝ ստորին դասակարգերի աշխա-
տանքը դարդարելու համար, բուրժուազիան
հակառեց բացարձակ շահագործում՝ հանուն
վաստակի, հանուն կ ապիտալիք։ Հին քարոզ-
ները նա փոխարինեց դաժան անհրաժեշտու-
թյան մտրակով։ Բանվորը նրա համար միայն

բանվորական ույժ ե, վոր նա պատրաստ ե ծծել
մինչեվ վերջին աստիճանը, շահ ագործ ել
ամենաանամոթ կերպով, յեթե միայն այդ կա-
րող ե ավելացնել նրա վաստակը:

Հին ֆեոդալների կոպիտ ույժին, բռունքը
իրավունքին—բուրժուազիան հակադրեց վոսկու
ույժը։ Միջնադարյան ասպետությունը մի ան-
գամ չի ձեռնարկել արշավանքի—խաչակրաց ար-
շավանքներին—Յերուսաղեմում գտնվող տիրոջ
տաճարը անհավատներից խլելու համար։ Բուր-
ժուազիան նվաճեց ամբողջ աշխարհը, արշա-
վանքներ կատարեց դեպի յերկրագնդի բոլոր մա-
սերը՝ իր վաստակը ավելացնելու համար։ և այս-
տեղ, ուր միջնադարյան ասպետները խաչ ելին
կամենում կանգնեցնել, նա նավթ ե հ անում։

Հին աշխարհն ու միջին դարերը կառուց-
ման արվեստի հրագիներ ստեղծեցին։ Յեզիր-
տացիները հպարտանում եյին իրենց պիրամիդ-
ներով (բուրգերով), հռոմայեցիները խոշոր
ջրանցքներ անց կացրին, ֆեռալիներն ու սեն-
յորները գոթական տաճարներ կառուցեցին։ Բայց
ի՞նչ նշանակություն ունեն դրանք այն հրագ-
ների հետ համեմատած, վոր կատարեց բուր-
ժուազիան իր հարյուրամյա տիրապետության
ընթացքում։ Նա ձեղքեց ցամաքները ջրանցքնե-
րով, անց կացրեց Սուեզի և Պանամի պարա-
նոցները ու այդպիսով միացրեց ովկիանները,
վորոնց ջրերը ամեն ուղղությամբ ակռովում են
հսկայական շողենավերով։ Նա կառուցեց յերկա-

թուղիներ և հսկայական կայարաններ ու գործարանային շինություններ: Նա ամբողջ աշխարհը պատեց ելեքտրական հեռագրի ցանցով, դուրս քաշեց յերկրի ծոցից ածուխ, յերկաթ, նավթ, նա ամբողջ յերկրագունդը ծածկեց միլիոնարնակ քաղաքներով:

Յեվ չնայած այս բոլորին, բուրժուազիան յերազում ե այն լավ ժամանակների մասին, յերբ մարդկային հասարակությունները, վորպես մըրջյունանոց կամ մեղվի փեթակ, դարերի ընթացքում վերարտադրվում եյին միեվլույն տեսքով, յերբ արտադրության հին յեղանակները, իսկ դրանց հետ միասին նայեվ շահագործման հին ձեվերը և հասարակության հին բաժանումը դասակարգերի մնում եյին անփոփոխ:

Բայց դա «անմիտ յերազանք ե»: Արտադրության կապիտալիստական, բուրժուական յեղանակը հենց նրանով ե նշանավոր, վոր անդադար կատարելագործում ե աշխատանքի գործիքները և անսովոր չափերով դարգայնում ե հասարակության արտադրական ուժերը: Կապիտալիստները կվամենային կամք առնել զարգացման մի վորոշ աստիճանի վրա, բայց մըցումը՝ կո՞նկո՞րե՞ն ցի ան ստիպում ե նրանց ամեն անգամ նոր կատարելագործություններ մտցնել՝ իրենց կոնկուրենտներին—մըցակիցներին ջախջախելու համար: Յուրաքանչյուր նոր գյուտ, արադրության նոր ձեվերը, հնարավորություն են տալիս իջեցնել գները և գրավել շուկան:

«Կապիտալը խուսափում ե դալմաղալից ու կովեց և աչքի յե ընկնում իր վախկոտությամբ»: Դա իրավացի յե բայց վոչ ամբողջապես: Կապիտալը վաստակի բացակայությունից կամ սակավությունից վախենում ե ճիշտ այնպես, ինչպես բնությունը՝ դատարկությունից: Բայց յեթե բավարար չափով վաստակ կա, կապիտալը համարձակ ե դառնում. ապահովեք նրան 10% -ով, և կապիտալը համաձայն ե ամեն տեսակի կիրառման, յերբ $0\%-ը$ 20% -ի հասնում նա ավելի յե կենդանանում, $50\%-ի$ դեպքում նա, բառիս բուն իմաստով, պատրաստ ե իր գլուխը ջարդելու, 100% ստանալիս, նա վոտնահարում ե մարդկային բոլոր որենքները, իսկ $300\%-ի$ դեպքում՝ չկա այնպիսի հանցանք, վոր նա չհամաձայնվի կատարել, թեկուզ և կախաղանի վտանգի տակ: Յեթե խոռվություններն ու կոփվությունները վաստակ են բերում, կապիտալը կոժանդակի նրանց: Ապացույց—կոնտրաբաններ ու ստըրկավաճառությունը»:

Դժվար ե գտնել ավելի թունդ հայրենասերների, քան բուրժուաներն են: Մենք արդեն տեսանք, թե ինչպես նոր վաճառականը, առեվտրական կապիտալի ներկայացուցիչը նպաստում եր՝ ավատական վորը կալվածներից կենտրոնացած, խոշոր պետություն, մի ազգություն ստեղծելուն: Նման միասնական ազգային պետություն ստեղծելուն ավելի յեկա ոժանդակում եր առջունագործական բուրժուազիան: Իրենց ու-

բույն կյանքով ու սովորություններով ապրող առանձին պրովինցիաներից—(գավառներից) նա ստեղծում է մի ամբողջություն, միատեսակ որենքներով. հանուն կոնկուրենցիայի պայմանների հավասարության, նա ստեղծագործում է իր բուրժուական հայրենիքը:

Միայն բուրժուազիային հաջողվեց դուրս քաշել գյուղացիությունը գյուղական կյանքի բութ միջավայրից: Նեղ շահերի շրջանը, վորի մեջ ապրում ե գյուղացին, ստիպում ե նրան կպած մնալ իր սովորություններին և հաճախ միայն արտաքին բնույթ կրող առանձնահատկություններին:

Գյուղացին, վոնց վոր յեզը.—
Գլուխը վոր մտավ
Մի սարսաղություն—
Մահակով ել ուզես—
Չես հանի ենտեղից:

Կապիտալիզմը քար ու քանդ արեց այդ նեղ յուրահատուկ աշխարհը, վոր անասնական համառության և ապշության աստիճանի սահմանափակ ե:

Բուրժուազիային հաջողվեց գյուղացիներին պատրիոտ դարձնել ու նրանց ոգնությամբ հաստատել իր տիրապետությունը Ֆրանսիայում և դուրս քաշեց գյուղացիներին աղնվականության լծի տակից, աղատեց կոռից, սակայն յեն-

թարկեց ի՞ր իշխանության, ի՞ր հոգեկան ազդեցության:

Յեկ միյեմսույն ժամանակ բուրժուազիան հաճախ իր կամքին հակառակ, ոժանդակում ե ազգային պատմեղների վոչնչացման, վորով նա փոխարինեց ավելի նեղ, շրջանային սահմանները: Ապրելով համաշխարհային շուկայով, նա անընդհատ լայնացնում ե այդ շուկան: Նա հ ավասար ե ցնում ե զանազան յերկրներում գույություն ունեցող արտադրության յեղանակները: Նա ամրող աշխարհից ստեղծում ե մի պետություն, համաշխարհային պետություն, կոսմոպոլիտ և աղնվականության ու հետամնացության դեմ, նա առաջադրեց համաշխարհային քաղաքացու—կոսմոպոլիտ ի իդեալը: Բայց իր պատմեկության այդ վարդագույն յերազներից հրաժարվելուց հետո ել նա, կամա ակամա, այլակերպում ե աշխարհի բոլոր յերկրները կոսմոպոլիտային վոգով: Նա ոժանդակում ե միջազգային հարաբերությունների զարգացման: Նա ստեղծեց միջազգային փոստ, հեռագիր նա զարգացնում ե միջազգային փոխանակությունը ամեն տեսակի արտադրություններով, սկսած չթից մինչեւ Պենկերտոնն ու կինոդրաման: Ճշմարիտ ե, այս բոլորը ծծված են այսպես կոչված բուրժուական կուլտուրայի գարշելությամբ, բայց բուրժուազիայի այդ աշխաշելությամբ, բայց բուրժուազիայի այդ աշխատանքը ստեղծագործում ե նայեկ այնպիսի մի-

ջազգային ջրանցքներ և ուղիներ, վորոնցով անցնում են և նրան թշնամի ուրիշ ազդեցություններ: Յերբեք աշխարհը այնպիսի միասնական, ընդհանուր կյանքով չեր ապրել, ինչպես բուրժուազիայի տիրապետության եպոխայում:

Սակայն չնայած արտադրական ուժերի այդպիսի անսովոր աճման, բուրժուական հասարակությունը պարբերաբար, ժամանակ առ ժամանակ, յենթարկվում է այնպիսի ցնցումների, վորոնց ծանոթ չեր նախընթաց հասարակություններից և վոչ մեկը: Դրանք արդյունագործության և առեվտրի շրջանում տեղի ունեցող կրիզի սներն են, առեվտրա-արդյունագործական կրիզիները:

Ի՞նչ է կրիզիսը: Քիչ առաջ եր, ինչ ֆաբրիկները ամբողջ թափով աշխատում եյին, բանվորների թիվը աճում եր, առեվտուրը հազիվ եր կարողանում սպառել արտադրած ապրանքները, չանկարծ արտադրության անիվը, վոր գլխապտույտ արագությամբ դառնում եր, կանգնեց: Պատկերը ամբողջապես փոխվում ե: Առեվտուրը կանգ է առնում, բոլոր շուկաներն ու խանութները լցվում են ապրանքներով, վոր ծախելու հնարավորություն չկա: Շատ վաճառականներ և ֆաբրիկանաներ քայլայվում են, բանվորները հազարներով ու հարյուր հազարներով փողոց են շպրտվում, մուրացիկների թիվը աճում ե: Բազմանում ե հանցագործությունների քանակը, մահացությունը ուժեղ կերպով աճում է, կարծես

ամբողջ աշխարհի յերեսով փոթորիկ անցավ: Ի՞նչ պատահեց: Սո՞վ: Աղե՞տ:

Վո՞չ: Բանից դուրս ե գալիս, վոր հասարակությունը չափազանց շատ ապրանք է արտադրել, ու այն ժամանակ, յերբ խանութները լեփ լեցուն են հացով և ուրիշ մթերքներով, նրանց կողքին մարդիկ քաղցից մեռնում են, վորովհետեւ այդ ապրանքները գնելու հարավորություն չունեն: Անցնում է մի քանի տարի, ապրանքները կամ ուղղակի վոչնչացվում են, կամ ծախվում շատ ցածր գներով, արտադրության անիվը դարձյալ արագացնում է իր շարժընթացքը, և այսպես շարունակվում է մինչեւ նոր խափանում: Ամենից ավելի տուժում են բանվորներն ու ամեն տեսակի մանր մունը մարդիկ՝ գյուղացիները և արհեստավորները: Տուժում են նայել մանր կապիտալիստները: Խոշորների համար նման փոթորիկները անվտանգ են անցնում: Նրանք կարծես ամուր կաղնիներ լինեն անտառում: Անցավ փոթորիկը և վոչնչացք գաճաճները, իսկ հսկաների համար ավելի լայն տարածություն բացվեց և նրանք այժմս կարող են ավելի ուժեղ թափով հյութեր ծծել հողից:

Բայց ո՞ւր են թագնված նման կրիզիսների պատճառները: Դարձյալ նրանում, վոր ներկայիս ամեն ինչ արտադրում են մի խումբ կապիտալիստներ, վորոնք արտադրության մեջ ղեկավարվում են վոչ թե ամբողջ հասարակության կարիքներով, այլ իրենց վաստակով: Ցու-

ըաքանչուր ֆարեիկանտ արտադրում ե իր ցանկությամբ ու պատասխանատվությամբ։ Յերբ գները բարձրանում են և վաստակը ավելանում ե—նա ընդլայնում ե արտադրությունը, յերբ գները ընկնում են և վաստակը պակասում—նա կրճատում ե արտադրությունը։ Դա, առանձին կապիտալիստների ազատ կոնկուրենցիայի—մըցության հետեւվանքներից մեկն ե, վոր ընորոշում ե բուրժուական հասարակությունը։ Միջին դարերը շատ աղետներ գիտեյին, բայց այնպիսի աղետ, վոր առաջ ե գալիս առատությունից, ինչպես կրիզիսները,—նրանց անծանոթ եր։ Վորովինետել աշխատանքի գործիքները արդյունավետ չեյին—որվա մեջ 24 ժամից ավելի չես կարող աշխատել, —այդ պատճառով ել դժվար եր վոր և ե բան չափից դուրս արտադրել։ Բայցի այդ մարդիկ աշխատում եյին վորոշ շուկայի համար, հաճախ ուղղակի պատվերով, ինչպես այժմյան մանր արհետավորները քաղաքներում։ Դերարտադրությունը կարող է խոլերային համաճարակի նման ժամանակ առ ժամանակ յերեվացող մշտական հիվանդություն դառնալ միմիայն բուրժուական հասարակության մեջ, վորի արտադրական ուժերը անընդհատ ու անդադար զարգանում են, և ուր սակայն բացակայում ե արտադրության վոր և պլան։ Այսպիսով, ինքը, բուրժուական հասարակությունը ծնում ե այնպիսի ուժեր, վորոնց վրա նա իշխել ան-

ընդունակ ե։ Պարբերական կրգիսները ամենալավ ապացույցներն են այն բանի, վոր հասարակությունը կարոտ ե արմատական փոփոխության, վոր նա գտնվում ե սոցիալական հեղափոխության մեջ առ նախորյակին։ Յեկ ինչպես ավատական հասարակությունը ինքը ծնեց բուրժուազիան, վոր հեղափոխության հասարակությունը, այնպես ել բուրժուազիան իր հերթին ստեղծում ե պրոլետարիատը, վորը կվատարի բուրժուական հասարակության հեղափոխումը, հեղաշրջումը։

Ո՞վ ե պրոլետարիատը։ Մենք տեսանք վոր պրոլետարներ կային դեռ հին Հռոմում, վոր այս անունը վերցված ե լատիներեն լեզվից։ Պրոլետարը—դա այն անտունանտեր և պորտաբույծ մարդն ե, վորը միայն յերեխաներ ե արտադրում։

Բայց հոռմեական ու ժամանակակից պրոլետարների մեջ վոչ մի նմանություն չկա։ Հռոմի պրոլետարները հողազուրկ քաղաքացիներ եյին։ Նրանք չեյին արտադրական գլխավոր դասակարգը և ձգտում եյին միայն իրավունք ձեռք բերել՝ մանակից լինելու այն հսկայական ավարին, վոր Հռոմի պատրիկները հավաքում եյին հպատակած ժողովրդներից։

Արդի վարձու բանվորների դասակարգը պրոլետարիատ անունով մկրտեցին միայն XIX դարում, թեյեկ վարձու բանվորներ շատ վաղուց գոյություն ունեյին։ Պրոլետարիատը, կամ վարձու բանվորների դասակարգը հասարակության

այն խավը ե, վոր ապրում ե բացառապես իր բանվորական ուժը ծախելով և վոչ թե վոր և ե կապիտալից ստացվող յեկամուտով, նրա բարությունն ու թշվառությունը, կյանքն ու մահը, —կարձնրա ամբողջ գոյությունը կախված ե այն բանից, թե արդյոք պահանջ կա բանվորական ուժի, այսինքն՝ արդյունագործական ձեռնարկությունների վիճակից և ազատ կոնկուրենցիայի անհամար յերերումներից: Նրա բանվորական ուժը նույնպիսի ապրանք ե, ինչպես և շուկա ընկնող մյուս բոլոր ապրանքները, միայն այն տարբերությամբ, վոր այլ ապրանքները, անշունչ լինելով, ուրիշ մարդկանց կողմից են շուկա բերվում, իսկ նա ինքը «իր ազատ կամքով» ե շուկա գույնիս՝ այս կամ այն ժամանակամիջոցով կապիտալիստներին ծախվելու համար:

Պրոլետարը ստրուկ չե: Վերջինս ծախված ե մի անգամ ընդ միշտ, պրոլետարը ծախվում ե վորոշ ժամանակով միայն: Ստրուկը սովորական իր ե համարվում, իսկ պրոլետարը ազատ քաղաքացի յե: Ստրուկը յերբեմն կարող ե նյութապես ավելի լավ ապրել, քան պրոլետարը, յեթե նրա տերը չի կարող իրեն արագ փոխարինել մի ուրիշով ու ստիպված ե հոգալ նրա մասին, իսկ պրոլետարը շատ հաճախ և շատ հեշտ կորցնում ե աշխատանքը, վորովհետեւ գործատերը կարող ե ուրիշ աշխատավոր ճարել:

Պրոլետարը ճորտ չե: Նա չունի վոչ մի սեփականություն, մինչդեռ ճորտն ունի իր սե-

փական կտոր հողը և արտադրության միջոցներ: Պրոլետարը աշխատում ե կապիտալիստին պատկանող արտադրական միջոցներով և աշխատում ե այդ նույն կապիտալիստի հաշվին, ստանալով նրանից միայն աշխատավարձ: Մինչդեռ ճորտը պարտադիր կերպով ամրացված ե հողին, պրոլետարը՝ «ազատ թռչուն ե»:

Պրոլետարը արհեստավոր չե: Վերջինս աշխատանքի միջոցներ ունի և կարող ե «խղճով» ու «չափավոր» կերպով շահագործել մի զույգ ոգնականների և մի զույգ աշկերտների: Իսկ յեթե նրա տատը լավ ե գուշակել, կարող ե նույնիսկ փոքրիկ կապիտալ ել շահել:

Բայց կա նայեվ մի ուրիշ, ավելի կարեվոր տարբերություն պրոլետարիատի և մյուս բոլոր աշխատավոր դասակարգերի միջեվ: Առանձին պրոլետարը, ինչպես և առանձին ստրուկը կարող ե իր շահագործողների շարքը թռչել, վորպես նրանց ապասավոր: Բայց ամբողջ պրոլետարիատը նման ճանապարհով չի կարող ազատագրվել: Ստրուկությունը կարելի յե վերացնել առանց սեփականությունը վերացնելու: Բավական ե միփականությունը վերացնելու: Բավական ե միայն վերացնել սեփականության իրավունքը մարդու վրայից: Ճիշտ նույնպես կարելի յե վոչնչացնել նայել ճորտությունը, առանց մասնավոր սեփականությունը վաչնչացնելու: Ընդհակառակը, ճորտը ճգտում ե ազատվել հենց այն պատճառով, վոր ցանկանում ե անսարգելք ոգտվել իր սեփականությունից, իր հողաբաժնից:

Արհեստավորը, վոչ միայն անհատաբար, այլև հենց իբրեւ ամբողջ մի դասակարգ, դարձյալ կարեք չի զգում մասնավոր սեփականությունը ընդհանրապես վերացնելու։ Նա ինքը սեփականատեր ե և ուզում ե միայն, վոր իբրեւ այնքան ել խիստ չնեղեն ավելի խոշոր մասնավոր սեփականության ներկայացուցիչները։ Ահա այս պատճառով նա, ինչպես և հին համքարային արհեստավորը, կողմնակից ե ազատ կոնկրենցիան ամեն կերպ սահմանափակելուն, խոշոր կապիտալիստների վրա ճնշում գործ դնելուն, բայց միաժամանակ նա հանդիսանում ե մասնավոր սեփականության ամենակատաղի պաշտպանը։

Այլ գրության մեջ ե գտնվում պրոլետարը։ Իհարկե, կապիտալիզմի ժամանակ այս կամ այն անհատ պրոլետար կարող ե վարպետ կամ նույնիսկ ֆարբիկանտ դառնալ, բայց մասսայականորեն, վորպես մի ամբողջ դասակարգ, պրոլետարիատը չի կարող վերացվել, քանի գոյություն ունի մասնավոր սեփականությունը, նրա հետ և ապրանքային արտադրությունը։ Այդ կարգերում նա կարող ե իր գոյությունը պահպանել միմիայն իր բանվորական ուժը ծախելով, վոր շուկայում ապրանք դառնալով, յենթարկվում ե կոնկուրենցիայի ամեն տեսակի տատանումներին։

Սակայն մեծ ժամանակամիջոց ե պահանջվում, մինչեւ վոր բանվորները այդ հասկանան. նրանք պիտի անցնեն յերկարատեղ, տանջալից

դպրոցի բովով, մինչեւ վոր գիտակցության գան, ըմբռնեն, վոր իբենք այդ հասարակության մեջ առանձին դասակարգ են ներկայացնում

Մենք տեսանք արդեն, վոր բավական յերկար ժամանակ անցավ, մինչեւ վոր միջնադարյան քաղքենիներից կազմվեց նոր դասակարգ, արդի բուրժուազիան։ Նման յերկարատեղ պատմական զարգացման արդյունք ե և պրոլետարիատը։ Բացի այդ, այս յերկու դասակարգերը իրենց զարգացմամբ սերտորեն կապված եր իրար հետ։ Ինչ աստիճանով վոր զարգանում ե բուրժուազիան, նույն աստիճան զարգանում ե նայել պրոլետարիատը։ Ինչպես սովերը հետեւում ե մարդուն, այնպես ել պրոլետարիատը հետեւում ե բուրժուազիային, վորպեսզի բուրժուազիան կարողանա վերջ տալ պրոլետարիատին, նա պիտի վոչնչացնի ինքն իրեն։ Իսկ իրեն ազատելու, իր, իբրեւ դասակարգի գոյությանը վերջ դնելու համար պրոլետարիատը պիտի վոչնչացնի բուրժուազիային։

Մենք վերը տեսանք, վոր իր իսկական անունը պրոլետարիատը ստացել ե միայն XIX դարի առաջին կիսում, բայց, վորպես հասարակական առանձին շերտ, նա սկսեց գոյանալ դեռ XVI դարում, չնայած առաջներումն ել, ինչպես սովորաբար ասում են, կային իրենց աշխատանքը ծախելով ապրող մարդիկ։

Կապիտալիստը կարող եր արտադրել միայն այն դեպքում, յեթե գտներ մարդիկ,

վորոնց կարողանար ստիպել իրեն համար աշխատել: Նա կարող եր հավաքել բուրդ կամ բամբակ մանող ու գործող մեքենաներ, գործվածքները ներկելու և լցնելու համար ներկեր ու գործիքներ, նրանց չորացնելու համար հարմարություններ, բայց յեթենա բանվոր ձեռքեր չունի, ապա այդ բոլորը մեռած կապիտալի նման պառկած կմնա կամ նույնիսկ, կփշանա: Բանվորական ույժը կարծես կենատու ջուր լինի, վոր շարժում ե, կենդանացնում ե այդ բոլոր անշունչ առարկանները,

Բայց կապիտալիստների բախտը բանեց: Այն պայմանները, վորոնք ոժանդակեցին ժամանակակից արդյունագործության զարգացման, սկսած XVI դարից, յերբ ստեղծվեց համաշխարհային շուկան, առաջ բերին նայել անոթեվան մարդկանց խոշոր բանակ, վորին, բացի իրեն կաշին շուկա հանելուց, վոչինչ չեր մնում անելու:

Յերբ կալվածատերերը թագավորական իշխանության հետ միասին այնքան դաժանորեն գյուղացիների հախիցն յեկան, նրանք սկսեցին ուրիշ միջոցներ գործադրել: Յերեմին ուղղակի ուժի, յերբեմն ամեն տեսակի ճնշումների միջոցով նրանք գյուղացիներին ստիպում եյին ձըգել հողը ու գնալ քաղաքները: Շատ գյուղացիներ, աշխատավարձի յետեմս ընկնելով, իրենք եյին հեռանում գյուղից և իրենց կապերը կամաց-կամաց կտրում նրանից: Յեթե առաջներում, յերբ կալվածատերերը դժվարությամբ

միայն կարող եյին ծախել գյուղատնտեսական կերտվածները, ուստի մեծ սիրով սպասավորների ամբողջ շքախմբեր եյին պահում իրենց մոտ, ապա հիմա, ընդհակառակը հացի ու այլ մթերք-ների թանգանալու պատճառով, ցրում են իրենց պալատական վոհմակները:

Այսպես միանգամից, գյուղացիների եքսպրուսիա սեփականազրկման միջոցով, ստեղծվեցին տնից ու տնտեսությունից զուրկ բազմաթիվ բանվորներ, վորոնք լեցնում եյին քաղաքները: Յեթե նրանք աշխատանք չեյին գտնում, ապա թափառում եյին: Իրենցից անկախ այս անգործության համար նրանց պատժում եյին ամենաղաժան կերպով:

Այդ հողագուրկ գյուղացիներին միանում եյին նայել քայքայված արհեստավորները: Այսպիսով կազմվեց վարձու բանվորների մի զգալի բանակ, վոր գտնվում եր կապիտալիստների տրամադրության տակ: Նոր մանուֆակտուրները լցվում եյին հազարավոր բանվորներով: Ինչքան ավելի յեր զարգանում աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը, այնքան ավելի միորինակու անբովանդակ եր դառնում մանուֆակտուրային բանվորի աշխատանքը, մանավանդ արհեստավորի աշխատանքի համեմատությամբ:

Նույնիսկ այն ժամանակ, յերբ մանուֆակտուրը սկսեց դուրս մղվել մեքենայական արտադրության կողմից, բանվորի աշխատանքը ավելի զբարձրիչ բնույթ չստացավ: Աշխատանքի մանուգարությամբ

ֆակտուրային բաժանումը փոխարինվեց ավելի մանրամասն բաժանումով, և բանվորը հաճախ մեքենայի հասարակ կցորդ եր միայն։ Այն ժամանակ, յերբ մի փոքր խումբ բանվորներից դեռ պահանջվում եր պատասխանատու աշխատանք կատարելու ընդունակություն, այժմ բանվորների վիթխարի մասսան դատապարտված եր այնպիսի ձանձրալի աշխատանքի, վորին կարող եր վարժվել, մի քանի որվա ընթացքում, յուրաքանչուր սեվ աշխատանք կատարող բանվոր։ Այսպես որինակ, տասնյակ վարժ բանվորների կողքին մենք հանդիպում ենք հարյուրներով այնպիսի բանվորների, վորոնք կիսավարժ են այս կամ այն գործողության մեջ, ու տասնյակ հազարներով բոլորովին անվարժ հասարակ բանվորների։

Իսկ այս ամենը իջեցնում եր աշխատավարձը։ Յեթե առաջներում բանվորը այնքան եր աշխատում, վոր կարող եր թե իրեն և թե ընտանիքը մի կերպ կերակրել ապա այժմ նրա աշխատավարձը այնքան եր իջնում, վոր նա հազիվ կարող եր միայն իր մասին հոգալ։ Այս պատճառով ել, յերբ սկսեց զարգանալ մեքենաների կիրառումը, վոր զգալիորեն թեթեվացնում եր աշխատանքի ծանրությունը, կնոջ աշխատանքը սկսեց լրացնել, իսկ հետո, արդյունագործության այնպիսի ճյուղերում, վորպիսին տեքստիլն ե, նայեվ կամաց կամաց դուրս մղել աղամարդու աշխատանքը։

Արհեստանոցը, ֆաբրիկան, կատարելապես

դառնում ե տաժանակիր աշխատանքի վայր։ Յեթե այլյեվս չեն կիրակրվում այն խայտառակ միջոցները, վոր հատուկ եյին ստրկատիրական տնտեսության, յեթե չկա մտրակը, ապա նրանց տեղը տուգանքն ե բռնում։ Յեվ ինչ կապիտալիստի ել վերցնելու լինենք, անգլիական, գերմանական, թե ոռւսական, յուրաքանչյուրը նրանցից որում ե իր միտքը՝ բանվորներին պատելու տուգանքների ցանցով։ Այսպես՝ առանց այն ել ծանր աշխատավարձից դեռ հանում ե կատարվում։

Սակայն այդ խղճուկ աշխատավարձից ել բանվորը ստիպված ե բավականաշափ զգալի մաս հատկացնել այլ գիշատիչների։ Նա տանտիւողը բավականին խոշոր գումար ե վճարում այն անկյունի կամ նկուղի համար, վորի մեջ պարտապարվում ե իր ընտանիքի հետ։ Յեկամտարեր են մի քանի տասնյակ փոքր բնակարաններ ունեցող այն տները, վոր քաղաքի աղքատ ազգաբնակության համար են կանխորոշված։ Աղքատության այդ հանգերը, — զրում ե Մարքսը մի ուրիշ տեղ, — մասնագետ տնտեսերերի կողմից ոգտագործվում են ավելի մեծ վաստակով և նվազ ծախսերով, քան Պոտոպի (Ամերիկայում) հոչակավոր արծաթահանգերը։

Վորովինետեկ բանվորը իր աշխատավարձը ստանում ե միայն յերկու շաբաթը մի անգամ, յերբեմն մի ամիս աշխատելուց հետո, այդ պատճառով ել նա ստիպված ե մինչեվ փող ստանալը պարտքով ապրել, նա հարկադրված ե պետք

յեղած մթերքները պարտքով վերցնել մանր ավաճառից, վորն ոգտվելով դրանից սաղացնում են նրան իր վատ ապլանքները։ Յեթե նա այնքան բախտավոր ե, վոր գրավ գնելու վոր և բան ունի, ապանա ստիպված ե այդ գեղքում իր աշխատավարձի մի մասը, իբր տոկոս, հատկացնել վաշնու ու ին։

Կապիտալիզմի զարգացումով պըոլետարիատը միշտ ավելի բազմանում է։ Կան յերկիրներ, ուր նա արդեն հսկայական մեծամասնություն ե կազմում։ Իսկ մնացած յերկիրներում նա որըստորե աճում է։ Նրա շարքերը անընդհատ լցվում են վոչ միայն բնական աճումից, այլ նայել այն բազմաթիվ գյուղացիների, արհեստավորների և առեվտրականների շնորհիվ, վորոնք չդիմանալով խոշոր կապիտալիստների կոնկուրենցիային, քայլայվում են։ Նույնիսկ հասարակության այն շերտերը, վոր ի վիճակի եյին իրենց կապիտալից ստացվող յեկամուտով, այսինքն ունթով ապրել—այդպիսիներին ունթյե յեն անվանում—դրանք նույնիսկ ստիպված են աշխատավարձ փնտրել, վորովհետեւ տոկոսներից ստացած գումարը այլիքս չի բավարարում պրուստի կարիքներին։

Վերջ ի վերջո ֆաբրիկներում աշխատող պըոլետարիատի այն բանակին, վոր կարելի յեգործող բանակ անվանել, միանում են այեվ մի ուրիշ, պահանջութիւն բանակը, վոր կապիտալիստների կողմից արդյունագործական կովի

յե հանվում, յերբ արդյունագործության նոր ծաղկումը լրացուցիչ ուժեր ե պահանջում։ Կարիքը վերանալուց հետո, կապիտալիստը արձակում է այդ հավելյալ բանվորներին, և նրանք վերադառնում են պահեստի բանակը։ Վերջինս ծառայում ե վոչ միայն նման շտապ ու անսպասելի դեպքերում։ Աշխատագուրկ, արդյունագործության մեջ մասսամբ միայն զբաղված բանվորների այս հսկայական մասսայի ներկայությունը արդեն բավական ե, վորպեսզի կարելի լինի ստիպել աշխատող բանվորներին հանգիստ մնալ ու համաձայնել ցածր աշխատավարձի։ Այս պահեստի բանակի մեջ ավելի ու ավելի յեն կուտակվում այնպիսի մարդիկ, վորոնք անպետք են տեվական աշխատանքի համար և անընդհատ ավելի ցածր են ընկնում։ Այդ շերտին պատկանող բանվորներին կոչում են պահեստի երն եր, մուրացիկներ և այս պահեստի երի զմը՝ մուրացկանությունը ել ավելի թուլացնում ե բանվորի դիմադրական ույժը։

Սակայն կապիտալիզմը ինքն ե հոգում այն մասին, վոր պըոլետարիատը չհաշտվի իր դըքախտ վիճակի հետ։ Միայն կրիզիսները բավական են, վորպեսզի նույնիսկ ամենալավ դրության մեջ գտնվող բանվորներն անգամ զգան, թե վորքան խախուտ են նրանց վիճակը կապիտալիզմի ժամանակ։

Սկզբում միայն առանձին բանվորներն են զայրույթ ու բողոք արտահայտում։ Սկզբնական


շրջանում այդ զայրույթը կոպիտ ձեվեր ե ընդունում: Բանվորը տեսնում ե, թե ինչպես ամեն կողմից իրեն կողոպտում են ու ինքն ել ե գող դառնում: Ֆաբրիկից վոր և ե բան գողանալը, տիրոջը կողոպտելը նրա համար միայն որինական վրեժ ե նշանակում: Յեթև գործարանատերն ու նրա հսկիչները վոտնատակ են անում բանվորի մարդկային արժանապատվությունը, նա այլյես չի կարողանում տանել և գործատիրոջ կամ վարպետի սպանությամբ ե պատասխանում:

Առանձնակի զայրույթին ու բողոքին հաջորդում ե միացած, կոլեկտիվ բողոքը: Սկզբում դա առանձին ֆաբրիկի բանվորության բողոքն ե՝ ուղղված իր շահամոլությամբ շատ հեռու գնացած առանձին կապիտալիստի գեմ: Առանձին ֆաբրիկների ըմբռուտացման նման դեպքեր մենք հանդիպում ենք բանվորական շարժման արշալույսին, և Արեվմտյան Յեվրոպայում, և մեզ մոտ՝ Ռուսաստանում:

Հմբռուտացումը կարող ե ընդգրկել միայն նույն տեղում գտնվող ու միատեսակ ֆաբրիկներ: Նա սկզբներում հանդիսանում ե հուսահատության պոռթկումն, վորին ուղեկցում ե մեքենաների և ֆաբրիկային ունեցվածքների ջարդումն ու ավերումը: Անգլիայում 1811—13 թ.թ. հանդիպում ենք նույնիսկ մեքենաների կազմակերպված ջարդի:

Բանվորական այս շարժումը կուղիականների

շարժում ե կոչվում, վորովիճետեվ կարծում են, վոր նրա կազմակերպիչը կուղի անունով մի գեներալ ե յեղել: Այդ շարժումը նկարագրել ե «Մեքենա ջարդողները» վերնագիր կրող դրամա-



Սիլեզյան ջուլհակները 1844 թ.

յում գերմանական բանտառեղծ Թողերը, վորը մինչեվ այժմ ել բանտարկված ե Բավարիայի Խորհրդային իշխանությանը մասնակից լինելու համար:

1831 թ. Փրանսիական լիոն քաղաքում բռնկում ե մետաքսագործների ապստամբությունը: Նրանք հրապարակ յեկան հետեվյալ լոգունգով—«ապրել՝ աշխատելով, կամ մեռնել՝ կովում» և նույնիսկ մի քանի որով գրավեցին քաղաքը:

1844 թ. Պրուսիայում Սիլեզյան ջուլհակները, Փաբրիկանտների անխիղճ շահագործմանը այլեվս չդիմանալով ապստամբություն սարքեցին, վոր զինվորական ուժի ոգնությամբ ճնշվեց: Այդ ապստամբությունը գերմանական բանվորական շարժման պատմության համար պակաս նշանակություն չունեցավ, քան հունվարի 9-ը՝ ոռուսականի համար: Այն տրամադրությունը, վոր առաջ բերեց գերմանական բանվորության մեջ այդ գեղաքը, շատ գեղեցիկ արտահայտել ե Մարքսի մոտիկ ընկեր՝ գերմանական հոչակավոր պոետ Հենրիխ Հայնեն:

Նզովք աստծուն, վորին աղոթքով
այնքան աղերսել ենք, դիմել ենք մտքով.
իզուր, չհասավ նա որին մեր դժվար,
իզուր, նա խարեց մեզ, թողեց մեզ շվար:
Նզովք և նրան, կուշտերի արքային,
վոր մեզ միշտ ճնշել ե, մատնել ե մահի.
Քերջին մեր կոպեկը խլել ե նա հար,
արձիճ ու գնդակ ե թողել մեզ համար:

Գերմանական մի ուրիշ պոետ՝ Հառլապտմանը այս գեղաքերը նկարագրել ե իր լավագույն դրամաներից մեկում—«Զուլհակներ»-ում:

Բայց զարգանալով պրոլետարիատը աստի-

ճանաբար գիտակցում ե, վոր արտադրության միջոցների, մեքենաների գեմ ուղղված բունտերը միանգամայն անսպատակահարմար են: Նա միանում, համախմբվում, կամ մակերպ պում ե սկզբում միայն վորոշակի գործողության համար կուլիցի աներ, իսկ հետագայում՝ մշտական ասոցիացիաներ, կամ միություններ, վորոնք իրենց նպատակ են դնում աշխատավարձը բարձրացնել, բանվորական որը կրծատել և աշխատանքի ընդհանուր պայմանները բարելավել: Նման միություններ ամենից առաջ սկսեցին կազմակերպել անգլիական բանվորները և անվանեցին տը եղուն իոններ կամ, ինչպես այժմ մենք ենք կոչում պը ոփեսիոն ալ միություններ:

Բանվորական շարժման պիոններները—ուահվիրաները անգլիական բանվորներն եյին: Անգլիայում ավելի առաջ, քան այլ յերկրներում զարգացավ խոշոր արդյունագործությունը, ավելի շուտ գոյացավ արդի պրոլետարիատը: Այս պատճառով ել, կոմունիստական Մանիֆեստը, յերբ նկարագրում ե բանվորական շարժման զարգացման ուղիները, հենվում ե անգլիական բանվորների փորձի վրա:

XIX դարի 40-ական թվականներին պը Փեսիոնալ միություններ միայն Անգլիայում գոյություն ունեյին: Նրանք համառ պայքար եյին մղում բանվորական որը կրծատելու և աշխատավարձը բարձրացնելու համար: Գործադուլ-

ները յերբեմն ընդգրկում եյին ամբողջ արդյունագործական շրջանները։ Այդ ժամանակ արդեն ընդհանուր գործադուլ կազմակերպելու փորձեր եյին կատարվում։

Թեյեվ այդ գործադուլները հաճախ պարտություն եյին կրում, բայց և այնպես նրանք խոշոր նշանակություն ունեյին։ Նախ՝ բանվորների դիմադրությունը այսպես թե այնպես սահմանափակում եր գործատերերի կամայականությունը։ Յերկրորդ, ինչպես Ենգելմն ե մատնանշում, գործադուլները հսկայական դաստյարակիչ նշանակություն ունեյին։ Շնորհանք բանվորների համար բարձրագույն դպրոցն են, վորտեղ վերջիններս նախապատրաստվում են վարելու իրենց մեծ պայքարը, վոր արդեն անխուսափելի յե դարձել։ Գործադուլները աշխատանքի այլ և այլ ճյուղերի բանվորների զայրույթի և ըմբռոստացման պոռթկումներ են, վորոնց միջոցին բանվորները հայտարարում են, վոր իրենք միանում են բանվորական մեծ շարժմանը։ Յեվ իրը այդպիսի ռազմական դպրոց՝ գործադուլները անփոխարինելի յեն։

Գործադուլներն ու պրոֆեսիոնալ միությունները պրոլետարիատի դասակարգային կազմակերպման գործում, վիթխարի նշանակություն ունեյին։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես եր բուրժուազիան աստիճանաբար ձեվակերպվում, վորպես հատուկ դասակարգ։ Ահա թե ինչպես ե

համեմատում Մարքսը նրա պատմությունը պրոլետարիատի պատմության հետ։

«Բուրժուազիայի պատմությեան մեջ մենք պիտի զանազաննենք յերկու ֆազիս (աստիճան), առաջինը, յերբ ֆեոդալական կարգերի ու ինքնակալ միապետության տիրապետության տակ բուրժուազիան դասակարգ ե դառնում, յերկրորդը, յերբ վորպես արդեն կազմակերպված դասակարգ, նա տապալում ե ֆեոդալիզմն ու միապետությունը՝ հին հասարակությունից բուրժուական կազմակերպելու համար։ Այս ֆազիսներից առաջինը ավելի տեվական եր, քան յերեսից և ույժերի ավելի մեծ լարում պահանգրորդը և ույժերի ավելի միջ լարում պահանգրութեց։ Բուրժուազիան ել իր պայքարը սկսեց ֆեոդալական սենյորների դեմ մասնավոր կոալիցիաներ կազմակերպելով։»

Մարքսը նկատի ունի այն քաղաքային համայնքները — կոմունաները, վոր կազմակերպեցին արդի բուրժուազիայի նախորդները։ Հենց այդպես ել գործադարձություն երը, կուլիցիաներն ու պրոֆեսիոնալ միությունները այն ձեվերն են, վորով պրոլետարիատը իրագործում ե մեր աշքի առաջ կատարվող դասակարգային կազմակերպումը։

Խոշոր արդյունագործությունը կուտակեց գործարաններում իրար անծանոթ մարդկանց բանվորների բազմություն։ Առաջին հայացքից նրանք կարծես տարբեր շահեր ունենան։ Նրանք մը ցում են իրար հետ, խլում են իրարից աշ-

խատանքը և աշխատավարձը իջեցնում։ Բայց շատ շուտով գլխի յեն ընկնում, վոր այդպիսով միայն մասում են իրար։ «Յեթե յերկու բանվոր ընկնում են միեմսույն կապիտալիստի յետեից՝ աշխատավարձը իջնում ե, և ընդհակառակը։ «Յեթե յերկու կապիտալիստ ընկնում են մի բանվորի յետեվից՝ աշխատավարձը բարձրանում ե»։ Այսպես են ասում անգլիական բանվորները։ Հետեվաբար անհրաժեշտ եր վերացնել կո՞ւ ուր են ցիան բանվորների միջից, միացած ույժերով ավելի հաջող պայքարելու կապիտալիստի դեմ։ Ահա այս նպատակներին են ձգտում կոալիցիաներն ու պրոֆեսիոնալ միությունները։

Շատ տարիներ պահանջվեց, վորպեսզի բանվորները բուրժուական հասարակության մեջ ամենախոշոր շերտը դառնային։ Կապիտալի և բուրժուազիայի տիրապետությունը այս շերտի համար ստեղծեց միանման դրություն հասարակական արտադրության մեջ ու միանման շահեր։ Բուրժուազիայի վերաբերմամբ այս շերտը, բանվորների այս մասսան արդեն դասակարգավ։ Հասարակական տնտեսության դեկավար որենքները ուսումնասիրող բուրժուական գիտնականները այդ փաստը արդեն վաղուց են հաստատել։ Իսկ ուրիշ բուրժուական գրողներ «աշխատավոր աղքատներին», վորպես մինչ այդ անվանում եյին բանվորներին, հռոմի պատմությունից վերցրած մի ուրիշ անուն տվին։ Բայց բանվոր դասակարգը դեռ յեկա

դասակարգ չեր իրեն համար։ Նա դեռ չեր գիտակցում, վոր ինքը ուրույն դասակարգ ե, յուրահատակ ինդիբներով ու նպատակներով։ Պրոլետարիատը կարողացավ ձեվակերպվել, վորպես դասակարգ իրեն համար միայն այն պայքարում, վորի տարրեր աստիճաններն եյին հանդիսանում գործադուլները, կոալիցիաներն ու պրոֆեսիոնալ միությունները։ Այդ պայքարի ընթացքում նա հասկացավ, վոր իր պաշտպանած շահերը դասակարգային շահեր են և գիտակցեց իր դասակարգային շահերի ներհակությունը կապիտալիստների շահերին։ Նա ըմբռնեց, վոր կապիտալիստների դեմ մղած իր պայքարը դասակարգ այս ին պայքար ե, իսկ դասակարգերի պայքարը քաքաքական պայքար ե, վոր վարվում ե պետական իշխանության մեջ մասնակցության իրավունք ձեռքբերելու և ապա այդ իշխանությունն ամբողջապես գրավելու համար։

Այսպես Անգլիայում կազմվեց բանվորական դասակարգի առաջին քաղաքական կուսակցությունը, չարտիստների կուսակցությունը. այդ անունը նա ստացավ իր ծրագրից, խարտիայից (անգլերեն-չարտեր), վոր պարունակում եր անգլիական բանվորների գլխավոր քաղաքական պահանջները. — ընդհանուր ընտրական իրավունք, յուրաքանչյուր տարի վերընտրական իրավունք, դեպուտատների վարձատրություն, դադարի քվեարկություն և այլն։

Մի քանի տարի շարունակ չարտիստները համառ պայքար եյին մղում։ Անգլիայում տիրող դասակարգերը բաժանված եյին յերկու կուսակցության՝ թորիների և վիզերի. թորիների շարքում գերակշռում եյին հողատերերը, գյուղատնտեսական կապիտալիստները, իսկ վիզերի կուսակցության մեջ համախմբվել եյին գլխավորապես փողային և արդյունագործական կապիտալիստները. չարտիստները աշխատում եյին ոգտագործել այդ յերկու կուսակցության փոխադարձ տարածայնությունները։ Յերբ յերկու գող,—ասում ե անգլիական առածը,—կախվում են իրար մազերից—ազնիվ մարդը շահում ե։ Այսպես չարտիստները դիմակազուրկ եյին անում և թորիներին, վորոնք պատրաստ եյին ժողովրդի կաշին քերթել հացի վաշխառուական գներով, և վիզերին, վորոնք համաձայն եյին չափավոր մաքսեր սահմանելու հետ։ Նրանք անխնա քննադատության եյին յենթարկում նայել արդյունագործական բուրժուազիայի ուղիկալ՝ արմատական ներկայացիներին—կորդեն և Բրայտ ֆաբրիկանեներին, վորոնք ճգնում եյին ապացուցել բանվորներին, վոր ամբողջ դժբախտությունը առաջ ե գալիս հացի վրա դրված բարձր մաքսից։ Չարտիստները ոգտագործեցին բուրժուազիայի զանազան շերտերի հենց այդ պայքարը՝ տեքստիլ արդյունագործության մեջ բանվորական որը 10 ժամով սահմանափակելու համար։ Այդ եր իմաստը տասամա-

մյա Բիլլի, այսինքն՝ 10-ժամյա բանվորական որին վերաբերող որենքի, վոր ընդունեց անգլիկան պարլամենտը 1847 թ. հունիս 8-ին։

Բանվոր դասակարգի շահերի համար մղած պայքարում չարտիստներն աշխատում եյին սովորել, յուրացնել այն բոլոր միջոցներն ու փորձը, վոր մշակել և ձեռք եյին բերել բուրժուազիայի զանազան շերտերը, իրենց քաղաքական յերկարամյա տիրապետության ընթացքում։ Ժողովների, ցույցերի ու միտինգների միջոցով տարվող ագիտացիան, բազմապիսի կոչերի, պրոլետարիատիների, թուրցիկների տարածումն, —այս բոլորը, զանազան բուրժուական կուսակցություններ արդեն գործադրում եյին իրար դեմ։

Եթե սկզբնական շրջանում պրոլետարիատը բաղկանում եր գրեթե անգրագետ, անկիրթ ու քաղաքական պայքարի նրբությունների մեջ շատ քիչ բովված բազմաթիվ մարդկանցից, ապա խոշոր արդյունագործությունը, քայլայելով միջին դասակարգերի տնտեսությունը, պրոլետարիատի շարքերը իջեցրեց նրանց բազմաթիվ ներկայացուցիչներին։ Այս նոր զորագովները իրենց հետ բերում եյին քաղաքական պայքարի փորձ, կրթություն ու գրագիտություն և այսպիսով հանդիսանում եյին դաստիարակությունը տարբեր, ուսուցիչներ պրոլետարիատի շրջանում։

Յերբ բուրժուազիան, վորպես դասակարգ,

վերջնականապես ձեզակերպվեց և կտրուկ կերպով դբեց քաղաքական իշխանություն գրավելու խնդիրը, կազմակերպված ազնվականության մի մասի մեջ, մանավանդ նրանց շարքերում, վորոնք իրենց նվիրել եյին գիտություններ ուսումնասիրելուն, սկսեց աճել այն համոզումը, թե ինչ կարգերը բացարձակապես կորցրել են իրենց գոյության իմաստը, և նրանց ժամանակն արդեն անցել եւ: Այդ ազնվական իդիոլոգները, այսինքն մարդիկ, վորոնք կերտում եյին իրենց դասակարգի աշխարհայացքը, նրա իդիոլոգի ան և իրենց նյութական շահերից բարձր եյին դասում գաղափարի շահերն ու իրենց հասարակական իդեալների իրագործումը, անցանցան բուրժուազիայի կողմը, վորի հետ միասին պայքարում եյին ին կարգերի դեմ: Սրան նման յերեվոյթ տեսնում ենք նայել այժմ: Բուրժուազիայի մի մասը, այսինքն բուրժուա—իդիոլոգները, կամ ինչպես հիմա են ասում, ինտելիգենցիան, վորը շնորհիվ իր կրթության կարող ելավ գերք գրավել բուրժուազիայի մոտ, անցընում ելավ պրոլետարիատի կողմը, վորովինետեվ յեկել եան յեզրակացության, վոր միայն պրոլետարիատը կարող ելավ գերջ դնել ամեն տեսակի ճնշման ու դասակարգային տիրապետության:

Ի հարկե, միայն պրոլետարիատը չել վոր տուժում ել բուրժուազիայի տիրապետությունից: Նրա կողքին կան նայել ուրիշ դասակարգեր, վոր նույնպես զգում են իրենց վրա կա-

պիտալիստական հարաբերությունների ամբողջ ձնշումը: Ինչպես տեսանք արդեն, կապիտալիզմի հետ սերտորեն կապված առեվտրա-արդյունագործական կը իդիոլոգը առանձնապես զգալի ավերումներ են կատարում հենց բուրժուազիայի միջին խավերում, արհեստավորների, զյուղացիների ու խանութպանների շրջանում: Բայց չնայած դրան, այդ բոլոր դասակարգերը պինդ կպած են մասնավոր սեփականության պոչին: Նրանք կկամենային մի փոքր մաքրել, շտկել, կարկատել բուրժուական հասարակությունը, միայն թե չխախտեն նրա հիմքերը: Յեվ նրանք հաճախ պրոլետարիատի գաժան թշնամիներն են հանդիսանում վոչ պակաս, քան խոշոր բուրժուաները: Այս պատճառով ելնրանք հեղափոխական չեն և սարսափում են հեղափոխական չեղափոխական ից, հեղափոխական կրակից: Նրանք ուզում են գոյություն ունեցող հասարակարգը վոչ թե կործանել, այլ պահպանել: Բայց նրանցից վոմանք, մանավանդ վարպետները, արհեստավորներն ու հարուստ զյուղացիները՝ ավելի քան կոնսերվատիվ, պահպանողական են: Նրանք ավելի շուտ կցանկանային յետ դառնալ դեպի անցյալը, ուստի նրանք ու ակցիոներ են, ու ակցիայի կողմանից:

Սակայն հենց պրոլետարիատի շարքում ել կա մի շերտ, վոր նրա պայքարին խանգարում

ե վոչ պակաս, քան աղգաբնակության վերը հիշած այլ խավերը։ Դա կառաջ մ պես պը ու ետարի աւտն ե։ Բանվորական պահեստի բանակի ամենաստորին խավն անգամ, վոր արդեն մի վոտքով կանգնած ե մուրացկանության շեմքին, տակավին ձգտում ե աշխատանքի, հասարակական արդյունագործության մասնակցելուն։ Լյումպենպրոլետարները վերջնականապես կտրվել են ամեն տեսակի աշխատանքից, չեն խորշում վոչ գողությունից և վոչ կողոպուտից, այս պատճառով ել նրանք պատրաստ են ընկնել սեվ հարյուրակայինների, ամենակատաղի պահպանողականների, ֆաշիստների շարքերը։ Դրանց, ինչպես և հետամնաց գյուղացիներին բուժուազիան ոգտագործել ե ապստամբ բանվորների դեմ մղած պալքարում իբրեւ զինվորների։ Լյումպենպրոլետարները ծանր բեռ են բանվոր դասակարգի ամեն մի հեղափոխական շարժման համար, ինչպես հեղափոխությունից առաջ, այնպես ել հեղափոխության միջոցին։

Պրոլետարիատի առջեվ կանգնած ինդիրները առանձնապես դժվարին են։ Ինչքան ել վոր ռազիկալ լիներ բուժուական հեղափոխությունը, այնուամենայնիվ, նա չդիպավ հիմքերի հիմքին՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականության։ Ըսդհակառակը, պրոլետարական հեղափոխությունը սկզբից յեվյեթողվում ե կապիտալիստաների մասնավոր սեփականության դեմ։ Զե վոր վերջինս գոյու-

թյուն ունի միմիայն շնորհիվ բանվոր դասակարգի եք սպատագիայի, շահագործման։ 9կա այնպիսի կապիտալ, վոր ինքն իրեն յեկամուտ բերի։ Ցեվ յեթե պրոլետարիատն ուզում ե վերացնել շահագործումը, ապա նա պիտի վոչնչացնի նայել սեփականելու կապիտալիստական յեղանակը։ Այլ բան ե, յերբ նա կամենում ե միայն շահագործումը խելացի սահմանների մեջ դնել, ինչպես նրան խորհուրդ են տալիս ամեն տեսակի համաձայնողներ, վորոնք համոզված են, թե կապիտալիզմը հավիտենապես գոյություն կունենա։ Քանի դեռ արդյունագործության անիվը աշխատում ե ամբողջ թափով, քանի դեռ գտնվում են գաղութներ, վոր թույլ են տալիս իրենց շահագործել, կապիտալիստը բանվորներին չնշին փշրանքներ ե շպրտում և նույնիսկ համաձայնվում ե բանվորական որը կրծատել։ Բայց հենց վոր խափանում ե սկսվում, հենց վոր պայթում ե կրիզիսը, նա սկսում ե գոռալ իր մնաների մասին և հարձակվում ե բանվորների վրա, ջանալով հետ խլել նրանց բոլոր նվաճումները։ Ցեվ ինչքան ել պրոլետարիատը տատանվի, քանի անգամ ել վոր նա անվճականորեն կանգ առնի իր առջեվ դրված ինդրի վիթխարության հանդեպ, այնուամենայնիվ, նա հարկադրվում ե վերջի վերջո իր հեղափոխությունը կատարել։

Նույնիսկ բուժուազիան, սկսելով իր հե-

ղափոխությունը ազնվականության դեմ, ստիպված եր հաշվի առնել այն հանգամանքը, վոր հարեվան յերկրների ազնվականությունը ոգնության կդա եր թշնամիներին։ Թրանսիսկական բուրժուազիային իսկապես վիճակվեց դիմադրել Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի, ապա Անգլիայի հարձակումներին։ Այդ պատերազմի ժամանակ նա կոչ եր անում բոլոր ճնշված ժողվորդների յեղբայրության և մի արանության զգացումներին։ Նա ազգարարեց. «Կռիվ պալատներին և խաղաղություն խրճիթներին» լոգունգը։ Հարեվան յերկրների գյուղացիներին նա խոստանում եր ազատել ճորտատիրության լծից, ֆեռդալիզմի շղթաներից։

Պրոլետարիատի հեղափոխությունը նախ և առաջ ուղղվում ե սեփական բուրժուազիայի դեմ, իր ազգային պետության սահմաններում։ Բայց այդ պայքարը միայն առաջին հայացքից ե ազգային թվում։ Նույնիսկ այն դեպքում, յերբ նա տեղի ե ունենում միայն մի յերկրում, պրոլետարիատը սկզբից յեվյեթ իր պայքարը ազգարարում է մի ջադապ այլն, ինտերնացիոն ազատագրար։ Մի յերկրի պրոլետարիատը չի կարող հետաձգել իր պայքարը իշխանություն գրավելու համար, մինչեվ վոր մյուս յերկրների պրոլետարներն ել չսկսեն։ Յեթե պայմանները այնքան նպաստավոր կերպով են դասավորվել, վոր նա կարող է ջախջախիչ հարված հասցնել իր բուրժուազիային, նա պարտավոր ե

ոգտվել այդ դեպքից։ Յուրաքանչյուր յերկրի պրոլետարիատը առաջին հերթին պետք է իր սեփական բուրժուազիային վոչնչացնի։

Լինում են պայմաններ, յերբ դասակարգային ճնշման վրա հիմնված հասարակությունը կարող է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ գոյություն ունենալ։ Այդպիսի հասարակությունների մեջ անշարժություն ե տիրում։ Հողագործների վիթխարի բազմությունը ինքն ե բավարարում իր սնունդի և հագուստի պարզ կարիքները, իր աշխատանքի արդյունքի մի մասը նա տալիս ե պաշտոնյաններին, վորոնց նշանակում ե թագավորը, վոր ապրում ե հեռու մայրաքաղաքում, վորպես աստվածը յերկնքի վրա։ Լինում են լավ և վատ տարիներ, բայց յեթե թագավորն ու իր սպասավորները շատ չեն ճնշում, չափից դուրս չեն գալիս, ապա գյուղացիները, ճապոնացի, չինացի, Ռուս-ինդիացի և ոռւս մուժիկների նման հանգիստ նստում են իրենց տեղը, որնում են յերկինքը և ապրում են սերնդե սերունդ, ինչպես բանվոր մրջյունները, վոր նոյնպես կերակրում են իրենց ազնվականներին ու զորքը։

Բուրժուական գիտնականները հաճախ եյին յերազում, թե ինչպես այն ձեվով սարքեն բուրժուական հասարակությունը, վոր նա ել համար նման շանշարժ դրության։ Այդ դեպքում կապիտալիստները կղեկավարեյին արտադրությունն ու կստանային իրենց վաստակը, հողատերերը ի-

ըենց գրպանը կդնեյին հողից ստացած ուենթը, բանկիրները տոկոս կտանային, իսկ բանվորները՝ աշխատավարձ, վոր բավականացներ նրանց կերակրվելուն ու կյանքը պահպանելուն։ Այն պահուն ամեն ինչ հանգիստ ու կանոնավոր կլիներ, բանվորներն այլեւկա չեյին հարցնի, թե ոով ինչով ե ապրում, և կգիտենային միայն, թե ինչ պիտի անեն իրենք։

Բայց իրերն այնպես չդասավորվեցին, ինչ-պես սպասվում եր: Անընդհատ վաստակի յետե-վից ընկնելը կապիտալիստին ստիպում ե իջեցը-նել աշխատավարձը: Ինչքան ավելի բարձր ե վաստակը, այնքան ավելի ցածր ե աշխատավար-ձը, և ընդհակառակը: Բանվոր դասակարգի ա-ռանձին խավերը յերբեմն ավելի լավ պայման-ներ են ձեռք բերում, բայց միշտ ի հաշիվ ա-վելի քիչ հաջողակ իրենց ընկերների: Անգործու-թյունը, մահն ու հիվանդություններ գնալով ա-ճում են: Բանվոր դասակարգը սկսում ե ալե-կոծվել, զայրանալ, ըմբռստանալ: Խոշոր ար-դյունագործության շնորհիվ հակայական մաս-սաներ կազմած, նա սկսում ե գիտակցել իր ույժը: Բուրժուազիան, վորն ի վիճակի չեր

Նույնիսկ բանվորների համար ստեղծել ապահով ապրելու պայմաններ, հիմա այս ու այն կողմն ե նետվում, ինչպես առյուծը վանդակում և մի կողմից հարձակվում ե բանվորների վրա սրով ու հրով, իսկ մյուս կողմից, նրանցից ավելի հետանդներին ռկարկանդակ» ե առաջարկում։ Բայց այդ անողութ եւ Բանվոր դասակարգը նրա աշքի առաջ ավելի և ավելի յե աճում և ահուելի դառնում, նրա շարքերն ավելի յեն խտանում, ավելի պարզ ե զարգանում նրա դասակարգային գիտակցությունը։ Մոտենում ե ժամը, յերբ բանվորներին շահագործող ու մի ժամանակ մանր արտադրողներին սեփականագրկող եքսպլոազիատորը ինքը պիտի սեփականագրեկվի, եքսպլոազիատորը ինքը պիտի սեփականագրեկվի։ Այս սեփականագրությունը նույնարար

անխուսափելի յե, վորքան մանր արտադրողների և մանր կապիտալիստների եքսպրոպրիացիան խոշոր կապիտալիստների կողմից:

Մի կապիտալիստ ջախջախում և շատերին:
Կապիտալների սակավաթիվ մարդկանց ձեռքում
կենտրոնանալուն զուգընթաց զարգանում է նայել
աշխատանքի հասարակական կամ կոռպերատիվ
ձեզը, ավելի ու ավելի յե զարգանում գիտու-
թյան կիրարկումը արտադրության մեջ և հողի
ծրագրված մշակումը, ստեղծվում են վիթխարի
մեքենաներ ու շարժիչներ, վոր կարելի յե ոգ-
տագործել միմիայն խմբովին: Բոլոր ժողովուրդ-
ները ընկնում են համաշխարհային շուկայի

ցանցը, և զարգանում ե կապիտալիստական հասարակարգի միջազգային, ին տերն ացիոն ալբնույթը, Արդյունագործական գեներալների չնչին վոհմակի հարստությունը որ ափուր աճում ե, իբրեւ հետեւանք արտադիր ուժերի զարգացման տված ամողջ ոգուաքը կորդելու, զբան զուգընթաց աճում ե նայել բանվոր դասակարգի թշվառությունը, ստրկացումը, կեղեքումը, այլասեռումն ու շահագործումը։ Սակայն դրա հետ միասին աճում ե նայել նրա զայրութը։ Բանվոր դասակարգի շարքերը բազմանում են, արտադրության կապիտալիստական յեղանակի ամբողջ մեխանիզմով նա դատյարակվում, միանում ու կազմակերպվում ե։

Կապիտալի բացառիկ իշխանությունը, նրա մոնոպոլիան շղթաներ ե դառնում արտադրության այն յեղանակի համար, վոր ծաղկեց շնորհիվ հենց այդ իշխանության—մոնոպոլիայի։ Արտադրության միջոցների կենտրոնացումը, ցենտրալիզացիան և աշխատանքի համայնացումը այնպիսի բարձր մակարդակի յեն համար, վոր այլյեվս չեն կարող տեղափորվել իրենց կապիտալիստական կեղեկում։ Վերջինս պատռվում ե։ Խփում ե կապիտալիստական սեփականության ժամը։ Սեփականազրկողներին սեփականազրկում են։

Բանվոր դասակարգի ազատագրումը անհրաժեշտորեն յենթադրում ե նոր հասարակություն ստեղծելը։ Այս ազատագրման հնարավո-

ըությունը յերեվան ե գալիս միայն զարգացման այնպիսի աստիճանի վրա, յերբ նոր զարգացած արտադիր ույժերն ու գոյություն ունեցող հասարակական հաստատություններն այլ յեվս չեն կարող կողք-կողքի ապրել։ Արտադրության բոլոր գործիքներից ամենախոշոր արտադիր ույժը ներկայանում ե ինքը հեղափոխական դասակարգը։ Իսկ այժմ այդպիսի դասակարգ ե պրոլետարիատը։ Նրա հաղթանակն ու բուրժուազիայի պարտությունը հավասարեցան անխուսափելի յեն։

Բուրժուազիան ինքն ե փորում իր գերեզմանն ու արտադրում իր գերեզմանափորներին։ Մնում ե միայն շուտով վլորել նրան այդ գերեզմանը։ Դա սոցիալական հեղափոխության գործն ե, կոմունիստական կուսակցության մեջ կազմակերպված պրոլետարիատի գործը։

Հաջորդ գլուխը ցույց է տալիս։ Թե վորոնք են կոմունիստների նպատակներն ու ինդիրները։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Բանվորական շարժումը սկսել ե զարդանալ նախ քան կոմունիստների յերեվան գալը:

Դեռ ավելին: Կոմունիստների առաջին խըմբակների կազմակերպվելուց առաջ արդեն գոյություն ունեցին խոշոր բանվորական կազմակերպություններ: Յերբ հիմնվեց կոմունիստների Միությունը, Անգլիայում արդեն աշխատում եր խոշոր բանվորական կուսակցություն՝ չարտիստների կուսակցությունը:

Հասկանալի յե, վոր կոմունիստների նոր Միությունը պիտի բացատրեր, թե կոմունիստները ինչ դիրք ունեն դեպի պրոլետարներն ընդհանրապես և բանվորական կուսակցությունները մասնավորապես: Պետք ե միայն հիշել, վոր խոսքը վերաբերում ե իրերի այն դրության, վոր կար մինչեւ 1848 թ. հեղափոխությունը: Վորպեսզի ավելի լավ ըմբռնել և պատկերացնել այն, պետք ե նկատի ունենալ, վոր կոմունիստների Միությունը ուզում եր այն ժամանակ նույն գերը խաղալ, ինչ վոր կոմինտերնը — կոմունիստական ինտերնացիոնալը՝ մեր որոք:

Կոմունիստների Միությունն ել չուներ վոչ մի շահ, վոր չհամապատասխաներ պրոլետարիատի շահերին: Ընդհակառակը, նա իրեն նպատակ

եր դնում պաշտպանել բոլոր ազգերի պրոլետարիատի շահերը, վոր ընդհանուր են ու միատեսակ: Ուշադրությամբ հետեւելով զանազան յերկրների բանվորական շարժման, բուրժուազիայի դեմ մղած բանվոր դասակարգի պայքարին, աշխատելով ճիշտ գնահատել բոլոր անջատ և մասնակի ցույցերը, նա առաջին տեղը դասում ե բանվորական շարժման, վորպես ամբողջության, ընդհանուր շահերը:

Հին ժամանակներում ճնշված ժողովրդի մեջ լույս եին ընկնում ազատարար-մարզարեներ, վորոնք հաղորդում եին նրան նոր պատվիրաններ, նոր գաղափարներ ու սկզբունքներ: Նրանք հավատացնում եին, վոր յեթե մարդիկ յուրացնեն այդ նոր գաղափարները, ապա մարդկությունը կազմատվի պայքարից, գիրախտություններից ու տանջանքներից: Նման հրաշագործներ և հերոսներ յերեվան են գալիս նայեվ բանվոր դասակարգի շրջանում: Նրանք ունեն իրենց սիստեմը, իրենց նախագիծը, վոր նրանց կարծիքով միշտ ամենից ավելի հուսալին ե և ամենաձշմարիտը: Բավական ե միայն ընդունել այն և բանվոր դասակարգը կազմատվի յերկարատեղ պայքարից և այնպիսի յերկար ու ձանձրալի գործից, վորպիսին պրոլետարիատի դասակարգային կազմակերպությունն ե:

Կոմունիստների առավելությունը կայանում ե միայն նրանում, վոր նրանք հասկանում են, թե ինչ պայմանների չնորհիվ ե ծագում ու զար-

գանում բանվորական շարժումը և դեպի ուր կհանգի նա, անկախ այդ շարժման մասնակիցների ցանկությունից, եապես կոմունիզմը մի ուսմունք ե միայն պրոլետարիատի ազատագրուման պայմանների մասին: Կոմունիստների նպատակները միշտ վորոշվում են համաձայն այդ պայմաններին: Անհրաժեշտ ե կազմակերպել պրոլետարիատը, իրենք առանձին դասակարգ, — դա պրոլետարիատի դասակարգային կազմակերպումն ե, — անհրաժեշտ ե գրավել քաղաքական իշխանությունը, տապալելով բուրժուազիայի տիրապետությունը: Այս բոլորին սովորեցնում ե մեզ դասակարգերի պայքարի, հենց իր, բուրժուազիայի, պատմությունը: Միայն թե պետք ե անտես չառնել իրականությունը և ուշադրությամբ հետեւել մեր աչքի առջենք կատարվող դասակարգերի պայքարին:

Բուրժուազիան կազմակերպվեց վորպես դասակարգ, իրենք դասակարգ կազմակերպվում ե և պրոլետարիատը. բուրժուազիան տապալեց ազնվականությունը, վերացրեց ֆեոդալիզմը և նրա տեղ կապիտալիզմ հաստատեց, իսկ պրոլետարիատը կամենում ե տապալել բուրժուազիային, վոչնչացնել կապիտալիզմը և նրա փոխարեն կոմունիզմն իրականացնել. Տարբերությունը միայն զլիսպոր նպատակի մեջ ե կայանում: Ուրեմն աեմնենք, թե վո՞րն ե այդ տարբերությունը:

Կոմունիստներին մեղադրում են այն բա-

նում, վոր նրանք ուզում են վոչնչացնել մասնավոր սեփականությունը: Թեյեվ նման մեղադրանքը կոմունիստներին ամենեվին չի վախեցնում, բայց նրանք այնուամենայնիվ կարող են պատասխանել, վոր ինդիբն այդ չե: Ազնվականուպատասխանել, վոր ինդիբն այդ չե: Ազնվականությունը մեղադրում եր բուրժուազիային՝ բուրժուանոյնպես մեղադրում վոչնչացնելու ցանկության համար:

«Սուտ ե. — պատասխանում եյին զայրացած բուրժուաները, — մենք կամենում եյինք միայն վոչնչացնել ֆեոդալական սեփականությունը. մենք ուզում եյինք վերացնել կալվածատերի իշխանքը՝ ոգտվելու գյուղացիների ձրի աշխատավունքը՝ ոգտվելու գյուղացիների ձրի աշխատազից և տուրքեր գնելու նրանց վրա: Ամեն մարդ տերն ե այն բանի վրա, վոր ինքն ե արտազրել»: Յեվ, իսկապես, Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը վոչնչացրեց միայն ֆեոդալակառակը, միայն դրանից հետո ե, վոր ծաղկեց բուրժուական սեփականությունը, առեվտրի ազատությունը:

Այդպես ել կոմունիստներն են ուզում վոչնչացնել վոչ թե ամեն տեսակի սեփականություն, այլ միայն մասնավոր սեփականությունը, այնպիսի սեփականություն, վոր հնարավորություն ե տալիս իր տիրոջը՝ շահագործել ուրիշներին, նրանց հաշվին հարստանալ:

Բավական ե միայն ուշադրությամբ հետեւել, թե ինչ ե կատարվում բուրժուական հա-

սարակության մեջ, վորպեսզի անմիջապես նկատել, թե ինչպես կապիտալիզմի ամբողջ զարգացումը տանում ե դեպի մանր սեփականության առժամայա վոչնչացումը։ Խոշոր բուրժուան քայլայում ե մանրերին, խոշոր վաճառականը դուրս ե մղում մանրերին, գյուղացիներն ու արհեստավորները անընդհատ մնանկանում են ու բազմացնում պըղետարիատի շարքերը։

Սեփական ձեռքերով փոքրիկ հողաշերտ մշակող և իր քրտինքով այն ջրող գյուղացին ու հազարավոր որավար հողի տեր, վարձու բանվորների միջոցով մշակող կալվածտերը, վորը հաճախ տարիներով չի տեսնում իր կալվածի յերեսը, — դրանք յերկումն ել բուրժուական լեզվով սեփականատեր են կոչվում։ Իր դազգյահի վրա նաշխուն կտորներ գործող ջուրհակն ու խոռոշոր տեքստիլ գործարանատերը, վարի գործարանում հազարավոր գազգյաներ են աղմկում և հազարավոր բանվորներ աշխատում, — դրանք յերկումն ել բուրժուական լեզվով սեփականատեր են կոչվում։

Սակայն այդ սեփական ատերերի և նրանց սեփական ությունների միջեվ շատ ու շատ մեծ տարբերություն կա։ Նրանցից առաջինը, — ինարկե քանի դեռ վարձու բանվորներ ու քյարգյարներ չի պահում, — ինքն ե աշխատում, միայն իրեն ե շահագործում և իրեն համար ե աշխատում։ Յերկրորդը — միայն ուրիշի աշխատանքն ե ոգտագործում, նա ինքը կա-

րող ե նույնիսկ մատը մատին չխփել, իր փոխարեն վարձու վերակացուներ դնել, և այսուամենայնիվ նրա դրամարկղը վաստակով կլեցվի։ Առաջին սեփականությունը անհատ ական, ին դի վիդուել սեփականություն ե, իսկ յերկրորդը՝ մասնավոր, կապիտալիստական։

Պրոլետարն ել ունի իր սեփականությունը։ Դա նրա ձեռքերն են, վոտքերը, նրա ուղեղը, նյարդերը, — մի խոսքով իր բանվորական ույժը։ Նա ձախում ե այդ սեփականությունը, բայց կապիտալիզմի խորամանկ մեքենան այնպես ե սարքված, վոր նա միշտ իր աշխատանքով ուրիշների համար ե սեփականություն ստեղծում։ Դեռ լավ ե, յեթե բանվորական որից հետո նրա սեփականությունը, բանվորական ույժը նույն վիճակի մեջ մնա։ Բայց կատարվել ե և կատարվի մեջ մնա։ Բայց կատարվել ե և կատարվում ե հակառակը։ Յեթե ստրկատերերը կարողում ենին յերեք տարվա ընթացքում ամպաղապես ծծել նեղին բոլոր ույժերը, ապա XIX դարի առաջին կիսին անգլիացի կապիտալիստները հնարազանում ենին ազատ անգլիացուն ել 9 տարվա ընթացքում ինվալիդ դարձնել։ Միջին հաշվով, բանվորը գոհ կարող ե լինել, յեթե նրա աշխատավարձը բավարարում ե իր գոյությունը պահպանելուն։

Կոմունիստները դուրս չեն գալիս բանվորների, գյուղացիների և արհեստավորների անհերի, գյուղացիների և արհեստավորների անհատ ական սեփականության դեմ, վորովին-

տեղ դա չի բերում զուտ յեկամուտ, վոր ուրիշի աշխատանքի վրա իշխելու հնարավորություն տար: Նրանք կամենում են վոչչացնել միայն կապիտալիստական և եփականությունը, վոր հնարավորություն ետալիս ապրել ու հարստանալ ուրիշի աշխատանքով:

Հետեվյալ թվերը մեզ ցույց կտան, թե ինչպես երաշխվում սեփականությունը կապիտալիստական յերկրում: Իրը որինակ, վերցնենք Անգլիան, ուր վաղուց արդեն յեկամտային հարկը գոյություն ունի և այդ պատճառով ել կարելի յերոշել, թե ո՞վ և ինչքա՞ն յեկամուտ ետանում: Տվյալները վերաբերում են 1913 թ. այսինքն նախապատերազմյան ժամանակին:

Անգլիայի ամբողջ ազգաբնակությունն այն պահուն 40.000.000 եր: Նրանից միայն 20.100.000 մարդ եր յեկամուտ ստանում, վոր պարտադիր եր ցույց տալ, վորոշելու համար, թե պիտի յենթարկվել արդյոք հարկի թե վոչ: 100 ֆունտ ստեռլինգից կամ 1000 ռուբլուց (1 ֆ. ստեռլինգը հավասար ենախապատերազմյան 10 ռ.) պակաս յեկամուտը հարկի չեր յենթարկվում: Յեկինչ ե դուրս գալիս:

Ազգաբնակության ամբողջ յեկամուտը կազմում եր 2.150.000.000 ֆ. ստ.: 100 ֆունտից պիտի յեկամուտ ունեցող 1.100.000 անձանց վրա ընկնում եր 1.025.000.000, 15.000.000 բանվորների վրա միայն 775.000.000 ֆ. ստ.:

իսկ զանազան գործերով զբաղվող (գործակատարների, խանութպանների, մանր արհեստավորների, ուսուցիչների, պաշտոնյաների և այլն) 4.000.000 անձանց վրա ընկնում եր 350.000.000 ֆ. ստ.: Այսպիսով բանվորները, վորոնք իրենց ընտանիքներով միասին կազմում եյին հասարակության $\frac{2}{3}$ -ը, ժողովրդական յեկամտի միայն $\frac{1}{3}$ -ն եյին ստանում: Յեկամտային հարկ վճարողները, վոր իրենց ընտանիքներով միասին, մոտավորապես 5.000.000 հոգի եյին, ստանում եյին ամբողջ ժողովրդական յեկամտի գրեթե կեսը: Բայց սրանց մեջ ել առյուծի բաժինը ընկնում եր մի բուռը փոքրամասնության ձեռքը: Հաշվում են, վոր 120.000 մարդ, վորոնք իրենց ընտանիքներով միասին ժողովրդի $\frac{1}{17}$ մասից ավելի չեն կազմում, ստանում են Անգլիայի ազգային ամբողջ յեկամտի $\frac{2}{3}$ մասը: Յեթե վերցնելու լինենք տվյալներ՝ հողային սեփականության բաշխման մասին, ապա կտեսնենք, վոր Անգլիայի բոլոր հողերի կեսը պատկանում ե միայն 2.500 մարդու:

Իսկ բուրժուազիան և նրա պնակալեզները դեռ հավատացնում են, վոր կոմունիստների բուրժուազիան սեփականությունը վերացնելու ձգտումը փաստորեն նշանակում ե ամբողջ ժողովրդի սեփականության վոչչացում: Յեկ այս ամենը այն բոլորից հետո, յերբ նրանք անամոթաբար կողոպտեցին ու սեփականազրկեցին միլիոնավոր գյուղացիների և արհեստավորների:

Ահա թե ինչու բուրժուազիան, վոր որինական ե համարում անտիք, այսինքն՝ սուրբկության վրա հիմնված հին աշխարհի սեփականության, կամ թե ճորտային աշխատանքի վրա հիմնված ֆեոդալական սեփականության վերացումը, ներկայիս զայրանումու կատաղում ե, յերբ խոսքը վերաբերում ե վարձու աշխատանքի շահագործման վրա հիմնված բուրժուականության վերացմանը:

Զե վոր անտիք և ֆեոդալական սեփականատերերը նույնպես ապացուցում եյին, վոր իրենց սեփականությունը դարերից ի վեր գոյություն ունի, և վոր չկա ավելի մեծ հանցանք ու ավելի մեծ սրբապղծություն, քան իրենց սեփականության ձեռք տալը: Բայց և այնպես բուրժուաները համաձայնվեցին այդ անել, բայց և այնպես բուրժուազիան իր թաթը դրեց ֆեոդալական սեփականության վրա:

Ինչպես մի ժամանակ ստրկատերերն ու ճորտատերերն եյին ապացուցում, վոր առանց ստրկության և առանց ճորտության մարդիկ կծուլանան, այնպես ել հիմա բուրժուազիան և ապացուցում, վոր բուրժուական սեփականության վոչնչացումը իր յետեվից կրերի ընդհանուր ծուլություն,

Մենք քիչ առաջ տեսանք, թե ինչպես ե բաժանված այդ բուրժուական սեփականությունը Անդիայում: Չնայած վոր հասարակության վիթխարի մեծամասնությունը այնպիսի չնչին յե-

կամուտ ունի, վոր հազիվ ե կարողանում որից որ ապրել, այնուամենայնիվ մարդիկ այնտեղ աշխատում են: Կարող են ասել, վոր նրանք աշխատում են, վորովհետեվ հարկադրության վրա հիմնված ֆեոդալականության վերացումը, ներկայիս զայրանումու կատաղում ե, յերբ խոսքը վերաբերում ե վարձու աշխատանքի շահագործման վրա հիմնված բուրժուականության վերացմանը:

Յեվ այստեղ բուրժուազիան կրկնում ե ստրկատերերի ու ճորտատերերի հին յերգերը, վորոնց վրա նա մի ժամանակ այնքան կծու ծիծաղում եր, յերբ ինքն եր ապացուցում, թե հենց ֆեոդալական սեփականությունն ե նրանց պորտաբույժ դարձնում:

Ճիշտ, ե, ստրկության ու ճորտության վերացման սկզբնական շրջանում ստրուկները և ճորտերը մի պահ թուլացրին իրենց աշխատանքի ինտենսիվությունը—լարվածությունը, բայց մի քանի տարուց հետո չարտադրը վածի ժամանակավոր բացը լրացվում եր, յեթե միայն բավարար չափով հում նյութ և աշխատանքի միջոցներ լինելին, Առողջ մարդը աշխատանքի կարիք ե զգում վոչ պակաս, քան ողի:

Մենք կանգ չենք առնի մանրամասնորեն այլ մեղաղբանքների վրա, վոր հարուցում ե բուրժուազիան կոմունիստների դեմ: Յուրաքան-

չյուր բանվոր շատ լավ գիտե, թե բուրժուան ինչպես ե պաշտում «ընտանիքի սրբությունը»։ «Որինական» կողմից զատ սիրուհիներ և խրախճանքներ, իր աղջիկը իբրեւ սոսկ ապրանք ծախելու պատրաստականություն, յեթե միայն կարելի յե հարուստ տեղ տալ, —ահա բուրժուայի պաշտպանած ընտանիքի «հիմքերը»։ Բուրժուաները հանգիստ սրտով են նայում պոռնկության վրա, վորի շարքերը լեցնում են աղքատ կանաք, վորովհետեւ նրանք շատ լավ են գիտակցում, վոր իրենց աղջիկները «մաքուր արարածներ» չելին կարող մնալ, յեթե իրենց սիրելի տղաները իրենց «վառ» կրքերին բավարարություն չգտնելին հասարակաց տներում։

Բանվորների ընտանեկան կյանքը տուժում ե հենց շնովիվ այն սարսափելի բնակարանային պայմանների, վորոնց մեջ նրանք ստիպված են ապրել։ Բայց ավելի տանելի պայմաններում ել ընտանեկան անդորրություն կարելի յե ստեղծել միայն այն դեպքում, յեթե բանվորի կինը տնտեսուհի յե դառնում և ամբողջապես հրաժարվում ե հասարակական կյանքից։ Ահա թե ինչու առանց հասարակական բոլոր պայմանների արմատական փոփոխման, և առաջին հերթին առանց բուրժուական սեփականության վոչնչացման հնարավոր չի նայել գոյություն ունեցող ընտանիքի կերպարանափոխումը։

Ավելի ծիծաղելի յե և կեղծավոր այն, վոր կոմունիստներին մեղադրում են իրը թե նրանք

կանանց համայնք կանություն են կամենում հաստատել։

Բուրժուազիան և նրա սպասավորները շատ են սիրում այս հարցը մատի փաթաթան դարձնել։ Յըր Խորհրդային իշխանությունը վերացրեց կանանց իրավունքները սահմանափակող բոլոր որենքները, ամեն տեսակի հականեղափոխականներ սկսեցին գոռալ ի լուր աշխարհի, թե ոռւս կոմունիստները որինապես աղդարաբեցին կանանց համայնացումը։ Սոցիալիստների մեջ ել գտնվեցին այնպիսի դյուրահավատ խելառներ, վոր հավատացին այս բամբասանքին։ Անգլիական կոմունիստները ստիպված յեղան հատկապես մի բրոցյուր հրաժարակել՝ այդ սուտը հերքելու համար, վորովհետեւ նա առանձնապես տարածվում եր Անգլիայում ու Ամերիկայում։

Բուրժուազիան ուզում ե հովանավորել նայել յերեխաններին, վորոնց կոմունիստները կամենում են իրը թե զրկել ընտանեկան կրթության բոլոր բարիքներից և ամբողջապես հանձնել հասարակական խնամքին։

Բայց բուրժուազիայի պաշտպանները մոռանում են, վոր, ազգաբնակության հսկայական մեծամասնության համար յերեխանները բեռ են միայն, վոր պըոլետար յերեխանները փոքր հասակից արդեն աշխատանքի յեն դրվում։ Յեվքանի խոսքը հասարակական գաստյարակությանն ե վերաբերում, ապա պըոլետարիատը բուրժուական հասարակական գաստյարակության

տեղ կդնի պրոլետարականը։ Բուրժուազիան բոլոր աստիճանի դպրոցները միշտ իր դասակարգային տիրապետության զենք ե դարձել։ Նա միայն աշխատում եր, վոր իր յերեխաների հասարակական դաստիարակությամբ։ Կոմունիստները միայն նրանով են զանազանվում, վոր սկզբից յեկեթ նախապատվությունը տալիս են հասարակական դաստիարակության։ Կինը յերբեք չի կարողանա գործոն մասնակցություն ունենալ հասարակական կյանքում, յեթե միշտ շղթայված լինի ընտանեկան ոջախին և ամբողջապես նվիրվի իր յերեխաներին։ Իսկ դա վոչ ոգտավետ ե և վոչ ել նպատակահարմար։ Մասուները, մանկական պարտեզներն ու գաղութները հնարավորություն են տալիս խելամիտ դաստիարակության բարիքները բոլոր յերեխաների վրա տարածել ու նախապատրաստել նրանց իսկական դպրոցի համար։

Բայց կոմունիստները ավելի հեռու յեն գընում։ Նրանք իրենց ձեռքը միայն յերեխաների, միայն ընտանիքի վրա չեն բարձրացնում։ Խելագար համարձակությամբ նրանք ձեռք են բարձրացնում նայել հայրենիքի վրա։

Յեվ իսկապես, կոմունիստական Մանիգետափետից առաջ դեռ ֆրանսիական կոմունիստները հայտարարեցին, վոր բանվորները հայրենիք չունեն, Յերբ Սիլեզյան ջուլհակներին համոզում եյին, թե նրանք պարտավոր են համբերատար լինել

հանուն թագավորի, աստծու և հայրենիքի, նրանք անիծում վյին վոչ միայն աստծուն և թագավորին, այլ և իրենց հայրենիքը, ուր նրանք խղճուկ ու ամոթալի կյանք եյին վարում։

Նզովք քեզ, և քեզ, մեր յերկիր
ստորաքարշ,
Ուր տեր ե ամոթը, անարդանքն արքա։

Կալվածատերերի և բուրժուազիայի համար ի հարկե այդպիսի յերկիրը հայրենիք եր, բայց բանվորների համար՝ միայն խորթ մայր։ Քորպեսզի մի յերկիր բանվորի համար հայրենիք դառնա, նա պետք ե վոր բարեփոխվի, և քանի դեռ բանվոր դասակարգը պայքարում ե այդ նպատակի համար, նա, ինչպես առաջ բուրժուազիան, դեռյեվս ազգային ե մնում, վորովհուագիան, ունակ տիրել իր պետությանը, որինակ գերմանացի բանվորն՝ «իր» Գերմանիային, անգլիացի բանվորն՝ «իր» Անգլիային։ Բայց հակառակ բուրժուազիային, նա կամենում է այդ անել վոչ թե իր զենքը հարեվան ազգերի դեմ ուղղելու համար։ Ըսդհակառակը, նա ձգտում ե միանալ մյուս ազգությունների պրոլետարիատին, վորովհետեւ ինչքան ամուր լինի նրա կապը վերջինիս հետ, այնքան ավելի հաստատուն կլինի և նրա հաղթանակը։

Այստեղ, ուր հայրենիքի սերը խեղդում ե դասակարգային ինքնազիտակցության ձայնը,

պրոլետարիատը խղճուկ խաղալիք ե դառնում բուրժուազիայի ձեռքին։ Հանուն հայրենասիրության բուրժուազիային հաջողվեց քշել միլիոնավոր պրոլետարներ դեպի իմպերիալիստական սպանդանոցը, հանուն հայրենասիրության ջարդվեցին միլիոնավոր բանվորներ, և հանուն նույն հայրենասիրության, պատերազմից հետո ել, մի բուրժուական յերկիր պրոլետարիատի ոգնությամբ խեղզում ե մյուսի վոչ միայն բուրժուազիային, վորն այստեղն ել գիտի իր գրպանը ազատել, այլ նայեվ պրոլետարներին։ Ահա թե ինչու կոմունիստները ազգայնական նախապատճեն միամբ ազատելի դեմ ավելի անխնա պայքար են մղում, քան կը ո՞ն ական նախապատճեն երի դեմ։ Քանի դեռ մի ազգ շահագործում ե մյուսը, մարդու շահագործումը մարդու ձեռքով կշարունակվի դարձյալ այդ ազգի ներսում։ Ի հաշիվ շահագործվող ազգի միշտ մերձեցում ե տեղի ունենում բուրժուազիայի և բանվոր զասակարգի այն մասի միջեվ, վոր հավելում ե ստանում իր չնչին աշխատավարձին։ Ընդհակառակը յեթե հաջողվում է վոր և յերկրի ներսում վերջ դնել բուրժուական շահագործման, ապա շատ արագ կանոնավորվում են նայեվ խաղաղ հարաբերությունները դրացի յերկիրների հետ։

Բայց կոմունիստների դեմ այլ մեղադրանքներ ել են հարուցում։ Մինչեվ հիմա աշխատում եյին բամբասանքի միջոցով կորցնել նրանց

հմայքը աշխատավորության և միջին խավերի աչքում։ Սեփականությունն անգամ չեն ճանաչում, — ասում եյին նրանք. — գյուղացուն, արշեստավորին, նույնիսկ բանվորին ուղում են թալանել, խլել նրանց ամբողջ ունեցվածքն ու խնայողությունները՝ ուղում են վոչնշացնել ընտանիքը, երեխաններին խլել ծնողներից, նույնիսկ հայրենիքն են ժխտում։

Բուրժուազիան աշխատում ե այսպիսով կոմունիստների դեմ բորբոքել մարդկանց բոլոր նյութական շահերը։ Նա ապացուցում ե, վոր կոմունիստները խորտակում են մարդկանց բոլոր տնտեսական շահերը։ Առանձնապես ծիծաղելի յե, յերբ կողոպտի դեմ, վոր իբր թե կոմունիստներն են սարքում, վոնոց բարձրացնում մեր խոշոր ֆաբրիկանտների ու բանկիրների պես վարպետ կողոպտիչները։ Այսպես որինակ, ամերիկյան հայտնի ֆաբրիկանտ Ֆորդը, աշխարհիս ամենահարուստ մարդը, վորի հարտությունը հասնում ե 2 միլիարդ դոլարի, կամ 4 միլիարդ նախապատերազմական ոռուբու, հսկայական գումարներ ե ծախսում։ Իր բանվորներին կողոպտել կամեցող կոմունիստների դեմ ագիտացիա մղելու համար։

Այս պատճառով ել բուրժուազիայի ավելի կրթված պաշտպանները աշխատում են ազգել հասարակ մարդկանց վո՛չ միայն «գրպանի», այլ և մտքի ու հոգու վրա։ Նրանք կոմունիստների դեմ առաջադրում են ավելի նուրբ առարկու-

թյուններ, վո՞չ միայն ն յ ո ւ թ ա կ ա ն , տնտեսական, այլ և իդեոլոգիական գավառից վերցրված գաղափարական, հոգեկան առարկություններ։ Բանից դուրս ե գալիս, վոր ճանաչել կոմունիատների գաղափարները, նշանակում ե հրաժարվել ընդունված բոլոր սովորություններից և կրոնի, բարոյականության ու գիտության պատվիրաններից։ Ճիշտ ե արդյո՞ք սա։

Հասարակական յուրաքանչյուր դասակարգունի իր սեփական աշխարահայացքը մարդկանց փոխարարելությունների մասին, իր հասկացողությունները, վարք ու բարքի յուրատեսակ կանոնները, կարճ ասած՝ իր սեփական ի դ ե ռ լ ո գ ի ա ն։ Տվյալ դասակարգի այն ներկայացուցիչները, վորոնք զբաղվում եյին հատկապես այդ իդեոլոգիայի մշակմամբ, առաջներում կոչվում եյին ի դ ե ռ լ ո գ ն ե ր։ Հիմա մենք նրանց անվանում ենք ի ն տ ե լ ի գ ե ն ց ի ա ։ Խնչպես ազնվականությունը, այնպես ել բուրժուազիան ունեցել են և այժմ ել ունեն իրենց սեփական իդեոլոգները։

Կար ժամանակ, երբ աստվածաբանությունը — թե ո լ ո գ ի ա ն պատրաստի պատասխաններ եր տալիս ամեն տեսակի հարցերին։ Այդ պահուն մարդիկ հավատում եյին մի կամ մի քանի աստվածների և վարդում եյին այնպես, ինչպես կրոնն եր մատնանշում։ Յեկ դեռ մինչեւ հիմա ել մարդկանց վիթխարի մասաներ տարված են նման կրոնական աշխարահայացքով,

նման կրոնական իդեոլոգիայով։ Նրանց վրա ամենից ավելի ազդում են այն ապացույցները — արգումենտները, վորոնք վերցրված են կրոնից։ Բավական ե նրանց ապացուցել, որ կոմունիստները դեմ են աստծուն, վոր կոմունիզմը հակասում ե կրոնին, —և բուրժուազիայի գործը արդեն շահված ե։

Բայց այստեղ նորից ոգնության ե հասնում բուրժուազիայի փորձը։ Յերբ նա պայքարում եր ֆեոդալիզմի դեմ, նա նույնպես հանդիպում եր այն հոգեկան արգելքներին, վոր ազնվականությունն ու հոգեվորականությունը հարուցանում եյին նրա պահանջների դեմ։ Այն ժամանակ նա համարձակորեն դուրս յեկավ կրոնի ու քրիստոնեության դեմ, նա դաժան ծաղրանքի յեր յենթարկում կրոնը, նա մերկացնում եր՝ քահանաների արարքները։

Ճիշտ ե, դեռ այն ժամանակ նրա շարքերում կային մարդիկ, վորոնք վախենում եյին, թե աթե ի գ մ ը - ա ն ա ս տ վ ա ծ ո ւ թ յ ո ւ ն ը, կարող ե վտանգավոր դառնալ իրեն, բուրժուազիայի համար և այս պատճառով առաջարկում եյին միայն գտել կրոնը ամեն տեսակի անհեթեթություններից, վոխարիներ այն խելամիտ հավատով դեպի միանալական աստվածը՝ տիեզերքի այդ միահեծան տերը, ինչ ել վոր լինի, այնուամենայնիվ բուրժուազիան վախեցած կանդ չառավիշխող կրոնի առջեվ, այլ ընդհակառակը, ցույց տվեց, որ կրոնը միայն որհնում ե և պաշտպանում ֆեոդալիզմի շահերը։

Այս պայքարում մեծ դեր խաղացին բուրժուազիայի իդեոլոգները, XVIII դարի լուսավորիչները, վորոնք աստվածաբանական ուսմունքն—թեոլոգիային հակադրեցին իրենց ուսմունքը, բնության իրենց բացատրությունը։ Այդ փիլիսոփաները, (իմաստաբներները, գոյության իմաստը վնտրող մարդիկ) ժմատում եյին աստծու գոյությունը, նրանք ապացուցում եյին, վոր վոչ թե հոգին ե ստեղծել նյութը, այլ ընդհակառակը, հոգին հենց այդ նյութի արդյունքն ե։ Նրանք մատնանշում եյին, վոր գերբնական ուժերի, աստվածների ու վերջն ել մի աստծու գոյության մասին ունեցած հավատը արդյունք ե բնության որենքները չգիտենալու և նրա անծանոթ ուժերի հանդեպ տածած սարսափի։ Գոյություն ունեցող այն համոզմունքն, թե բարիի, բարոյականության և մի շարք նման գաղափարները մարդկանց համար բնածին են, աստվածն ե դրել այդ գաղափարները մարդկանց հոգու մեջ, XVIII-րդ դարի փիլիսոփաները առաջադրեցին այն միտքը, վոր այդ գաղափարները, ընդհակառակը, մարդկանց վորոշ միջավայրի ծնունդ են, վոր յեթե փոխվի մարդկանց դաստյարակությունը, կփոխվեն նայեվ նրանց մտքերը, կարծիքները։

Կոմունիստները, հենվելով Մարքսի և Ենգելսի զարգացրած ու հիմնափորված ուսմունքի վրա, ավելի խորն են զնում։ Նրանք ասում են, վոր ամեն մի իդեոլոգիայի հիմքում

գանվում են վորոշ հասարակական հարաբերություններ, այսինքն՝ իրենց կարիքները բավարարելու համար բնության դեմ պայքարելու նպատակով միացած անհատների միջեվ դասավորվող հարաբերություններ։ Իրենց կարիքները բավարարելու համար մարդիկ պիտի աշխատեն, պիտի կարգի գցեն իրենց տնտեսական կյանքը, Տնտեսական յուրաքանչյուր կազմակերպության համապատասխանում ե հատուկ կենցաղ և հասարակական հատուկ աշխատանք։ Մտըրեկական տնտեսության մեջ մարդկանց պատկերացումները, հայացքները, հասկացողություններն այլ են, քան ճորտատիրական շրջանում։ Վոչ թե գիտակցությունն ե բնորոշում կացությունը, այլ կացությունն ե բնորոշում գիտակցությունը։ Յեթե փոխվում ե կյանքի ձեվը, պատկերը, և փոխվում են հասարակական հարաբերությունները կառուցվածքն ու կարգերը, դրանց հետ միասին փոխվում են մարդկանց իդեոլոգիան, գաղափարները, հասկացողությունները, կարծիքները, նրանց իդեոլոգիան երը։

Յերբ հասարակությունը բաժանվում ե գասակարգերի, ապա սրանց զարգացման հետ միասին, յուրաքանչյուր դասակարգի ներսում զարգանում ե ուրույն իդեոլոգիա։ Այն իդեոլոգիա, մտքերի կողքին, վոր ժառանգել ե և բաժանում ե ամբողջ հասարակության հետ ամեն մի դասակարգ, նրա ներսում զարգանում են իր սեփական գաղափարները, հայացքներն, ու հասկացողությափարները, հայացքներն,

թյունները, իր ուրույն դասակարգաց այլին
իդեոլոգիան:

Յերբ դասակարգային հասարակության մեջ
բացառիկ իշխանություն և ձեռք բերում վոր և
եղասակարգ, յերբ նրա դասակարգային իշխա-
նությունը բավական յերկար և տեվում՝ նա
մյուս դասակարգերի վզին և փաթաթում վոչ
միայն իր նյութական աիրապետությունը, շա-
հագործում և նրանց վոչ միայն տնտեսա-
պես և քաղաքական ապես, այլև հո-
գեպես:

Այդպես մի ժամանակ ազնվականությունն
եր կապում իր գաղափարները բուրժուազիայի,
քաղքենիության վզին: Հարստացած քաղքենին
դեպի ազնվականությունն եր ձգտում, յուրա-
ցնում նրա սովորություններն ու լեզուն և
աշխատում եր «ազնվական քաղքենի» ձեվանալ:
Իսկ յերբ բուրժուազիան, վորպես դասակարգ,
ամրացավ, ձեվակերպվեց ու պայքարի բռնվեց
ազնվականության դեմ, նա իր կոմեղիաների,
բանաստեղծությունների և նկարների միջոցով
ծաղրում եր ազնվականության իդեոլոգիան և փա-
ռարանում եր իր սեփականը: Ազնվականության
իդեալներին նա հակադրեց բուրժուազիան
եր իդեալները:

Բուրժուազիան XIX դարում տիրող դա-
սակարգ դարձավ: Մամուլի, գրականության ու
արվեստի միջոցով նա տարածում եր իր գաղա-
փարները հասարակության մնացած դասակար-

գերի շրջանում: Նա աշխատում եր պարտադիր
դարձնել իր գաղափարները նայել այն դասակար-
գի համար, վորին շահագործելով եր ինքնապրում:
Դեռ շատ բանվորներ կան, վորոնք ձգտում են
դեպի բուրժուազիան, նմանվում են նրան, ինչ-
պես առաջ քաղքենիները՝ ազնվականության:
Այժմ տիրող գաղափարն եր են հանդիսա-
նում բուրժուազիան իդեյաները: Կոմունիստները
սրանց հակադրում են իրենց գաղափարները,
հեղափոխական գաղափարները, և յեթե բուր-
ժուազիան այդ առթիվ աղմուկ երարձացնում,
ապա նա մոռանում են միայն, վոր մի ժամա-
նակ իր գաղափարներն ել հեղափոխական ազ-
նականության վերաբերմաբ:

Յերբ, վերջապես, բուրժուազիան և իր ի-
դեոլոգները հարկադրվում են ընդունել, վոր
գաղափարները, կրոնը, վարքածեկվերը, աշխարա-
հայացքն ու բարոյական հասկացողությունները
փոփոխության են յենթարկվել վոր նորու-
թյունը ամեն անդամ վատ չենց միայն
այն պատճառով, վոր նա նորություն ե, նրանք
այն ժամանակ դիմում են այլ պատճառաբա-
նության, վորի հետ մենք սկզբում ծանոթացանք:

Ինչքան ել փոփոխվելու լինեն կրոնական,
բարոյական ու քաղաքական գաղափարները,
—ասում են նրանք, —այնուամենայնիվ կրոնը,
բարոյականությունը շարունակ պահպանվում են:
Այսպես ուրեմն կան հավել ժական աշխար-

տություններ, գաղափարներ, վորոնք անխախտ են մնում և փոխում են միայն իրենց արտաքին կեղեվը:

Այս՝ պատասխանում են կոմունիստները: Այդ գաղափարները պ ա հ պ ա ն վ ե լ են մինչեվ այժմ, նրանք հանդիպում են և հին աշխարհում, և միջին դարերում և նոր ժամանակաշրջանում: Բայց ինչո՞ւ: Այս պարզ պատճառով, վոր ինչքան ել հ ի ն աշխարհի, ֆ ե ռ դ ա լ ա կ ա ն ու բուրժուական հասարակությունները տարբեր լինելին իրարից, այնուամենայնիվ վորոշ գաղափարներ և հասկացողություններ ընդհանուր ելին նրանց բոլորի համար: Այդ հասարակությունները հիմնված ելին դասակարգային ճնշման ու պայքարի վրա, և նրանց կյանքի պայմանների նմանությունը առաջ եր բերում նայել գիտակցության ձեվերի նմանություն:

Բուրժուական հասարակությունը առաջին անգամ ստեղծեց այնպիսի պայմաններ, վոր անհրաժեշտ են ամեն տեսակի դասակարգային հասարակությանը վերջ տալու համար, իսկ կոմունիստները առաջինն են, վոր պահանջում են դասակարգային հասարակության վերացումը: Կոմունիստական հեղափոխությունը հենց նրանով ե տարբերվում բոլոր նախորդ հեղափոխություններից, վոր նա ա ր մ ա տ ա պ ե ս, առանց յետ նայելու խզում ե իր կապը անցյալի, սեփականության հին հարաբերությունների հետ և հիմնապես կտրում ե հին տ ր ա դ ի ց ի ո ն

—ժառանգված գաղափարների ու համկացողությունների հետ ունեցած իր առնչությունը:

Ցերք մարդիկ իսկապես վոր հավասար անհատներ կդառնան, յերբ կանհետանա մարդու ամեն տեսակի շահագործումը մարդու կողմից, յերբ մարդիկ կհասկանան, վոր իրենց բախտը գտնվում ե իրենց սեփական ձեռքերում, այն պահուն նրանք կղաղարեն հավատալ աստվածներին, սատանաներին, մի ինչ վոր բարձրագույն եակի, վորը կառավարում ե ամբողջ բնությունը, բայց չնայած դրան, ելի հանգիստ սըրտով ե նայում բուրժուական աշխարհի բռլոր ստորություններին ու գարշանքներին:

Կոմունիստական, բանվորական հեղափոխության գլխավոր գործիչն ե իրեվ դասակարգ կազմակերպված պրոլետարիատը: Ցեվ նրա առաջին գործը պիտի լինի՝ բարձրանալ տիրող դասակարգի աստիճանին, գրավել քաղաքական իշխանությունը, հաստատել պ ը ո լ ե տ ա ը ա կ ա ն դ ի կ տ ա տ ո ւ ր ա :

Այստեղ ել նա նորից պիտի դաս առնի բուրժուազիայից, վորն ամենեվին չսպասեց, մինչեվ վոր բուրժուական հասարակությունը պատրաստ գիճակում դուրս գար ֆեոդալիզմի կեղեւից:

Սոցիալական հեղափոխություն կատարելու համար բավական ե, վոր հեղափոխական դասակարգը դառնա «դասակարգ իրեն համար», և նենա ուժեղ դասակարգային գիտակցություն,

բավական ե, վոր հին հասարակությունն արդեն պատրաստած լինի նոր հասարակություն կառուցելու անհրաժեշտ տարրերը։ Յերբ բուրժուազիան եր կատարում իր սոցիալական հեղափոխությունը, նա ոգտագործեց իր քաղաքական իշխանությունը՝ հին ֆեոդալական հասարակությունը կործանելու և նրա փոխարեն նոր՝ բուրժուականը ստեղծելու համար։

Այդպես ե վարդում ու պիտի վարդի նայել պրոլետարիատը։ Գրավելով քաղաքական իշխանությունը և վերջնականապես ջախջախելով բուրժուազիայի դիմադրությունը, նա խորած ե արտադրության բոլոր միջոցները՝ պրոլետարական պետության ձեռքում կենտրոնացնելու համար։ Իսկ այդ բավական յերկար ժամանակ ե պահանջում։ Չե վոր յելքոպական մի քանի յերկրներում բուրժուազիան ել տանյակ տարիների ընթացքում չեր կարողանում ֆեոդալիզմի բոլոր հետքերը վերջնականորեն արմատախիլ անել։ Ֆեոդալիզմը առանձնապես համառ պաշտպանություն եր ցույց տալիս այնտեղ, ուր բուրժուազիան շտապում եր նրա հետ համաձայնություն կնքել ընդդեմ պրոլետարիատի։

Կոմունիստների Միության անդամները դեռ 1847 թ. պարզ գիտակցում եյին, վոր քիչ ժամանակ չի պահանջվի՝ կապիտալիստական հասարակարդը կոմունիստականի վերածելու համար։

Իրենց թերթերում նրանք գրում եյին. — «Մենք այս կոմունիստներից չենք, վորոնք հա-

վատում են, թե կոմունիստական հասարակությունը, իր թշնամիներին հաղթահարելուց հետո, իբր թե ձեռքի մի շարժումով կարող ե անմիջապես իրականացվել։ Մենք գիտենք, վոր մարդկությունը թոհշքներ չի կատարում, այլ քայլ առ քայլ ե տուաջ շարժվում։ Մենք չենք կարող յերեկոյան քուն մտնել վոչ հարմոնիկ (բարեկարգ) հասարակության մեջ և առավոտյան արթնանալ հարմոնիկ հասարակության ճոցում։ Դրա համար, նայած պայմաններին, պիտի լինի ավել կամ պակաս տեվող փոխանցման ըրջան։ Մասնավոր սեփականությունը միայն աստիճանաբար կարող ե փոխարինվել համայնական սեփականությամբ։

Կարեվոր ե սիայն, վոր այդ փոխանցման ըրջանում պրոլետարիատը ամուր պահի իշխանությունը իր սեփական ձեռքերում։ Բուրժուազիայի հետ միանալով, կոալիցիա կազմելով հնարավոր չե պահել այդ իշխանությունը։ Այդ պատճառով անհրաժեշտ ե մշակել մի շարք միջոցներ, վորոնք կրծատեն փոխանցման ըրջանը և կոմունիզմի լիակատար իրագործման պայմաններ նախապատրաստեն։

Այդ ժամանակաշրջանի համար կոմունիստներն անհրաժեշտ եյին համարում հետեւյալ միջոցները։ Նրանց կարծիքով առաջին հերթին պետք եր խլել հողը խոշոր կալվածածական սեփական կալվածատերի ստացած բոլոր յեկամուտները պիտի

հատկացվեյին պրոլետարական պետության և գործածվեյին պետական ծախսերը ծածկելու համար։

Հետո բոլոր կապիտալիստներին պետք եր յեկամտային հարկի յենթարկել, բայց այնպիսի հարկի, վորի չափը ավելանար համաձայն յեկամտի մեծության, այսինքն՝ պը ո գը ես ի վ-յ եկամտային հարկի։

Անհատական սեփականության ձեռք շտալով հանդերձ, կոմունիստները պիտի միջոցներ ձեռք առնեյին, վորպեսզի սեփականությունը չաճեր ու չկուտակվեր նրանց ձեռքում, ովքեր ոգտագործում եյին այն՝ ուրիշներին շահագործելու համար։ Այս նպատակով նրանք պիտի գործադրեյին նայել այնպիսի միջոցներ, վորպիսին ժառանգական իրավունքի վոչնչացումն ե։ Ավելի անիմաստ կլինի սեփականությունը թողնել այն մարդկանց ձեռքին, վորոնք ձգել են իրենց աշխատանքը միայն այն պատճառով, վոր պրոլետարիատը իշխանություն ենվաճել, և նրանց ձեռքին, ովքեր արտասահմանում դավադրություններ են սարքում ու աշխատում ստանալ ոտար պետությունների միջամտությունը, նման թշնամիների դեմ ե ուղղված այնպիսի միջոց, ինչպիսին եմիգրանտների և խռովարների սեփականության կոնֆիսա-

ցի ան (բռնագրավումն) ե։

Քանի վոր բանկերը տնտեսական կյանքում վիթխարի նշանակություն ունեն, վորովհետեւ

նրանց տրամադրության ներքոյե այնպիսի գորեղ միջոց, վորպիսին կրեղիտն ե, վոր գլխավորապես նրանք բաց են թողնում կապիտալիստներին, — ուստի պրոլետարական պետությունը պիտի կենտրոնացնի այն իր ձեռքում միամնական ազգային բանակի միջոցով, վոր պիտի յենթարկի իր հսկողության և վորը նրա ցուցմունքով միայն իրավունք ունենա վարկ բաց թողնել։

Վոչ պակաս կարեվորություն ունի նայել վորսադրության միջոցների կենտրոնացումը պրոլետարական պետության ձեռքում։ Մանիֆեստը խոսում եր, ի հարկե, հաղորդակցության այնպիսի խոշոր միջոցների մասին, ինչպիսին յերկաթուղիներն ու շոգենավերնեն, վորոնք այն ժամանակ դեռ շատ քիչ եյին տարածված։ Հաղորդակցության այնպիսի միջոցներ, ինչպես որինակ հեռագիրն ու փոստը, գեռնոր եյին սկսել զարգանալ։ Ողային հաւ լդակցության միջոցները, յեթե հաշվի չառնունք ողապարիկները, վոր վոչ մի գործնական նշանակություն չունեյին, այն ժամանակ դեռ անծանոթ եյին։ Անթել հեռագրի ու հեռախոսի մասին վոչ չեր մտածում նույնիսկ։ Այս պատճառով ել Մանիֆեստում խոսքը վերաբերում ե միայն տրանսպորտի-փոխադրության միջոցները պետության ձեռքում կենտրոնացնելուն։

Փոխանցումը դեպի կոմունիզմ հեշտացնելու և հասարակական արտադրության ոգտավետությունը ցույց տալու համար, պրոլետարական

պետությունը պիտի ազգայնացրած ձեռնարկություններ — պետական ֆաբրիկներ ստեղծեր։ Այսպիսի կոլեկտիվ տնտեսություններից բացի, պրոլետարական պետությունը, հատուկ հողամասերի վրա, ընդհանուր ծրագրով, պիտի զբաղվեր դաշտերի մշակումով և բարելավումով։ Նման հողագործական տնտեսությունները պիտի ցույց տային գյուղացիներին, թե վորքան ձեռնտույթ գյուղատնտեսական կողմանը առաջանական է առաջանական համագործակցությունը։

Պրոլետարական պետությունը պիտի վերացներ հասարակության բաժանումը մարդկանց, վոր վաստակում են, բայց չեն աշխատում, և մարդկաց, վոր աշխատում են, բայց չեն վաստակում։ Դրա համար, նա, զինվորական ծառայության պետ, պիտի մտցնի ընդհանուր պարտադիր աշխատանք։ Նման պարտադիր աշխատանքը ունեցող բանվորներից պետք եր կազմել խմբեր, վորոնց ցող կարելի լիներ ուղարկել ամեն տեսակ հասարակական աշխատանքի, մասնավորապես դաշտերը մշակելու այն դեպքում, յերբ շտապ կարգով անհրաժեշտություն կզգացվեր բանվորական ուժի։

Քաղաքային բանվորների այս մասնակցությունը դաշտային աշխատանքներին առանձնապես կարելի է այն պատճառով, վոր ոգնում է հարթելու այն պատնեշի, վոր գոյացել է գյուղի և քաղաքի անջատման հետեւանքով առդյունագործական աշխատանքի միջնական աշխատանք։ Տարբական աշխատանքը միայն միայն կարելի է առաջանական համարակության մեջ յերեխաներուրժուական հասարակության մեջ յերեխաների աշխատանքը կիրառվում է միայն իբրեւ ֆարբեկային աշխատանք, յեթենա ծառայում է միայն կապիտալիստների վաստակը ավելացնելու համար, ապա պրոլետարական պետության մեջ այդ աշխատանքն այնպես պիտի կազմակերպել, վոր նա կազմի դաստյարակության անհրաժեշտ մասը, կոր գիտելիքներ ձեռք բերելը, դաստիա-

վորոշ ժամանակում կենտրոնացած գյուղատնտեսական աշխատանքների կարգը հսարավորություն ե տալիս քաղաքի բանվորներին՝ ամառը մասնակցելու դաշտային աշխատանքներին, իսկ գյուղական բանվորներին՝ ձմեռը աշխատել քաղաքի գործարաններում։ Այս, ինչ վոր կապիտալիզմի տիրապետության ժամանակ կատարվում է դաժան անհրաժեշտության շնորհիվ, պրոլետարական պետությունը կարող է գիտակցարար կազմակերպել։ Այսպիսով աստիճանաբար կվոչնչաց վեր գյուղական պատությունը։

Ապագան ապահովելու համար պրոլետարական պետությունն ամենից առաջ յերեխաների մասին պիտի հոգա։ Մանուկներին այնպես պիտի կրթել, վոր աճող սերնդի համար առաջնակարգ տեղ գրավեն վոչ թե նեղ անհատական, ընտանեկան, այլ հասարակական շահերը։ Իսկ այդ կարելի յերագործել միայն այն դեպքում, յեթե բոլոր յերեխաները հասարակության մեջ յերեխաներուրժուական հասարակության մեջ յերեխաների աշխատանքը կիրառվում է միայն իբրեւ ֆարբեկային աշխատանք, յեթենա ծառայում է միայն կապիտալիստների վաստակը ավելացնելու համար, ապա պրոլետարական պետության մեջ այդ աշխատանքն այնպես պիտի կազմակերպել, վոր նա կազմի դաստյարակության անհրաժեշտ մասը, կոր գիտելիքներ ձեռք բերելը, դաստիա-

ը ակությունը միանա ոգտակար աշխատանքի, նյութական արտադրության հետ:

Ի հարկե, այս 75 տարվա ընթացքում, վորանցել են՝ յերբ կոմունիստներն առաջին անգամ առաջաղթեցին վերոհիշյալ միջոցները, խոշոր արդյունագործությունը այնքան մեծ չափեր ենդունել, և ինքը՝ բանվոր դասակարգն ել մի շարք հեղափոխությունների ընթացքում այնպիսի մեծ փորձառություն ե ձեռք բերել, վոր այդմիջոցները այժմս կարող են փոփոխությունների յենթարկվել, կամ լրացվել: Այն պահուն կարեվոր եր ցույց տալ, թե ինչ պիտի անի պրոլետարիատը՝ կապիտալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում:

Այս բոլոր միջոցների իրագործումը պիտի իլի բուրժուազիայից նրա վողջ կապիտալը, կենտրոնացնի արտադրության բոլոր միջոցներն ու վերջ դնի վարձու աշխատանքին, իսկ դրա հետմիասին նայել հասարակության դասակարգային բաժանումին: Քանի դեռ դասակարգերը գոյություն ունեն, քանի դեռ պրոլետարիատի դեմ կանգնած ե նոր տապալված բուրժուազիան, վորը պատրաստ ե ոգտագործել նրա յուրաքանչյուր սխալը և ամեն մի թերությունը՝ իր տիրապետությունը վերականգնելու համար, պրոլետարիատը պիտի իր ձեռքում պահի քաղաքական իշխանությունը, բացի այդ, վորքան ավելի ամուր լինի պրոլետարիատի իշխանությունը, այնքան ավելի ամուր լինի:

հեշտությամբ կվերացնի նա արտադրության հին պայմանները, այնքան ավելի արագ կարելի կլինի անցնել կոմունիզմի: Շահագործողների հին սերունդը մեռնում ե, աճում ե շահագործման անգիտակ մարդկանց նոր սերունդ:

Յերբ այլեվս գոյություն չեն ունենա հասարակական դասակարգերը, վորոնց անհրաժեշտ ե պահել ձնշման ներքո, յերբ կվերանա մի դասակարգի իշխանությունը մյումների վրայից և կանհետանան գոյության պայքարն ու նրանից առաջացող ընդհարումները և բռնությունները,—այն ժամանակ չեն լինի նայել մարդիկ, վորոնց պետք լինի հսազանդեցնել, ճընշել, այլյեվս կարիք չի զգացվի պետական իշխանության, վորովհետեւ վերջինս եապես հանդիսանում ե մի դասակարգի կազմակերպված ուժը՝ մյուսին՝ տիրապետելու համար:

Պետական իշխանության միջամտությունը մարդկանց հարաբերություններին հետզհետեավելորդ կրառնա և ինքն ըստինքյան կդադարի: Այլյեվս անպետք լինելով, պետությունը իր ընական մահով կմեռնի: Իսկ մարդկային շահագործման վրա հիմնված հին հասարակության փոխարեն, ուր—

Միայն նա, վոր խեղդում եր ամենքին՝ Ազատ չնչում և գործում եր և ապրում,— Կհաստատվի ազատ ու հավասար մարդկանց ա-

պադառակարգային հասարակությունը, վորի մեջ
յուրաքանչյուր անհատի ազատ զարգացումը
պայման կլինի բոլորի ազատ զարգացման
համար:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴԻ

Մանիփեստի առաջին գլխում շարադրված
եր դասակարգերի պայքարի պատմությունը և ա-
ռանձնապես մանրամասնորեն նկարագրված եր
այն երկու դասակարգի՝ պրոլետարիատի և բուր-
ժուազիայի զարգացումը, վորոնց պայքարով
ե բնորոշվում արդի հասարակության վողջ քա-
զաքական ու հասարակական կյանքը:

Յերկրորդ գլուխը պարզաբանում եր կոմու-
նիստների դիրքը պրոլետարների ու նրանց նպա-
տակների հանդեպ, քննության եր յենթարկում
բուրժուազիայի և իր իդեոլոգների կողմից կոմու-
նիստների դեմ առաջադրած առարկությունները և
մատնանշում եր այն մոտակա պահանջները, վոր
կոմունիստները հանդես են բերում փոխանցման
շրջանի համար:

Բացի կոմունիստների Միության մեջ հա-
մախմբված կոմունիստներից, կային նայեվ այլ
սոցիալիստներ ու կոմունիստներ, վորոնք նույն-
պես ուղում եյին գործել պրոլետարիատի շրջա-
նում և ազդել նրա վրա, Անհրաժեշտ եր պար-
զել կոմունիստների վերաբերմունքը այդ բոլոր
հոսանքների և ուղղությունների հանդեպ: Հենց
այս ե յերրորդ գլխի քննության առարկան:
Սակայն հասկանալի յե, վոր այդ գլուխը բո-

լորից ավելի հսացածն եւ Մարքսի և Ենգելսի կոմունիզմը այս 75 տարիների ընթացքում տասնյակ միլիոնավոր բանվորների համար դարձել ե մի խոշոր ուժ և ավետարան։ Ընդհակառակը, բոլոր այն ուսմունքները, վորոնց դեմ մի ժամանակ կոմունիզմը պայքարում եր՝ իրեն ճանապարհ բանալու համար, արդեն վաղուց են դադարել վոր և ե դեր խաղաղուց և ամբողջապես մոռացված են։ Նրանք այժմ դարձել են անցյալի սեփականություն, վոր անհրաժեշտ ե ուսումնասիրել ներկան հասկանալու համար, բայց հիմա անմիջական գործնական նշանակություն չունեն։ Կոմունիստներն այժմ ստիպված են պայքարել բոլորովին այլ կուսակցությունների, այլ հոսանքների դեմ և հաճախ այնպիսիների դեմ, վորոնք հավատացնում են թե իրենց և թե ուրիշներին, վոր իրենք յեկա Մարքսի ու Ենգելսի աշակերտներն են։

Յերրորդ գլուխը կարդալիս պետք ե այս ամենը նկատի առնել։ Այստեղ հիշված մի քանի ցուցամունքներ պահում են իրենց ուժը նայել կոմունիստների այժմյան վորոշ հակառակորդների նըկատմամբ, բայց նրանք անմիջականորեն վերաբերում են այն կուսակցություններին և հոսանքներին, վորոնք վերջնականպես իջել են պատմության ըեմից։

Բացի այդ, մի շարք անուններ յեկա, վոր գործածվում են այս գլխում, հաճախ չունեն այն իմաստը, վոր մենք ենք այժմ նրանց տա-

լիս։ Կոմունիզմը բառը գործ ե ածվում վորոշ իմաստով։ Նա նշանակում ե մի ուսմունք, վոր պահանջում ե մասնավոր սեփականության վերացումը, իսկ կոմունիստ են անվանում այն մարդուն, վորը առաջադրում ե այդ պահանջը, Ընդհակառակը, սոցիալիզմը բառը նշանակում ե վոչ միայն իսկական սոցիալիստների ուսմունքը, այլև այն սոցիալիստների, վորոնք հասկանում ենին թե չարիքի արմատը կապիտալիզմի մեջ ե թաղված և առաջն հույս ունեյին, վոր իրենց կհաջողվի համոզել բուրժուազիային՝ վոխել իր ռզգացումները։ Նույն սոցիալիզմը բառով Մանիքեստը անողել բուրժուազիային՝ վոխել իր ռզգացումները։ Նույն սոցիալիզմը բառով Մանիքեստը անողել բուրժուազիային՝ վոխել իր ռզգացումների, վորոնք աքական գործիչների ու մտածողների, վորոնք ամեն միջոցներով ու զանազան «գեղ» ու դարմանով» աշխատում ենին վերջ գնել հասարակական չարիքներին, սակայն և զային և վոշարին կենդանի թողնելու, վոչ կապիտալին և վոչ ել վաստակին վնաս չհասցնելու պայմանով։

Ան այս տեսակի սոցիալիզմը բաժանվում է յերկու կարգի։ — յետաղ մական և պահանջանության սոցիալիզմի։ Սկսենք առաջինից։

Յետաղ մական սոցիալիզմը՝ դա այն սոցիալիզմն է, վոր կապիտալիզմի չարիքները կամենում եր վերացնել նախընթաց հասարակական կարգերին վերադառնալու միջոցով, հետեւ բար ուղում եր յետ շրջել պատմության անիվը։

Նրա արտահայտիչներն ու մունետիկներն են այն դասակարգերի ներկայացուցիչները, վորոնք տուժել եյին կապիտալիզմի զարգացումից ու զրկվել ամեն տեսակ արտոնություններից:

Մանիփեստը առաջին հերթին խոսում է ավատական սոցիալիզմի մասին: Դա—յետաղիմական սոցիալիզմի ամենակեղծավոր այլատեսակն եւ: Նրա կողմանկիցները մեծ մասամբ Անգլիայի և Ֆրանսիայի արիստոկրատիայի ներկայացուցիչներն են, վորոնք չեյին կարող ներել տիրող նոր դասակարգին՝ բուրժուազիային: Չե վոր դեռ մոտիկ անցյալում բուրժուազիան նրանց շեմքն եր մաշում, իսկ այժմ, վորպես աներեսի մեկը, բարձրից երնայում նրանց վրա: Ռեստավրացիային հին կարգերի վերականգնման բոլոր փորձերը անհաջողությամբ վերջացան: Ֆրանսիայում, ուլ Մեծ Հեղափոխությունից և Նապոլեոնի զինվորական դիկտատուրայից հետո, հաջողվեց հին թագավորական տան (Բուրբոնների) իշխանությունը ժամանակավապես վերականգնել—1815 թվից մինչեւ 1830 թ. տեսվող ժամանակամիջոցը այս պատճառով ել կոչում են ռեստավրացիայի եպօխ—նոր հեղափոխությունը, 1830 թ. Հունիսի անոյան հեղափոխությունը, վերջնականորեն տապալեց ազնվականությունը:

Անգլիայում նույնպիսի հարված հասցըեց ազնվականությանը 1832թ. պարլամենտան առաջանականությանը՝ վոր վոչչացըրեց այսպես կոչված Շնեխված տեղերը, այսինքն՝ զրկեց ֆեո-

դաներին իրենց յետընկած քոսոտ գյուղերի ներկայացուցիչներին պարլամենտ ուղարկելու իրավունքից և հանձնեց այդ իրավունքը արդյունագործական քաղաքներին:

Վիարվորված ազնվականները սկսեցին մեղադրել բուրժուազիային այն բանում, թե հենց ինքը բուրժուազիան եւ հանցավոր՝ նոր հասարակության զարգացման շնորհիվ տռաջ յեկած գըժքախտությունների համար: Նրանք մերկացնում եյին գործարանային կարգերը եւ հանդես եյին գալիս իրերեվ բանվորների պաշտպան, իսկ այդ չեր խանգարում նրանց անսամբլարար շահագործել իրենց արենդատորներին ու կողոպտել գյուղական բանվորներին: Նրանք կուգեյին վերականգնել հին գեղագական հասարակությունը,

Ուր ճնշված ճորտերի խումբը
նախանձում եր տիրոջ շների
ապրուստին անգամ,

բայց ուր միյելիսույն ժամանակ ստորին դասերը պատվում եյին իրենց սենյորին, յեկեղեցի եյին հաճախում և ջանասեր կերպով աշխատում:

Ավատական սոցիալիստների թվին են պատկանում յերկու անգամ տապալված Բուրբոնների իշխանության վրականգնման կողմանկիցները—լեգիտիմիստները Ֆրանսիայում, իսկ Անգլիայում՝ արիստոկրատիայի յերիտասարդ ներկայացուցիչների մի խմբակ, «Յերիտասարդ Անգլիա» անունվ, վորին անդամագրվեց հետագայում հայտնի

պետական գործիչ Դիզըայելին։ Նա գրել ե մի շաբք պատմվածքներ, վորոնց մեջ տրված ե Անգլիայի խոշոր արդյունագործության զարգացման հետեւ վանքների փայլուն նկարագիրը։ Վորպես արդյունագործական բուրժուազիայի և առեվտրի ազատության հակառակորդներ, նրանք ուզում եյին իրենց կողմը քաշել բանվորներին՝ վերահաստատելու ճշմարիտ արիստոկրատիայի քաղաքական իշխանութունը, վոր աշխատավոր զանգվածները պաշտպանելու յեր ճնշումից և կեղեքումից։ Իսկ նրանցից պահանջվում եր միայն ննազանդություն և սեր՝ դեպի իրենց հովիվները։ Իհարկե, անհնազանդ և ըմբոստացող բանվորների նկատմամբ նրանք թույլ եյին տալիս ամենախիստ միջոցներ։

Գրեթենույն խմբիցն ե պատրաստված և տերտերական, կամ քը ի ս տ ո ն ե ա կ ա ն սոցիալիզմը։

Չնայած նրա մի քանի ներկայացուցիչների անձնական ազնվության, քրիստոնեական սոցիալիզմը ռեակցիոն սոցիալիզմի ամենագարշելի այլակերպություններից մեկն ե։ Միայն թե այն չպիտի շփոթել միջնադարյան, կամ Մյունցերի կոմունիզմի հետ, վոր նույնպես հենվում եր քըրիստոնեության վրա։ Սակայն այդ հեղափոխական կոմունիստականդավորներն ապստամբելով պաշտոնական քրիստոնեության դեմ, նրան հակադրում եյին ըմբոստ բնույթ կրող նախնական քրիստոնեությունը, վորպես գյուղացիների և արհեստավորների կրոն։

Արդի քրիստոնեական կոմունիզմը, գերմա-

նական մի չափավոր գիտնականի արտահայտությամբ, իրեն այնպես ե պահում, ինչպես դիացորթը կովի դաշտում։ Նա գաղտագողի մոտենում ե նրանց, վորոնց արդի հասարակությունը վերքեր ե հասցըել, կամ ուժասպառել, վորպեսզի բուժի նրանց վերքերը և զայրույթը՝ դեպի այդ հասարակությունը։

Այս սոցիալիզմը ծածկում ե այն բոլոր գարշանքները, վոր թույլ ե տալիս բուրժուազիան բանվորության նկատմամբ։ Նա կոչում ե բուրժուազիային բարեսիրտ լինել բանվորության վերաբերմամբ, իսկ բանվորներին՝ հնազանդվել բուրժուազիային։ Նա սլրոլետարիատին խորհուրդ ե տալիս յենթարկվել, հնազանդ լինել, սակայն «ալրոլետարիատը չի ուզում, վոր իր հետ վարվեն իբրեւ մարդկության տականքի հետ, և նրա համար համարձակությունը, ինքնազիտակցությունը, հըպարտության ու անկախության զգացումները հացից ավելի կարելոր են»։

Մանիֆեստը ռեակցիոն սոցիալիզմի շարքին ե դասում և մանը - բուրժուազիան սոցիալիզմը։ Դա կապիտալիզմի զարգացումից նըմանապես տուժող քաղքենիության ու գյուղացիության սոցիալիզմն ե։ Նրա ներկայացուցիչները յերբեմն բանվոր դասակարգին մեծ ցավակցություն են ցույց տալիս, վառ գծերով նկարվում են նրա տանջանքները և մերկացնում բուրժուազիայի անշափ ագահությունը։ Բայց բուրժուազիայի անշափ ագահությունը կործանումը նրանք չեն արդի հասարակության կործանումը նրանք չեն

կամենում։ Նրանք ուզում են միայն ուղղել, ավելի ընդունելի դարձնել այն։ Նրանց իդեալն են՝ մանր արհեստանոցում աշխատող ունեվոր արհեստավորն ու իր հողաբաժնի վրա աշխատող հարուստ գյուղացին։ Իրենց այս նպատակի համաձայն, նրանք կկամենային և բանվորին նորից գյուղացի կամ արհեստավոր դարձնել։ Բայց վորովինետեղ այդ անհնար եր, ապա նրանց մնում եր միայն լալ տիրող կապիտալիզմի զզվելիության վրա։ Այս ուսմունքի ամենատաղանդավոր ու ազնիվ ներկայացուցիչների թվին եր պատկանում ֆրանսիացի գիտնական Սիսմոնիին։ Յերբ մեզ մոտ, Ռուսաստանում, սկսեց զարգանալ կապիտալիզմը, մեր գրականության մեջ ել երեվան յեկան գրողներ, վորոնք, Սիսմոնիու նըման, յերազում եյին վերադառնալ նախկին «Ժողովրդական արտադրության», յերբ վոչ կապիտալիստներ կային, և վոչ ել պրոլետարներ։

Մինչեվ հիմա ել գեռ հանդիպում են Մա-
նիքեստի նկարագրած ու եակ ցի ո՞ն սոցիալիզ-
մի ներկայացուցիչները։ Ճշմարիտ ե, փեռդա-
լական սոցիալիթիզմի ներկայացուցիչները
այժմս նույնպես հազվագյուտ են, ինչպես և վայ-
րի ցուլերը, սակայն դրա փոխարենքը իստոն եա-
կան կամ տեր տեր ական սոցիալիթիզ-
մի ներկայացուցիչները գեռ շատ ու շատ են։
Ինչքան ավելի ուժեղ ե աճում պրոլետարական
շարժումը, այնքան ավելի ե բազմանում այդ կեղ-
ծավոր սոցիալիստների թիվը։ Ինչքան ավելի յեն

կշտանում բանվորները կրոնից, այնքան ավելի
յեն այն համեմում սոցիալիզմով։ Բայց յեթե
քահանային խսիր հագած ել կճանաչես, ապա, չնա-
յած սոցիալիզմի դրոշմին, այդ տղմի մեջ ավելի
հեշտ կերպով կարելի յե ճանաչել այն հին
արբեցնող դեղը, վոր պրոլետարին պետք է ստիպի
մոռանալ բուրժուական հասարակության բոլոր
ստորոտիններն ու ապականությունները։

Բոլորովին անհետացել ե ռեակցիոն սոցիա-
լիզմի այն այլատեսակը, վորին Մանիքեստը
բավական մեծ տեղ ե տալիս. Դա գերմա-
նական կամ «Ճշարիտ» սոցիալիզմն» ե:

«Ճշմարիտ սոցիալիզմին» այդքան մեծ սշանակություն տալու և մանրամասն քննադատելու պատճառն այն եր, վոր Մանիկեստի յերկու հեղինակներն ել գերմանացի եյխն, Յեթե պրոլետարիատը պիտի առաջին հերթին իր սեփական բուրժուազիայի հախիցը գա, ապա նրա ներկայացուցիչները պարտավոր են ամենից առաջ վճռականորեն քննել և դատապարտել այն բոլոր սոցիալիստներին, վորոնք արգելք են հանդիսանում պրոլետարիատի պայքարին. Սրանով ե բացատրվում այն կրքոտությունը, վոր ցույց են աալիս Մանիկեստի հեղինակները՝ «Ճշմարիտ սոցիալիստներին» խարազանելիս:

Այս պահուն գերմանական սովորական համակրում եյին պլողետարիատին և մի շարք գրքերում ու հոդվածների մեջ նկարագրում եյին նրա թշվառ վիճակը։ Նրանք դատապարտում եյին

բուրժուական հասարակությունը, բայց իրենց դատողություններում թույլ եյին տալիս մի այնպիսի սխալ, վոր նրանց հարազատ եր դարձնում ամենակատաղի յետադիմականներին:

Նրանք մոտավորապես հետեւվյալ կերպ եյին դատում: Արեվմտքում, — իսկ նրանց համար արեվմուտք եյին Ֆրանսիան ու Անգլիան, — չնայած պարլամենտին ու քաղաքական ազատության, պրոլետարիատը դարձյալ տուժում եւ տանջվում կապիտալիզմից: Թշվառությունն այնտեղ պակաս տարածված չէ, քան արեվելյան յերկրներում: Արժե՞ արդյոք քաղաքական ազատություն ձեռք բերելու համար ուժ վատնել, յերբ նրա հետեվանքները այնքան չնշին են: Յեվ գերմանական սոցիալիստները պատասխանում եյին, վոր իրենց համար քաղաքական ազատության լինել չինելը ավելի քան միյեմսույն բանն եւ: Քաղաքական ազատությունը, ինչպես նրանցից մեկը արտահայտվեց, ուղղակի զզվելի յեւ: Իսկ մեկ ուրիշը, վորին Մանիփեստը այդ սոցիալիզմի գլխավոր ներկայացուցիչն եւ համարում, — Կարլ Գրյունը գրում եւ: —

«Ո՞վ եւ Պրուսիայում կոնստիտուցիա (քաղաքական ազատ հաստատություններ)՝ պահանջում: Լիբերալները: Ո՞վքեր են այդ լիբերալները: Աղաներ իրենց տներում և մի քանի գրողներ, վորոնք կամ իրենք ել տնատերեր են, կամ իրենց մտքերով այդ հարգելի տնատերերի և գործարանատերերի ցանկություններից

հեռու չեն գնում: Այդ մի բուռը սեփականատերերն իրենց գրող թիկնապահների հետ միասին արդյոք ժողովուրդ են ներկայացնում: Վո՞չ: Ժողովուրդը կամենում եւ արդյոք կոնստիտուցիա: Վո՞չ: Նույնիսկ յերազում... Յեթե Սիլեզյան ջուլհակները գիտակից լինելին, նրանք պետք եւ վոր բողոքելին կոնստիտուցիայի դեմ: Բայց դրա համար պրոլետարիատը չունի վոչ անհրաժեշտ գիտակցություն և վոչ ել իրավունք. այս պատճառով ել մենք գործում ենք նրա անունից: Մենք բողոքում ենք!»:

Հասկանալի յեւ, որ նման ճառերը կոմունիստների մեջ ջերմ զայրույթ պիտի առաջացնելին: Զե վոր այդ տողերը գրվում եյին այն ժամանակ, յերբ Սիլեզյան ջուլհակները դեռ եյին ծանոթացել պրուսական միտպետության բոլոր «բարիքների» հետ, յերբ թագավորի հումանով գորք ուղղեցին նրանց վրա և շատերին գնդակահարեցին միայն այն պատճառով, վոր նրանք բողոքում եյին ֆարբիկանտների տմարդ շահագործման դեմ:

«Ճշմարիտ սոցիալիստները» չեյին հասկանում, վոր քաղաքական ազատությունը պետք եւ պրոլետարիատին՝ կազմակերպվելու, իբ ուժերը հավաքելու համար: Նրանց գրվածներն ու ճառերը հաճույք կարող եյին պատճառել միայն չարագույն յետադիմականներին, վորոնք լսել չանգամ չեյին ուղում քաղաքական վոր և եւ աղանգամ չեյին ուղում քաղաքական վոր և եւ աղատության մասին:

Գերմանիայում «Ճշմարիտ սոցիալիստները» անհետ կորան. Բայց անցյալ դարի 70—80-ական թվականներին մեզ մոտ, Ռուսաստանում, յերեվան յեկան նրանց շատ նման, ն ա ր ո դ ն ի կ ~ ս ո ց ի ա լ ի ս տ ն ե ր ը: Սրանց չպիտի շը-փոթել հ ե ղ ա փ ո խ ա կ ա ն - ն ա ը ո դ ն ի կ ն ե-ր ի հետ, վորոնց մի մասը կոնստիտուցիայի համար մղվող պայքարը բացասում եր, վո-րովհետեւ կամենում եր մի անգամից իրա-գործել սոցիալիզմը, իսկ մյուս մասը, ինչպես նարուվողցիք, յերազում եր տեռորի մի-ջոցով գրավել քաղաքական իշխանությունը և ապա իրագործել սոցիալիզմը: Զնայած իրենց բոլոր սխալներին, դրանք իսկական հեղափոխականներ եյին, վորոնք բավական զգալի հարված-ներ հասցըին միավետությանը:


Մենք խոսում ենք այն գրողների մասին, վորոնք կրկնում եյին, իրենք ել այդ չիմանալով, յերբեմն բառ առ բառ այն նզովքը, վոր շռայլում եյին կապիտալիզմի ու բուրժուազիայի հաս-ցեյին. գերմանական «Ճշմարիտ սոցիալիստնե-րը», հոխորտում եյին կոնստիտուցիայի դեմ և գործնականում՝ ցարական միավետության սպա-սափո՞րների դերն եյին խաղում:

Այժմ անցնում ենք յերկրորդ մասին—բ ու ը-ժուական կամ պահպանողական սոցիա-լիզմին: Այդ սոցիալիզմի ներկայացուցիչնե-րը կողմնակից են արդի բուրժուական հասա-րակության և նրանք վախենում են, վոր

կապիտալիզմի հետ անխուսափելիորեն կապված չարիքները կարող են կործանել այդ հասարա-կությունը: Նրանք կցանկանային վերացնել այդ չարիքները՝ ներկա հասարակությունը պահպանե-լու համար: Այսնպատակով նրանցից վոմանք առա-ջարկում են ֆիլանտրոպ պիտի ան ~ բարե-գործական միջոցներ, վորոնցով կարելի կլի-նի հանգստացնել բանվորներին և հաշտեցնել նրանց արդի հասարակության հետ, իսկ ուրիշ-ները առաջարկում են ամեն տեսակի ո ե ֆ ո ր մ-ն ե ր, բարենորոգություններ, վոր պետք ե ուղ-ղեն բուրժուական հասարակության մի քանի թերությունները և այսպիսով ամրացնեն, ավելի կայուն գարձնեն այն: «Էավ կերակրած աշխա-տավոր անասունի իդեալը—դա բռնապետների և ավելի մարդասեր բուրժուաների իդեալն ե,— իդեալը այն բուրժուաների, վորոնք անկեղծ կեր-պով կուզենային բանվորին նյութական բավա-րարություն տալ, չփշըելով ստիլայն նրանց գլխին կախված կոտղիտալի շղթաները»:

Մանիքիետը բուրժուական սոցիալիստների շարքին ե զատում նայեվ Պ ր ո ւ դ ո ն ի ն, չնա-յած վոր նա պատկանում եր կապիտալիզմը կա-տաղի խարազանողների թվին: Բայց Պ ր ո ւ զ ո ն ը միյեվնույն ատեն և կոմունիստների հակա-ռակորդն եր, վորոնց նա հայնոյում եր փողո-ցային բառերով: Խոշոր արդյունագործության դեմ զուրս գալով, հա հայնոյում եր և բուրժուա-րեմ զուրս գալով, հա հայնոյում եր և բուրժուա-րեմ, բայց միյեվնույն ժամանակ լսել անդամ ներին, բայց միյեվնույն ժամանակ լսել անդամ

չեր ուզում մասնավոր սեփականության վոչնչացման մասին։ Նա չեր հասկանում, վոր յեթե պաշտպանում եւ մանր սեփականությունը, կնշանակի, վոր միաժամանակ ճանաչում եւ և խոշոր, կապիտալիստական մասնավոր սեփականությունը։



Թոմաս Մոր

Նա ուզում եր, վոր բուրժուական հասարակությունը գոյություն ունենա, բայց պրոլետարիատ չծնի, վոր ապրանքային տնտեսությունը ծաղկի ու զարգանա, բայց ճնշաժամեր և գների անկում տեղի չունենա։ Անա թե ինչունքա իդեալը՝ զտված

բուրժուական հասարակությունն ե, իսկ նրա սոցիալիզմը՝ բուրժուական սոցիալիզմ։ Նա կամենում եր պահպան ել բուրժուական հասարակության հիմքերը, այս պատճառով նրա սոցիալիզմն ել պահպանողական ե։ Միանգամայն այլ ե Մանիքեստի վերաբերմունքը դեպի կոմունիզմի մյուս ուղղությունները, մասնավորապես դեպի այն հոսանքը, վորնա անվանում ե քննական - ուտոպիսի ական սոցիալիզմ։ Դեռ XVII-րդ դարում, յերբ կապիտալիզմն Անգլիայում նոր եր սկսել զարգանալ, բայց արդեն ցույց եր տվել եր իսկական դեմքը, գտնվեցին մարդիկ, վորոնք հասկանում եյին, վոր թշվառության, թափառաշրջիկության և հանցագործությունների աճումը առաջ ե գալիս վոչ թե աղքատների փչացած ուրույն բնույթից, այլ հասարակական նոր պայմաններից և առաջին հերթին արտադրության միջոցների մասնավոր սեփականությունից։ Թոմաս Մորը իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, 1516թ. գրեց «Վոսկե գրքույկ լավագույն հասարակարգի և Ուտոպիանոր կղզու մասին» աշխատությունը։ Ուտոպիա բառը վերցրած ե հունարենից և նըշանակում ե՝ վոչ մի տեղ չեղած յերկիր։ Մանշանակում ե՝ վոչ մի տեղ չեղած յերկիր։ Մանշանակում նկարագրելով այն բոլոր ավերումները, վոր կապիտալիզմի զարգացումը առաջ ե բերել Անգլիայում, Մորը նկարում է նայել այն յերջանիկ կյանքը վոր գոյություն ունի Ուտոպիսի տեղու վրա, ուր վերացված ե մասնավոր սեփականությունը։

Այդ ժամանակից սկսած այն նկարագրությունները, վոր վերաբերում են իրականության մեջ գոյություն չունեցող յերկրներին, ուր իրք թե տիրում են որինակելի կարգեր, կոչվում են



Գրական Բարյով

ու տոպիան եր: Ուտոպիական խոսքով բնորոշում են ինչ վոր անիրականանալի և կամ չեղած բան, ու տոպիա են անվանում այն յերազող մարդուն, վորն իրեն յերեվակայական, անիրազործելի նպատակներ ե դնում:

Բայց նախ քան ու տոպիական սոցիալիստներին անցնելը, մի քանի խոսք ասենք նայել Բարյովի և նրա նախորդների մասին: Սրանց առթիվ Մանիփեստն ուղղակի ասում ե, վոր իրենց ժամանակի բոլոր հեղափոխությունների մեջնրանք արտահայտում եյին պրոլետարիատի պահանջները:

Մենք արդեն խոսել ենք Թոմաս Մարտին երի մասին, վորը գյուղացիական մեծ պատերազմի ժամանակ դուրս յեկավ մասնավոր սեփականության, վորպես ճշմարիտ քրիստոնեության բոլոր սկզբունքներին հակառակ յերեվոյթի գեմ: Այն քաղաքներում, ուր նա քարոզում եր, սերտ կապեր եր հաստատում պրոլետարական խավերի հետ: Նա իր հետեւորդներից պահանջում եր բարքերի խստություն և հրաժարումն անպետք հաճույքներից: Այդ ասկետիզմը* միանում եր ամենախիստ հավասարություններից հրաժարվելու պահանջի հետ: Յերբ հասարակության տրամադրության տակ գտնված գոյության միջոցները շատ անբավարար են, խիստ և կոպիտ հավասարեցման նման պահանջը միանգամայն համկանալի յե: Մեկի առատությունը նշանակում ե մյուսի աղքատությունը:

* Հին ժամանակներում ասկետ եյին անվանում այն մարդկանց, վորոնք ուժասպառում եյին իրենց մարմինը յնպ խիստ ու ժոժկալ կյանք եյին վարում: Ասկետիզմը այն ուսինանձն ե, մոք պահանջում և այդպիսի կենսածեց:

Այդ նույն գծերը մենք տեսնում ենք և XVII-րդ դարի անդիմական հեղափոխության ժամանակ (1640—1658 թ.): Այդ հեղափոխությանը մասնակցող ճշմարիտ հավասար են ցընողները—(անգլիացին—լեվելերները), հակառակ այն լեվելերներին, վորոնք սահմանափակվում եյին միայն քաղաքական լիակատար հավասարության պահանջով — միաժամանակ պնդում եյին և տնտեսական հավասարության պահանջով այս վրա: Նրանց ղեկավարներ լիլբորնը, Գյուղատնտեսական հողադուրկ բանվորների ներկայացուցիչները պահանջում եյին վոչչացնել հողի մասնավոր սեփականությունը և հավասարեցնել բոլոր բարիքների բաշխումը: Նրանց դիգերներ, կամ վորողներ եյին անվանում, վորովհետեւ նրանք ինքնազլուխ գըավում եյին հողերը, ցանկապատերը քանդում և հողը համայնաբար մշակում:

Ֆրանսիական Մեծ Հեղափոխության ժամանակ ել մենք հանդիպում ենք այնպիսի հեղափոխականների, վորոնք վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական հավասարություն եյին պահանջում: Դրանք—այսպես կոչված կատաղածներն են երեսուց ծայրահեղանանջները վախեցնում եյին նույնիսկ Ռոպեսպիերին: Նրանք պահանջում եյին անինա պայքարել ամեն տեսակ վաշխառուների և չարաշահների դեմ, վորոնք ոգտվում եյին ընդհանուր թշվառությունից և անխղճորեն ուղարկում:

ցընում եյին ապրանքների գները: Նրանք կողմնակից եյին անպայման հավասարության, ուստի պահանջում եյին ունկիզիցիայի յենթարկել—բռնագրավել, պետության սեփականություն դարձնել գոյություն ունեցող ամբողջ հարատությունը: Նրանց ազդեցությունը ավելի ուժեղ եր բանվորական թաղամասերում: Վորպեսպի բուրժուազիայի միջին խավերը չվախենան ու վերջնականապես չխրտնեն հեղափոխությունից, Ռոպեսպիերը ճնշեց նրանց 1794 թվին, բայց զրանով նա միայն արագացրեց հաղթանակը չափավոր տարրերի, վորոնք իրենց հերթին շտապեցին Ռոպեսպիերի ու իր կողմանակիցների հախից գալ և գլխատել նրանց (1794 թ. հուլիս 27-ին, կամ հեղափոխական տարեցույցով հան-ը պատության յերկրորդ տարվա տերմիդորի 9-ին):

Տերմիդորականները ոգտագործեցին իշխանությունը, բանվորներին ել ավելի նեղելու համար: Նրանք գոցեցին բոլոր ակումբները և բուրժուազիայի հակառակորդների համար սահմանափակեցին մամուլի ազատությունը: Այդ պահուն բարյօֆն ու իր ընկերները վճռեցին դավադրություն սարքել՝ բուրժուազիային տապալելու և ընդհանուր հավասարություն հաստատելու համար: Նրանք մի շարք դեկրետներ մշակեցին հոգուտ աշխատավորության և բուրժուազիայի հոգուտ աշխատավորության և բուրժուազիայի հաղթանակի դեպքում հրատարակեմ ուղղված հաղթանակի դեպքում հրատարակելու նկատումով: Նրանց կարծիքով վոճագործ

եր ամեն վոք, ով վոր յուրացըել եր հողի կամ արդյունագործության պտուղներից ոգտվելու մոն ո պոլի ային (բացառիկ) իրավունքը։


Սակայն նրանց շարքերը մտավ մի պրովո-
կատոր, վորի ցուցմունքների չնորհիվ Բաբյոֆն



Հանրի Սեն-Սիմոն

ու նրա ընկերները ձերբակալվեցին։ Բաբյոֆին ու Դարտեյին զիսատեցին, իսկ մյուսներին աք-
սորեցին։ Դրանց թվում եր և Բուռնա-
րոտին։ Շատ տարիներ անց նա վերադարձավ
Ֆրանսիա, ուր հեղափոխականների շրջանում

քարողում եր «հավասարների ուսմունքը»։ Նա
մեծ ազգեցություն ուներ Ոգյուռա Բլան-
կի ի վրա, վորն իր հեղափոխական դործունեու-
թյան մեջ հետեւում եր Բաբյոֆի և նրա ըն-
կերների (բարու վիստների) պատվիրաննե-



Շառլ Փուլյա

րին։ Բլանկիի անունով, բլանկիստ են կո-
չում այն կոմունիստներին, վորոնք հույս ու-
նելին մի բուռը, վճռական հեղափոխականների
սարքած հաջող գավաղըությամբ քաղաքական
իշխանություն նվաճել և մի շարք դեկրե-

Ների միջոցով կոմունիզմն իրականացնել։ Թեյեկ բլանկիստներին հաջողվեց իրենց կողմը գրավել վորոշ բանվորների, այնուամենայնիվ նրանք վոչ մի կարեվորություն չեյին տալիս պըրոլետարիատի քաղաքական կազմակերպությանը, և այդ նպատակով աշխատելը նրանց կարծիքով առայժմ ի զուր ուժ վատնել եր նշանակում։

Պրոլետարիատի դասակարգային կազմակերպության, հատուկ դասակարգային կուսակցություն ստեղծելու դեմ եյին և այսպես կոչված մեծ ու տոպիստները։ Այդպես են անվանում սովարաբար Սեն-Սիմոնին Ֆուրյեյին և Ռվենին, վորոնց մասին խոսում ե Մանիփեսուր։


Նրանք յերեքն ել հավասարապես իրենց կյանքը նվիրեցին մի գործի՝ բանվոր դասակարգի շահերի պաշտպանության։ Պատրաստ լինելով ամեն ինչ անել ժողովրդի, բանվոր դասակարգի համար, ջերմ համակրելով ճնշված դասակարգերի տանջանքներին, նրանք միյեվնույն ժամանակ չեյին հավատում նրանց ուժեին և ընդունակություններին։ Նրանք ամենեվին յույս չեյին տածում դեպի բանվորության սեփական ուժերը։ Նրանց աշքում բանվորությունը տանջված ու անողնական դասակարգ եր, վորին պիտի ոգնել, վորի մասին պիտի հոգալ։ Նրանք ապագա հասարակության համար ու տոպիստներն էին հատուկ ծրագիր եյին հնարում և ապացուցում եյին բոլորին, բոլորին ու բոլորին, թե բավական ե միայն ըն-

գունել իրենց ծրագիրը, վորպեսզի արդի հասարակությունը միանգամից վերածվի արցունքի հովտից՝ յերկրային դրախտի։ Կարիքի մեջ՝ նրանք միայն կարիք եյին տեսնում։ Նրանք չեյին գիտակցում, վոր կապիտալիզմի որոք ունեցած պրոլետարիատի գոյության պայմանները մղում են նրան դեպի դասակարգային կազմակերպության ուղին։ Նրանք չեյին հասկանում, վոր դասակարգային ինքնազիտակցության զարգացմանը զուգընթաց—պրոլետարիատը գնալով ավելի ու ավելի վիթխարի հեղափոխական ույժ ե դառնում։ Մեծ ուտոպիսաները ամբողջ հոգով խղճում եյին բանվոր դասակարգին և այս պատճառով ել գիմում եյին աշխարհիս ուժեղներին՝ շարժելու նրանց գութը «ամենաբազմաթիվ և ամենից շարչարգող դասակարգի» տանջանքների վառ պատկերներով։ Սակայն նրանց կոչերն անպատասխան եյին մնում։ Մի քանի բարյացակամներից ստացվող միջոցները հաղիվ եյին բավականանում որինակելի սոցիալիստական դադութակներուն համար, վորը սովորաբար շատ շուտով քայլայվում եր։

Մեծ ուտոպիսաներից ավելի գործնականը Ովենն եր։ Նա հարուստ մարդ եր և իր ամբողջ ունեցվածքը դրեց սոցիալական փորձերի վրա, բայց նա միաժամանակ հոգուտ բանվոր դասակարգի պաշտպանում եր մի շարք միջոցներ, վորոնք հետաքայում ել բավական ոդտակար դուրս յեկան։ Վյազել որինակ Ովենը ջերմ կողմնակից եր բանվական որինակ Ովենը ջերմ կողմնակից եր բան-

վորական որենսդրության և շատ բան արեց
բանվորների մտավոր զարգացման համար:

Այդ յերեքի, մասնավորապես Ֆուրյեի և
Ռվենի ույժը գլխավորապես այն եր, վոր նրանք
տվին բուրժուական հասարակության փայլուն



Ռոբերտ Ռվեն

քննադատությունը և հիմնավորապես զբսեվորեցին նրա թերությունները: Ահա այս պատճառով նրանք մեծ ոգուտ բերին բանվոր դասակարգին, վորը նրանց գրգածներում հարուստ նյութ եր գտնում՝ տիրող կուսակցությունները դիմագուրկ

անելու համար: Թեյեվ նրանց առաջարկած միջոցները վերին աստիճանի անգործնական եյին, այնուամենայնիվ նրանց առաջարկություններից մի քանիսը տեղ գտան կոմունիստական կուսակցության ծրագրի մեջ: Ահա թե ինչու ենգելու միանգամայն ձիշտ կերպով մի այլ տեղ նկատում ե, վոր գիտական կոմունիզմը կանգնած ե Սեն-Սիմոնի, Ֆուրյեի և Ռվենի ուսերին, մարդկանց, վորոնք չնայած իրենց ուսմունքի ամբողջ ֆանտաստիկության և ուսուպիզմին, պատկանում են բոլոր ժամանակների ամենանշանավոր մտածողների թվին և հանճարեղորեն նախատեսել ու կանխակալել են շատ բաներ, վորոնց ճշտությունը մենք ներկայումս ապացուցում ինք գիտականորեն:

Դեռք ե ավելացնել, վոր մեծ ուսուպիստները իրենց ծրագրներով հանդես յեկան այն պահուն, յերբ դեռ պրոլետարիատը նոր եր սկսել իր պայքարը կապիտալիստների դեմ և դեռ նա հեղափոխական ույժ չեր ներկայանում:

«Քանի դեռյեվս պրոլետարիատն այնքան զարգացած չե, վոր ուրույն դասակարգ կազմի, քանի հետեւվաբար պրոլետարիատի պայքարը քաղաքական բնույթ չունի և քանի դեռ բուժուազիայի ծոցում արտադրական ույժերը այնքան չեն զարգացել, վոր հսարավորություն տան՝ պրոլետարիատի ազատագրման և նոր հասարակություն կազմելու համար անհրաժեշտ նյութական պայմաններ գտնելու, —մինչ այդ պրոլե-

տարիատի աեսաբանները միշտ հանդես են գալիս վորպես ուստոպիստներ, վորոնք սիստեմներ են հնարում ճնշված դասակարգի կարիքներին ոգնելու համար և աշխատում են բարենորդող վոր և ե գիտություն գտնել. Սակայն վորչափ պատմությունն ե առաջ ընթանում, և զրա հեա պրոլետարիատի պայքարն ավելի յե պարզորոց զրաեվորվում— նրանց համար ավելորդ և դասնում այդ գիտության վորոնումը սեփական զլխում։ Նրանց անհրաժեշտ և միայն հաշիվ տալ իրենց այն մասին, ինչ վոր կատարվում ե իրենց աչքի առջեվ և դառնալ իրական դեպքերի արտահայտիչը»։


Բայց, չնայած պայմանները փոխվել եյին, մեծ ուստոպիստների աշակերտները համառորեն փակում եյին իրենց աչքերը իրականության հանդեպ։ Ովենի հետեւորդները դուրս եյին գալիս չարտիստների դեմ և ապացուցում եյին, վոր քաղաքական պայքարը միայն խանգարում ե տնտեսական աղատագրմանը և համառորեն մնում եյին այդ կարծիքին, չնայած չարտիստները բացատրում եյին նրանց, վոր իրենց համար քաղաքական աղատագրումը միայն մի միջոց ե՝ տնտեսական աղատագրման համար։

Միյելնույն յերեվույթը տեսնում ենք և Ֆրանսիայում, ուր ֆուրյերիստները լսել անգամ չեյին կամենում քաղաքական պայքարի մասին։ Յերբ 1848 թ. հեղափոխությունից առաջ գրված եր ընտրական իրավունքի ո ե ֆորմի հարցը, վորովհետեւ այն ժամանակ ֆրան-



Ֆրանսիա Քաղանակարը


սիայում այդ իրավունքից ոգտվում եր միայն հարուստ բուրժուազիան, նրանք շարունակում եյին պայքարել ու փորձի ստն երի դեմ, ինչպես անվանում եյին այդ պահուն ընտրական իրավունքի վերանորոգության կողմանկիցներին,



Ետիեն Կավեկ

և բառբառել խաղաղ դեմոկրատիայի մասին, վոր ինքն ըստինքյան կիրագործվի, յերբ տիրող դասակարգերը գիտակցեն նրա անհրաժեշտությունը:

Իսկ մեծ ուսուցիչների այս փոքրիկ աշակերտների կողքին դուրս եր գալիս նայեվ, բանվոր-



Մարտ Փարիզի փողցներում 1848 թ. փետրվարին

ների շրջանում շատ ժողովրդական՝ հայր կ ա բ են,
վորը հնարել եր ա ի կ ա ը ի ա ւ (յերջանիկ յեր-
կիր) անունով իր կոմունիստական ուստոպիան:
Հեղափոխությունը բռնկելուց ընդամենը մի քա-
նի ամիս առաջ, նա դեռ աշխատում եր համո-
զել բանվորներին՝ թողնել քաղաքական պայքա-
րը և իր հետ Ամերիկա գնալ, վորպեսզի այս-
տեղ, բուրժուական ամպամած աշխարհից ան-
դին, ավետյաց յերկրում գտնեն նոր Յերուսա-
ղեմ: Այս փորձն անհաջողությամբ վերջացավ:
Դեռ նոր ուխտավորները ճամբա չեին ընկել,
յերբ Յվրոպայում պայթեց փետրվարյան հե-
ղափոխությունը:

ԳԼԽԻ ԶՈՐՈՐԴ

Նախորդ գլխում պարզված եր կոմունիստ-
ների դիրքը այն հոսանքների հանդեպ, վորոնք
առյերեվույթ, կամ իսկապես պայքարում եյին
բուրժուազիայի դեմ: Բայց կոմունիստները աշ-
խատում են տարբեր յերկրների մեջ, վորոնցից
մի քանիսում այն ժամանակ քաղաքական կար-
գերը այնքան հետամնաց եյին, վոր նրանց դեմ
վոչ միայն կոմունիստներն եյին պայքարում, այլ-
յեվ բուրժուազիայի վորոշ խավերը, ուստի ան-
հրաժեշտ եր Մանիֆեստում մատնանշել, թե ինչ
վերաբերմունք պիտի զույց տան կոմունիստները
նման կուսակցությունների նկատմամբ և ինչ-
պիսի տաք տիք գործելակերպ պիտի վարեն
նրանք այլյեվայլ յերկրներում:

Անգլիայում դեռ այն պահուն գոյություն
ուներ բանվորական խոշոր քաղաքական կուսակ-
ցություն՝ չարտիստների կուսակցությունը: Պարզ
է, վոր կոմունիստներն իրենց բոլոր ուժերով
պիտի ոգնեյին չարտիստներին՝ բուրժուական
կուսակցությունների դեմ մղած պայքարում, աշ-
խատելով միայն չարտիստների մեջ տարածել
կոմունիզմի հիմնական սկզբունքները:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգ-
ների մեջ, ուր այն ժամանակ ստրկատիրու-

թյուը դեռ վերացված չեր, և չկար վերջնականապես ձեվակերպված բանվորական դասակարգ, առանձին կազմակերպություններ գոյություն ունեյին մի քանի նահանգներում միայն։ Նրանցից ամենառաղիկալը՝ արմատականը ա գ ը ա ր ա յ ի ն ո ե ֆ ո ր մ ի ս տ ն ե ր ի - հողային բարենորոգիչների ասոցիացիան եր, վոր պահանջում եր հողը աղգային սեփականություն դարձընել։

Հակառակ ուտոպիստներին, վորոնք ամենեվին չեյին հետաքրքրվում քաղաքական պայքարով, կոմունիստները միջամտում եյին ամեն տեսակ շարժման, յեթե միայն նա վոր և ե կերպ շոշափում եր բանվոր դասակարգի շահերը։ Բայց նրանք միյելինույն ժամանակ բանվորական զանազան կազմակերպություններից, — ինչպես որինակ պրոֆեսիոնալ միություններից, կոոպերացիաներից, — տարբերվում եյին նրանով, վոր պաշտպանում եյին բանվոր դասակարգի վոչ միայն այժմյան շահերը, կամ առանձին շերտերի, իսկ մ բ ե ր ի շահերը, վորքան ել այդ խըմբերը խոշոր լինեյին, այլ հոգում եյին նայեվ, այն մասին, վորպեսզի անմիջական շահերի յետեւ ընկնելը չվասի պրոլետարական շարժման ապագային, և բանվոր դասակարգը, բուրժուական հասարակությունը ժառանգելու իր իրավունքը չծավալի այնպիսի անմիջական շահերի յետեւ ընկնելը ծծավալի անդրանկության իրավունքը մի աման վոսպե ապագե ապագուով։

Ֆրանսիայում, այն ժամանակ, բացի արմատական բուրժուազիայից - ո ա դ ի կ ա լ ն ե - ր ի ց, վորոնք չնայած և ընտրական իրավունքի ընդլայնում եյին պահանջում, սակայն կոմունիստներին հալածում եյին վոչ պակաս, քան պահպանողական բուրժուազիան՝ Գիզոյի գլխավորությամբ, գոյություն ուներ սոցիալիստ-դեմոկրատական, կամ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։ Այդ կուսակցության ծրագիրը պարունակում եր մի շարք պահանջներ, վոր առաջադրում եյին և կոմունիստները, սակայն մինչդեռ կոմունիստները շատ լավ գիտեյին, թե դրանք միայն կոմունիզմին անցնելու միջոցներ են, ֆրանսիական սոցիալ-դեմոկրատները համարում եյին, վոր այդ միջոցները միանդամայն բավական են՝ բուրժուական հասարակության չարիքները վերացնելու համար։ Ֆրանսիական սոցիալ-դեմոկրատների շարքերում գտնվում եյին վոչ միայն մանր բուրժուազիայի զանազան խավերին պատկանող մարդիկ, այլ նայեվ այնպիսի սլուլետարներ, վորոնց համար դեռ յեկա պարզ չեյին իրենց դասակարգի ազատագրման պայմանները։ Նրանք մի կողմից մանր բուրժուազիայի հետ միասին պահանջում եյին դեմոկրատիա հաստա-

* Մասնիքստում արված թ հնուվյալ նկատողությունը. Փրանսիական սոցիալ-դեմոկրատներն այնպես հեռու յեն ժամանակակից գերհանական սոց-դեմոկրատներից, ինչպես յերկրնքը յերկրությունը. Այս միտքը ծշտու եր ՑՕ տալի առաջ, յերր ննգելուն արեց այս նկատողությունը. Արդի սոց-դեմոկրատիան թեովիայում ընդունում է Մասնիքստի հիմնական դրույթուններ, բայց գործնականում այն ժամանակա սոց-դեմոկրատներից հեռու չի գնում.

տել, իսկ մյուս կողմից տարվում եյին սոց-գե-
մոկրատիայի ամենաականավոր տեսաբաններից
մեկի, Լյուի Բլանի առաջարկած նախագծով։
Լյուի Բլանը պատկանում եր բուրժուական սո-
ցիալիստների շարքին և դատապարտում եր ան-
զուսպ մրցումը, վոր այնքան ուժեղ ազդում եր
մանր բուրժուազիայի և արհեստավորների վրա։
Իրեկ գլխավոր մեջոց այս չարիքի դեմնա առա-
ջարկում եր պետական վարկի ոգնությամբ բան-
վորների արդյունագործական սիություններ կազ-
մակերպել։ Այդ կուսակցության գլխավոր քաղա-
քական ղեկավարը՝ «Ռեֆորմ» թերթի խմբագիր
Լեգըյուն-Ռոլենն եր։ Հակառակ արմատա-
կաններին, այս թերթը բարյացակամ վերաբեր-
մունք եր ցույց տալիս զուտ բանվորական կու-
սակցություններին, վորպես իր դաշնակիցներին և
հաճախ նույնիսկ իր եջերը տրամադրում եր կո-
մունիստներին։

Զվիցերիայում այդ պահուն համառ պայքար
եր մղվում կաթոլիկ և բողոքական կանտոնների
միջեւ, կաթոլիկ կանտոններում տիրապետում
եյին թունդ պահպանողականները, վորոնց աջակ-
ցում եր Մետերնիսը, իսկ բողոքական կան-
տոնների մեջ՝ լիբերալ բուրժուատուան երը,
վորոնք սակայն վոչնչով յետ չեյին մնում իրենց
հակառակորդներից, յերբ հարց եր հարուցվում
կոմունիստների դեմ պայքարելու մասին։ Բայց,
մանավանդ ֆրանսիական Զվիցերիայում, Ժնե-
վի և Վաադի (գլխավոր քաղաքը Լոգանն ե)

կանտոններում, կային և ավելի առաջադեմ
բուրժուական կուսակցություններ, ֆրանսիա-
կան սոցիալ դեմոկրատների նման, վորոնք այն
ժամանակ դեռ քաղաքավարի վերաբերմունք
եյին ցուց տալիս բանվորներին և կոմունիստնե-
րին։ Ահա այս պատճառով Մանիֆեստը խոր-
հուրդ ե տալիս ոժանդակելու նրանց՝ պահպանո-
ղական բուրժուազիայի դեմ մղած պայքարում։

Լեհաստանում, վոր այն ժամանակ բաժան-
ված եր Ռուսաստանի, Ավստրիայի և Պուլսիայի
միջեւ, բանվորական շարժում գոյություն չու-
ներ։ Բոլոր ուժերը այստեղ կլանել եր ազգային
աղատագրումը։ Բայց այն ժամանակ, յերբ լե-
հական ապստամբների մի մասը համառորեն
պաշտպանում եր հին շլախտային ու ճորտատի-
րական արտօնությունները, մյուս՝ դեմոկրատա-
կան մասը, ընդհակառակը, պահանջում եր գյու-
ղացիներին և գյուղացիական հողատիրությանը
աղատել ֆեոդալական լծից, այսինքն՝ կողմնա-
կից եր ագրարային հեղափոխու-
թյան։ Այս կուսակցությունը, վորին կոմու-
նիստները պիտի աջակցեյին, կոչվում եր «լե-
հական դեմոկրատական ընկերություն»։ Նա
կազմակերպեց 1846թ. ավստրիական Լեհաստա-
նի ապստամբությունը, վոր հայտնի յե «կրա-
կովյան ապստամբություն» անունով։ Այդ ապըս-
տամբությունն անհաջող անցավ, վորովհետեւ
Մետերնիսին հաջողվեց տգետ գյուղացիներին
քշել ապստամբների ու կալվածատերերի վրա,

վորոնցից շատերը գազանաբար սրի քաշվեցին։
Դրությունը ավելի բարդ եր Գերմանիայում,
ուր բուրժուազիան դեռ քաղաքական իշխանության չեր հասել և, թեպետ մի քիչ անհամարձակ, դուրս եր գալիս ազնվականության ու բացարձակ միապետության դեմ։

Հակառակ «ճշմարիտ սոցիալիստներին», վորոնք քաղաքական պայքարի մասին լսել անգամ չեյին ուզում, և հակառակ արմատականներին, վորոնք առաջնակարգ նշանակություն եյին տալիս մի այն քաղաքական պայքարին և ֆրանսիական սոց.-զեմոկրատների նման մի քանի պահանջներ եյին դնում հոգուտ բանվոր դասակարգի, կոմունիստները Գերմանիայում պիտի աշխատեյին ձեռք բերել քաղաքական ամենալայն ազատություն, վորպես զի պատրաստեն պրոլետարիատին հաղթական բուրժուազիայի դեմ։

Ահա թե ինչու նրանց գործելակերպը Գերմանիայում շատ ավելի բարդ եր։ Պետք եր մի կողմից պայքարել բուրժուազիայի հետ՝ միատեղ, քանի վերջինս հեղափոխականության դեմու մաքառում եր ազնվականության դեմու միյենսույն ժամանակ անհրաժեշտ եր զարգացնել բանվորների մտքում՝ իրենց և բուրժուազիայի շահերի թշնամական ներկության գիտակցությունը։ Հարկավոր եր քննադատել այդ բուրժուազիայի բոլոր սխաները և մղել նրան առաջ՝ թեկուզ

վախ ունենալով, վոր նա դրանից դրդված կարող ե դաշն կնքել ազնվականության հետ՝ ընդդեմ պրոլետարիատի։

Մարքսն ու Ենգելը այդ ժամանակ հույս ունեյին, վոր Գերմանիայում բուրժուական հեղափոխությունը ավելի բարենպաստ պայմաններում կկատարվի, քանի Ցրանսիայում և Անգլիայում, և վոր փոխանցման շրջանը բուրժուական ու պրոլետարական հեղափոխությունների միջեվ ավելի կարճատելվ կլինի։ Սակայն գերմանական հեղափոխության վորձը ցույց տվեց, վոր ին չքան ավելի վճռական դիրք ե բռնում պրոլետարիատը, բուրժուազիան այնքան ավելի յետրամադրվում դաշն կապել ազնվականության հետ։ Այս միտքը հաստատվեց և ոռւսական հեղափոխության վորձով։

Մանիքեատը վերջանում ե ընդհանրապես հեղափոխության ժամանակաշրջանում կոմունիստների բռնելիք գլխավոր վարքագծի՝ տաքարիքի մատնանշումով։

Մինչդեռ բուրժուական կուսակցությունները, վորոնք հեղափոխության վրա նայում են վորպես անխուսափելի չարիքի և, իրենց նպատակին համնելուց հետո, բոլոր ուժերով աշխատում են այն կանգնեցնել, կոմունիստներն ընդհակառակը, ամենուրեք «բորբոքում» են և պաշտպանում ամեն մի հեղափոխական շարժում, վոր ուղղված ե բուրժուական հասարակական և քաղաքական հարաբերությունների

դեմ: Բոլոր ուժերով անհրաժեշտ ե խախտել բուրժուական հասարակության հիմքերը և ընդգծել, վոր գլխավոր չարիքը արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն եւ: Հետեվաբար, հակառակ բոլոր այլ կուսակցություններին, հակառակ նույնիսկ ամենադեմոկրատներին անգամ, անհրաժեշտ ե բարձրացնել ամբողջ շարժման հիմնական հարցը—սեփականության հարցը:

Չբաժանելով դեմոկրատական կուսակցությունների պատրանքները, կոմունիստները, վոր առաջին հերթին բանվոր դասակարգի շահերն են պաշտպանում, ձգտում են բոլոր ճնշվածների միասնական ձակատ ստեղծել կեղեգիչների դեմ մղած պայքարում:

Միայն թե կոմունիստները շատ լավ գիտեն, վոր այս պայքարը՝ կյանքի ու մահը պայքար ե, վոր յերբ խոսքը վերաբերվում ե ամբողջ հասարակության լիակատար վերակազման, ապա հեղափոխական գիտության վերջին խոսքը կլինի պատերազմ կամ մահ, արյունալի պայքար, կամ վոչնչացում:

Այդպես ե հարցի անժխտելի դրությունը:

Յուրաքանչյուր յերկը պրոլետարիատը պետք է առաջին հերթին վերջ դնի իր բուրժուազիային, բայց վորքան ավելի մեծ թվով յերկըներ կընդգրկի պրոլետարական հեղափոխությունը, այնքան ավելի ամուր կլինի պրոլետարիատի հաղ-

թանակը: Նրա վերջնական հաջողության պայմանն ե—ամբողջ աշխարհի, բոլոր յերկըների միությունը:

Դ. ՌՅԱԶԱՆՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿԱՑՈՒԹ-ՑՈՒՆ

ԳիՏՈՒԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍՊԵЦИԱԼԻՍՏՈՒՄ ԱՎԱՐԱ
անվան տակ Հ. Ս. Խ. Հ. Գիտության Մուսկվայի բաժանմունքը նա-
խածեղունել և մարդաբանական գրականության յերկու սերիայի հրա-
տարակության:

ԱՌԱՋԻՆ—ՀԱՐԱՄԱՏՁՆԻ ՍԵՐՈՎԱԹԻ մեջ կը տնես ուժգութառակազմ
միջազգային գրականության լավագույն գործեր՝ Նվերված մարդ
սիզմի տեսության հիմնական հարցերին յեկ համեմարհապէն հե-
ռափրկական շաքումների պատությանը:

ղափոխական շարժումների մասին պատճեն է հա-
սերկություն գումարություն և պատճեն է հա-
սերկություն գումարություն և պատճեն է հա-

S U R V E Y

ԵԿԱԿԻՆ - ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԱՏՐԱՍԴՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ — Ընտիր աշխատություններ Հատոր Ա.
Գ. ՌԵՍՈՒՋԱՆՈՎ Կ. Մարքս և Փ. Ֆենցիլ
ԿԱՐԼ ՄԱՐՔՍ — Ժողովածու
ԶՈՒ ՌԻԴ Տաս որ, Վոր գնցեցին աշխարհ

ՄԱՆՈԹ.— Լ. Սրբապանի Թարգմանությունը ստացված և «Մոլոք եւ Մանաղը, հրատարակությունից.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե ՅԵՎ ՃՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԻ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Շքեղ հրատարակություն 30—40 նկարով

Հ. Ս. Խ. Վ. ՊԵՏԵՐՍԻ

ԴԼԱՎՀԻՑ 20611

Յ-ՐԴ 8ՊԱՐԱ

ՏԻՐԱԺ 1200

ՀՀ Ազգային գրադարան



NL0181285

